

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆՎՈՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խոմքագրական
խորհուրդ՝

Զազիկ Նարույշելինյան
Արմեն Նարույշելինյան
Ասիե Ստեփանյան
Վորովյան Տովեաննիսյան
Վաղերի Պողոսյան
Ռաֆայել Պատմայան
Մարշան Տամբրյան

Գլուավոր խոմքագիր՝
Գոհար Աշոտինի

Խոմքագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

© ՀՀ Սպասության նախարար

**3(56)
2010**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (827-851)

- * ՍԴՈ-827. ՔԱՂԱՔԱՑԻ Խ. ՍՈՒՔԻԱՅԱՎԱՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՄՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 285 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՍԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՔԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 5
- * ՍԴՈ-828. 2009 թվականի ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՂԿԱՍԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՄՆԵԼՈՒ ԵԽՈՎԱՀՈՐԴՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒԽՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՄՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ ՓՈԽԾՐԾՈՒՄՆԱԿԱՆ ՀՈՒՅԱԳՐՈՒՄՆԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17
- * ՍԴՈ-829. 1999 թվականի ՍԱՅԻՆԻ 28-ԻՆ ՍՊՈՆՏԵԱԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԻԱՎԱԿԱՆԱՑՈՒՄ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 20
- * ՍԴՈ-830. 2009 թվականի ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ՍՊՈՆԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵԽԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՎԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԲԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՍԱԴՐԱՍԻ ՀԻՄՄՆԱԴՐԱՆ ՍԱՏԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 23
- * ՍԴՈ-831. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵԽԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՎԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԲԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՍԱԴՐԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌՎԱՐՄԱՆ ՍՊԱՍԻ ՀԱՍՊԱՏԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 27
- * ՍԴՈ-832. «ՍԱՓԻ» ՓԲԲ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՄՆ ՎՐԱ՝ «ՀԱՐԿԵՐԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՔԻ 15 ՀՈԴՎԱԾԻ «զ» ԿԵՏԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 240 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 30
- * ՍԴՈ-833. ՔԱՂԱՔԱՑԻ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԵՎ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՍԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԲԵԿԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.7 ՀՈԴՎԱԾԻ, 426.2 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՍԱՍԻ ԵՎ 426.4 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 45
- * ՍԴՈ-834. ԱՐԱՐ ՔԱՐԱՄՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԿ ՀԱՅՐԱՊԵՏԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՍԱՆ ՎՐԱ՝ «ՓԱԽԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՔԻ 25 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 62
- * ՍԴՈ-835. 2009 թվականի ՄԵԴԻՍՄԲԵՐԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԹԱՍԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎԱՆՆ ԾՐՎԳՐԻ ՀԱՍԱՐ ԼՐԱՑՈՒՑԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՊԱՏԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 70
- * ՍԴՈ-836. ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՄՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 55 ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՍԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍՈՎ ԵՎ ԱՄՑԱԿԵՑՄԱՆ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՍՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՍԱՍԻ, «ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՐԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՍՔԻ 2 ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՍԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 74

* ՍԴՈ-837. 2005 թվականի Ապրիլի 13-ին ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍԱՍԻՆ ՄԻԶԱՋԱՅԻՆ ԿՈՎԵՆՇԻԱՅՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 82
* ՍԴՈ-838. 2005 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ին ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄՊՈՐՏՈՒՄ ԴՈՊԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍԱՍԻՆ ՄԻԶԱՋԱՅԻՆ ԿՈՎԵՆՇԻԱՅՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 89
* ՍԴՈ-839. «ԳԼՈՒՔ» ՍՊԲ-ի ԴԵՄՈՒՄԻ ՀԻՄՈՒ ՎՐԱ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՔԸՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 63 ՀՈՂՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՍԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹ ԿԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ 92
* ՍԴՈ-840. 2009 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ին ԵՎ 2009 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՖԴԱՆՍԱՆՈՒՄ ՄԻԶԱՋԱՅԻՆ ԱՎՎԱՏԱԳՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՅԱՆՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏՈՐԱՎԱԺՄԱՆՆԱՆ ՍՊԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՄՎԱԾ ՀՅՈՒՄԻՍԱԼԱՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ /ՆԱՏՕ/ ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳՎԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱՍՎՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՆԵՎՈՂ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 98
* ՍԴՈ-841. 2009 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ին ԵՎ 2009 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՖԴԱՆՍԱՆՈՒՄ ՄԻԶԱՋԱՅԻՆ ԱՎՎԱՏԱԳՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՅԱՆՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏՈՐԱՎԱԺՄԱՆՆԱՆ ՍՊԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՄՎԱԾ ՀՅՈՒՄԻՍԱԼԱՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ /ՆԱՏՕ/ ՀԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳՎԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱՍՎՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՆԵՎՈՂ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 102
* ՍԴՈ-842. 2009 թվականի ՀՈՐԴՆԵՐԻ 21-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՑՉՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՎԻՐԱՎՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 106
* ՍԴՈ-843. 2008 թվականի ՍԵՊԵՄԲԵՐԻ 5-ին ՍՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՎՎԱՏԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՏԱԿԱՐԻ ԿԱԶՄՈՒԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՊԱՀ, ՀԱՎԱՀՐԱԿԱՅԻՆ, ՎԹԱՐԱԳՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 109
* ՍԴՈ-844. ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆՆ, Ա. ՍԱՐԳԱՅԱՆՆ ԵՎ Կ. ՈՈՒԲԻՆՅԱՆՆ, Ա. ԴԱՎԻԵԼՅԱՆՆ ԴԵՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՈՒ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 290 ՀՈՂՎԱԾԻ 1-ին ԵՎ 5-րդ ՄԱՍԻՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 113
* ՍԴՈ-845. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 48 ՀՈՂՎԱԾԻ 2-րդ ՄԱՍԻՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 128
* ՍԴՈ-846. 2006 թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ին ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱԶԳԱՅԻ ԻՐՎԱԿՈՒՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ ՍԱԿ-Ի ԿՈՎԵՆՇԻԱՅՅՈՒՄ (ԿԻՑ ԱՄԱՐԿՈՒԹՅԱՆ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 138

- * ՍԴՈ-847. 2009 թվականի ՀՈՒՆԻՍԻ 14-ին ՍՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՁԱԳԱՆՔԱՄ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 142
- * ՍԴՈ-848. 2009 թվականի ՀՈՒՆԻՍԻ 23-ին ԼՅՈՒԹՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՅՈՒԹՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԱՎՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 146
- * ՍԴՈ-849. ՔԱՂԱՔԱՅԻ ԱԼԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 404 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 149
- * ՍԴՈ-850. 2009 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ին ՑՅՈՒՐԻԽ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 159
- * ՍԴՈ-851. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՏՔՆԵՐԻ ՊԱՀՏՈՎԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 343 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 167
- * ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ 180



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ Խ. ՍՈՒՔԻՎԱՅՐԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 285 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.

Քաղ. Երեւան

12 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյա-
նի (գեղուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփոլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նա-
զարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդ-
վածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25,
38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի
Խ. Սուրիասյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության՝ Հայաստա-
նի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Խ. Սուրիասյանի՝ 23.04.2009թ. դի-
մումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր
բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության
օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հան-
րապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 285 հոդվածը փոփոխվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի մայիսի 25-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածը վերնագրված է «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը», որի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը 2006 թվականի մայիսի 25-ի խմբագրությամբ սահմանում է.

«Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի եւ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 05.03.2008թ. որոշում է կայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քրեական գործով մեղադրյալ Խ. Սուրբիայանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու մասին՝ նրան հայտնաբերելու պահից 2 ամիս ժամանակով:

Դիմողի ներկայացուցիչները 11.11.2008թ. միջնորդություն են հարուցել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ դիմողի նկատմամբ կալանք կիրառելու մասին նոյն դատարանի վերը նշված որոշման բողոքարկման համար սահմանված ժամկետի բացընդումը հարգելի համարելու եւ վերականգնելու մասին:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2008թ. որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

Դիմողի ներկայացուցիչները միջնորդությունը մերժելու վերաբերյալ վերը նշված որոշումը 08.12.2008թ. բողոքարկել են ՀՀ վերաբենիչ քրեական դատարան՝ միաժամանակ ներկայացնելով նաև դիմողի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ վերաբենիչ բողոք՝ այն ըստ էության քննության առնելու համար:

ՀՀ վերաբենիչ քրեական դատարանի կողմից 22.12.2008թ. կայացված

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Երկու որոշումներով առաջին բողոքը մերժվել է, իսկ երկրորդը թողնվել է առանց քննության:

ՀՀ վճարեկ դատարանի 03.03.2009թ. որոշմամբ վերաքննիչ քրեական դատարանի վերը նշված որոշումների դեմ բերված վճարեկ բողոքը վերադարձվել է:

3. Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի, 16 հոդվածի 3-րդ մասի և 25 հոդվածի պահանջներին:

Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից բխում է, որ դատարանի որոշմամբ կալանավորվել կարող է միայն ձերբակալված անձը, ընդ որում՝ 72 ժամվա ընթացքում: «Այսինքն՝ անձին դատարանի որոշմամբ կալանավորելու նախապայմանը նրա՝ ձերբակալված լինելն է: Այլ կերպ ասած, Սահմանադրության նշված նորմն արգելում է դատարանին կայացնել անձին կալանավորելու որոշում այն դեպքում, եթե վերջինս ձերբակալված չէ կամ, թեև ձերբակալված է եղել, սակայն մինչեւ դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելը լրացել է նրան ձերբակալվածի կարգավիճակում պահելու առավելագույն 72 ժամը»: Հետեւաբար, ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը, հնարավորություն ընձեռնելով դատարանին՝ անձին կալանավորելու որոշում կայացնել հեռակա կարգով՝ նրա բացակայության պայմաններում, առերեսույթ հակասում է ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Դիմողը դիմումում նաեւ առ այն, որ «... այն ընթացակարգը, որ նախատեսված է Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասով, հետախուզման մեջ գտնվող անձին երաշխիք է տալիս ոչ միայն մասնակցելու իր նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ չկիրառելու հարցի դատական քննությանը, այլև նշված դատական քննության ընթացքում այս առթիվ ներկայացնելու իր առարկությունները, ներառյալ՝ միջնորդելու իրեն գրավով ազատ արձակելու մասին»:

ՀՀ Սահմանադրության 25 հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ դիմողը փաստարկում է, որ «... այն իրավիճակը, եթե հետախուզման գործնարարը երկարատես բնույթ է կրում, իսկ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալը, որի նկատմամբ որպես խափանման միջոց հեռակա կարգով ընտրված է կալանավորումը, այդ ողջ ժամկետում զրկված է Հայաստանի Հանրապետությունից դրսություն գալու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու դեպքում՝ ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու հնարավորություններից, անհամատեղելի է Սահմանադրության 25-րդ հոդվածի հետ»:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՒԽ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով սահմանված իրավանորմը վերաբերում է ձերբակալման ինստիտուտին, այլ ոչ թե կալանավորմանը։ Ուստի պատահական չէ, որ նշված նորմում օգտագործվում է «ձերբակալված անձ» եւ «ձերբակալման պահից» բառակապակցությունները, ինչից ուղղակիորեն բխում է, որ տվյալ նորմը վերաբերում է ոչ թե բոլոր այն անձանց եւ այն դեպքերին, երբ հնարավոր է կալանավորում կիրառել, այլ՝ միայն ձերբակալման ինստիտուտին։

Ինչ վերաբերում է 72 ժամվա ընթացքում որոշման ընդունման պահանջին եւ դատական նիստին անձի ներկայության ապահովմանը, ըստ պատասխանողի՝ դրանք սուկ երաշխիքներ են, որպեսզի դատարանի կողմից համապատասխան զնահատական տրվի քրեական հետապնդում իրականացնող մարմնի գործողությունների եւ որոշման հիմնավորվածության վերաբերյալ։

Միաժամանակ, պատասխանողն անհրաժեշտ է համարում կարեւորել այն հանգամանքը, որ դատարանը լիովին իրավասու է կալանավորման մասին որոշում ընդունել նաեւ առանց քրեական հետապնդում իրականացնող մարմնի միջնորդության, կամ քրեական հետապնդում իրականացնող մարմինը նման միջնորդություն կարող է անել նաեւ այն դեպքում, երբ անձի նկատմամբ ձերբակալում չի կիրառվել։ Այսինքն՝ ձերբակալման իրավական հետեւանքը ցանկացած դեպքում պետք է լինի կամ 72 ժամվա ընթացքում անձի ազատ արձակումը, կամ կալանավորման մասին որոշման ընդունումը, բայց կալանավորման համար նախապայման չէ անձի ձերբակալված լինելու փաստը։

Հետեւարար, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 3-րդ մասի մեկնաբանումից ամենելին չի հետեւում, որ կալանավորման համար միակ նախապայմանը ձերբակալումն է, դրանք որոշակի դեպքերում հաջորդում են միմյանց։

Անդրադարձնալով այն հարցին, թե անձի բացակայությամբ վերջինիս կալանավորման մասին որոշում ընդունելը հակասում է, արդյոք, ՀՀ Սահմանադրության 25 հոդվածով սահմանված՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին, պատասխանողն անհրաժեշտ է համարում նշել, որ Սահմանադրության 43 հոդվածի պահանջներին համապատասխան՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար։ Հետեւարար, մե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ղադրյալի նկատմամբ կալանավորման կիրառման միջոցով ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումը չի հակասում Սահմանադրության 25 հոդվածին:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հոչակելով իրեն որպես իրավական պետություն, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով հատակ նախատեսում եւ երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքը: Սահմանադրության այս հոդվածը, վերարտադրելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվլողական կոնվենցիայի 5 հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի 3 հոդվածի, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9 հոդվածի դրույթները, սպառիչ կերպով սահմանում է անձին ազատությունից զրկելու դեպքերը՝ կանխորշելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներ:

ՀՀ Սահմանադրության 43 հոդվածն անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, եթե Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշը, սահմանները եւ դեպքերը՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասում ամրագրելով անձին ազատությունից զրկելու դեպքերը, սահմանադրը միեւնույն ժամանակ դրանցում արտացոլված նպատակներով եւ հիմքերով անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որեւէ կերպ չկանխորշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասին համահունչ, որպես դրանցում ամրագրված՝ առանձին իրավաչափ նպատակներին հասնելու դատավարական միջոցներ, նախատեսել է ձերբակալումը եւ կալանավորումը, միաժամանակ որոշակիացնելով դրանցից յուրաքանչյուրի գործառույթը, նպատակը եւ հիմքերը:

ՀՀ Սահմանադրության 16 հոդվածը՝ հետապնդելով անձին կամայականորեն ազատությունից զրկելը բացառելու նպատակ, իր 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերում ամրագրում է այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են անձին պաշտպանելու ազատությունից անօրինական զրկվելուց:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

16 հոդվածի 3-րդ մասը բովանդակում է հետևյալ կարեւորագույն երաշխիքները.

1. անձը չի կարող ձերբակալված վիճակում անազատության մեջ պահպել 72 ժամից ավելի,

2. կալանավորումը կարող է տեղի ունենալ բացառապես դատարանի որոշմամբ: Այս երաշխիքը պայմանավորված է նրանով, որ դատարանը, լինելով անկախ եւ անկողմնակալ՝ կոչված լինելով ներկայացնելու բացառապես իրավունքի շահը, կարող է օբյեկտիվ եւ անաշառ գնահատական տալ անձին ազատությունից զրկելու հիմնավորվածությանը,

3. նշված ժամկետում ձերբակալված անձի առնչությամբ կալանավորման որոշում չկայացվելու դեպքում անձը ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Այսպիսով, 16 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի նպատակն է բացառել արդեն իսկ ձերբակալված անձին կամայականորեն անազատության մեջ պահելն այն դեպքում, եթե այդ դրույթով սահմանված ժամկետում նրան կալանավորելու որոշում չի կայացվում: Համապատասխանաբար՝ այդ նորմի իրավակարգավորման առարկան ձերբակալված անձի առնչությամբ այդ նորմով սահմանված ժամկետում կալանավորման որոշում չկայացնելու իրավական հետեւանքներն են: 16 հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի իրավակարգավորման առարկայից եւ նպատակից բխում է, որ այն սահմանում է ձերբակալման ինստիտուտի կիրառման դեպքում Սահմանադրությամբ սահմանված ժամկետում կալանավորման որոշում չկայացնելու իրավական հետեւանքները:

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի սահմանադրախրավական բովանդակությունը, այդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման առարկան եւ նպատակը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 16 հոդվածը, այդ թվում՝ նաև դրա 3-րդ մասում ամրագրված դրույթը, չի սահմանում «ձերբակալման» եւ «կալանավորման» ինստիտուտների կիրառման, ձերբակալման կամ կալանավորման մասին իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ որոշումներ կայացնելու հաջորդականությունը, ձերբակալումը չի դիտարկում որպես կալանավորման պարտադիր նախապայման եւ, հետեւարար, ձերբակալված լինելու փաստի բացակայությունը՝ որպես կալանավորումը բացառող հանգամանք: Միաժամանակ, քրեական գործի մինչդատական վարույթի փուլում վերահսկողական իր գործառույթին իրականացնելու նպատակով դատարանի կողմից կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատապարտող ակտ է, այլ արդյունավետ ու անաշառ արդարադատություն իրականացնելու, Սահմանադրության 16 հոդվածի, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության

«ՀԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի պահանջների կատարումն ապահովող նախապայման:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Ճերբակալում» եւ «կալանավորում» ինստիտուտների կիրառման պարտադիր հաջորդականության հնարավորությունը բացառվում է նաև այդ ինստիտուտների էության, նպատակների եւ կիրառման հիմքերի համատեքստում:

«Ճերբակալման» ինստիտուտի էությունն ու նպատակները բացահայտված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128 հոդվածի 1-ին մասում: Ճերբակալումը դատավարական հարկադրանքի միջոց է, որի պարտադիր հատկանիշ է կարճաժամկետ լինելը, եւ նպատակառդված է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելուն: Ճերբակալմամբ հետապնդվող նպատակները համահունչ են ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նաև նաև նպատակներին: Այսինքն՝ օրենսդիրը որպես նշված սահմանադրական նորմում ամրագրված նպատակներին հասնելու դատավարական միջոց նախատեսել է ճերբակալումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի Գլուխ 17-ը, ճերբակալման նպատակներից ելնելով, սահմանում է ճերբակալման հիմքերը եւ կարգը:

«Կալանավորման» ինստիտուտի՝ որպես խափանման միջոցի տեսակի, էությունը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134 հոդվածում: Վերջինիս համաձայն՝ կալանավորումը միայն մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոց է, որի նպատակն է քրեական գործով վարույթի ընթացքում անձի ոչ պատշաճ վարքագծի կանխումը: Ի տարբերություն ճերբակալման, կալանավորումը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք եւ խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել խափանման միջոցի հենց այդ տեսակը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135 հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր հանգամանքները: Օրենսգրքի 135 հոդվածը, ամրագրելով կալանավորման հիմքերը, ըստ էության մատնանշում է ոչ պատշաճ վարքագծի այն հնարավոր դրսեւորումները, որոնք կանխելու նպատակով որպես խափանման միջոց կիրառվում է կալանավորումը: Կալանավորման նպատակի եւ հիմքերի ուսումնասիրությունը վկայում է, որ կալանավորմամբ հետապնդվող նպատակներն ըստ էության համահունչ են ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասի, մասնավորապես 3-րդ կետում մատնանշված նպատակին, այն է՝ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակին, ինչպես

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նաեւ 4-րդ կետում մատնանշված՝ հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակին: Այսինքն, օրենսդիրը՝ որպես նշված սահմանադրական նորմում ամրագրված նպատակներին հասնելու դատավարական միջոց նախատեսել է կալանավորումը:

«Զերբակալու» եւ «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների եւ հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության տարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես տարբերվող հիմքեր: Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասում նատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատավարական միջոց, եւ կիրառվում է տարբեր հիմքերի առկայությամբ: Հետեւաբար, դրանցից յուրաքանչյուրը, առանց որեւէ փոխսպայմանավորվածության, փոխկապակցվածության եւ հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, եթե առկա են դրանով հետապնդվող նպատակները եւ դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պարագայում, եթե կալանավորման հիմքերն առավել ալիքայտ են եւ ոչ վիճահարույց, կալանավորումն ըստ էության այն համարժեք իրավաչափ միջոցն է, որն անհրաժեշտ է կալանավորմանը հետապնդվող նպատակի համար:

7. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի՝ անձի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքն ամրագրող 5 հոդվածի 3-րդ կետը, որպես անձին ազատությունից զրկելու գործընթացում օրինականության ապահովման կարևոր երաշխիք, պահանջում է, որ ազատությունից զրկված անձն անհապաղ տարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն: Կոնվենցիայի այս դրույթի վերաբերյալ ձեւավորված՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն անձին ազատությունից զրկելու օրինականության նկատմամբ դատական վերահսկողության նշված պահանջի բաղադրատարք է համարում, ի թիվս այլոց, անձին ազատությունից զրկելու օրինականության հարցի քննության ընթացքում տվյալ անձի լսվելու իրավունքի ապահովումը (մասնավորապես, տե՛ս, Եվրոպական դատարանի՝ Կամպանիս ընդդեմ Հունաստանի գործով 1995թ. հունիսի 13-ի վճիռը, կետ 47, Kampanis v. Greece, Աքվիլինան ընդդեմ Մալթայի գործով 1999թ. ապրիլի 29-ի վճիռը, 47-50-րդ կետեր, Aquilina v. Malta): Այս իրավունքի իրացումը հնարավոր է դառնում տվյալ անձին ազատությունից զրկելու պահից անհապաղ դատավորի մոտ տանելու միջոցով:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ կալանքի ձեւով անձին ազատությունից զրկելու հարցի քննարկումը տեղի է ունենում վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության դատական քննության շրջանակներում։ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասը, սահմանելով կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկմանը ներկա գտնվող սուբյեկտների շրջանակը, Կոնվենցիայի 5 հոդվածի 3-րդ կետի պահանջներին համահուն՝ ապահովում է ազատությունից զրկված անձի՝ դատարանի առջեւ լսվելու իրավունքի իրացումը։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավորի մոտ տարվելու եւ լսվելու իրավունքի իրացումն անմիջականորեն եւ անխորդական կապված է անձին փաստացիորեն անազատության մեջ պահելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու փաստի հետ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ իրավունքի իրացման երաշխավորման պարտականությունը պետության համար ծագում է անձին ազատությունից փաստացիորեն զրկելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու պահից։ Այսինքն՝ ինչպես ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով, այնպես էլ Կոնվենցիայի 5 հոդվածով նախատեսված բոլոր երաշխիքները, այդ թվում՝ նաև դատարանի առջեւ լսվելու իրավունքը, սկսում են գործել միայն այն պահից սկսած, եթե անձը պետության կողմից փաստացիորեն զրկվում է ազատությունից։ Հետեւարար, նկատի ունենալով, որ հետախուզման մեջ գտնվող անձը փաստացիորեն ազատությունից զրկված չէ, նրա բացակայության պայմաններում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման ժամանակ այդ անձը չի օգտվում վերոհիշյալ երաշխիքներից, այդ թվում՝ դատարանում լսվելու իրավունքից։ Ուստի նման իրավիճակում մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման կայացումը չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով եւ Կոնվենցիայի 5 հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման։ Ընդ որում, քրեական հետապնդման մարմինների պարտականությունն ազատությունից զրկված անձի ներկայության ապահովումն է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման նպատակով իրավիրված դատական նիստին։

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ հետախուզման մեջ գտնվող անձի վերաբերյալ կալանքի որոշում կայացնելու ընթացակարգը կիրառվում է նաև քրեական գործերով իրավական օգնության եւ հանձնման մասին միջազգային փաստաթղթերում՝ ԱՊՀ շրջա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նակներում 1993թ. հունվարի 22-ին Սինսկում եւ 2002թ. հոկտեմբերի 7-ին Քիշնեւում կնքված՝ «Քաղաքացիական, ընտանելական եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիաներում, Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքված՝ «Հանձնման մասին» կոնվենցիայում եւ այլն: Վերոհիշյալ կոնվենցիաների ուսումնասիրությունը վկայում է՝ հաշվի առնելով, որ հանձնման գործընթացը, որպես կանոն, երկարատես պրոցես է, նշված միջազգային պայմանագրերը մինչեւ հայցող պետության իշխանություններին հանձնման ենթակա անձին հանձնելը, որպես կանոն, բույլ են տալիս նրան ազատությունից զրկել մինչեւ 30-40 օր ժամկետով: Ըստ այդմ, նշված միջազգային փաստաթորերը հայցող պետությունից պահանջում են որպես ազատությունից զրկելու իրավական հիմք ներկայացնել այնպիսի դատավարական ակտ, որը հնարավորություն կտա տվյալ անձին անազատության մեջ պահել որոշակի երկարատես ժամանակահատվածի ընթացքում: Մասնավորապես, Սինսկի կոնվենցիայի 58 եւ Քիշնեւի կոնվենցիայի 67 հոդվածների 2-րդ մասերը սահմանում են, որ քրեական հետապնդում իրականացնելու կամ պատասխանատվության ենթարկելու համար հանձնելու վերաբերյալ հարցմանը պետք է կցված լինեն կալանքի վերցնելու եւ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների հաստատված պատճենները, համապատասխանաբար 60 եւ 68 հոդվածները նախատեսում են հանձնման մասին հաղորդում ստանալուց հետո անձին կալանքի վերցնելու հնարավորություն, իսկ 61 եւ 70 հոդվածները նախատեսում են նաև հանձնվող անձին կալանքի վերցնելը կամ ձերբակալելը նաև միջնորդության հիման վրա, այսինքն՝ եթե հանձնման մասին հաղորդում դեռ չկա, սակայն առկա է հայցող կողմի միջնորդությունը, որը պարունակում է հղում այն դատական որոշմանը, որով անձի նկատմամբ հայցող պետությունում կալանք է կիրառվել, եւ որը պետք է ներկայացվի հանձնման մասին հաղորդման հետ, ապա հայցվող պետությունը կարող է առանց դատարանի որոշման կալանավորել անձին:

Հաշվի առնելով, որ ձերբակալումը հարկադրանքի կարճաժամկետ միջոց է, իսկ հանձնման գործընթացը պահանջում է շատ ավելի երկար ժամանակ, հանձնման ենթակա անձին ավելի երկար ժամկետով անազատության մեջ պահելու օրինական հիմք, հետեւարար, հետախուզվող անձի հանձնումը Հայաստանի Հանրապետությանը հնարավոր է դառնում միայն տվյալ անձի վերաբերյալ կալանքի որոշման առկայության դեպքում: Բացի դրանից, 1977 թ. Ստոկհոլմում կայացած Ինտերպոլի 46-րդ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում ընդունված թիվ 15 որոշման, 2008թ. Սամկու Պետերբուրգում կայացած 77-րդ նստաշրջանում ընդունված թիվ AG -2008-RAP-06 որոշման եւ այս կազմակերպության կողմից ընդունված

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մի շարք այլ ակտերի համաձայն Ինտերպոլի խողովակներով հետախուզվող անձանց նկատմամբ միջազգային հետախուզում հնարավոր չէ հայտարարել՝ առանց հետախուզվողի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընդունելու մասին որոշման առկայության:

9. Անձին ազատությունից գրկելը նրա մեկուսացումն է հասարակությունից, ընտանիքից, ինչը ենթադրում է, ի թիվս այլոց, ծառայողական պարտականությունների կատարման, իր հայեցողությամբ տեղաշարժվելու եւ անսահմանափակ թվով անձանց հետ շփվելու անհնարինություն։ Այսինքն՝ ձերբակալման կամ կալանափորման միջոցով ազատությունից գրկումը, որպես պարտադիր հատկանիշ, ի թիվս այլոց, ներառում է ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե որեւէ իրավական ինստիտուտի կիրառում անհրաժեշտաբար եւ անխուսափելիորեն ենթադրում է այս կամ այն իրավունքի իրավաչափ սահմանափակում, ապա նման ինստիտուտի կիրառումը չի կարող ենթադրել նաեւ տվյալ իրավունքի խախտում։ Այս հիմքով սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 16 հոդվածի հիման վրա ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման շրջանակներում Սահմանադրության 25 հոդվածով սահմանված՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի ենթադրյալ խախտումը չի կարող սահմանադրական դատարանում դառնալ քննության առարկա։

Այն դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 5 հոդվածի հիման վրա ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքի շրջանակներում չի կարող վիճարկել նաեւ տեղաշարժի իրավունքի ենթադրյալ խախտումը, արտահայտված է նաեւ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում (մասնափորապես, Գուզարդին ընդդեմ Իտալիայի գործով 1980թ. նոյեմբերի 6-ի վճռը, կետ 92, Guzzardi v. Italy):

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի պնդումն առ այն, որ հետախուզման մեջ գտնվող անձի բացակայության պայմաններում նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու որոշումը խախտում է ազատ տեղաշարժվելու նրա սահմանադրական իրավունքը։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ռ Շ Ե Ց**։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**12 սեպտեմբերի 2009 թվականի
ՍՊ-827**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ, ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՓՈԽԸՆԹԲՈՆՄԱՆ ՀՈՒՇՎԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

16 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի (գելուցող), Մ. Թոփոլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 26-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջեւ Հայ-հնդկական տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն իմնելու մասին փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 01.09.2009թ.։

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով հուշագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջեւ Հայ-հնդկական տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու մասին փոխընդունման հուշագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 26-ին Երեւանում՝ Երկկողմ համագործակցությունը տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում խորացնելու նպատակով։

2. Հուշագրով նախատեսվում է ապահովել Հայ-հնդկական տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ուսումնական կենտրոնի (Կենտրոն) հիմնումը Երեւանում, դրա հետագա պահպանում ու զարգացումը, ինչպես նաև գիտական աշխատողների նոր հոսքի ձեւավորում եւ աշխատատեղերի ստեղծում, համաշխարհային մակարդակի բարձրակարգ SS մասնագետների նախապատրաստում՝ հայկական շուկա ներդրումներ ներգրավելու եւ արտահանումների միջոցով շուկայի հասույցը մեծացնելու նպատակով։ Այդ նպատակով Հնդկաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշում է ընդունվել տրամադրել Rs. 75.57 միլիոն գումարի միանվագ դրամաշնորհ Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Հայաստանի S2S ոլորտի զարգացման համար։

3. Հուշագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները։

- հատկացնել շենք՝ անհրաժեշտ տարածքներով, ներքին միջնապատերով, ներքին հարդարանքով, կապի միջոցներով, հոսանքով, ինչպես նաև հագեցած հետեւյալ հարմարություններով՝ UPS/DG սարք (այլնտրանքային հոսանքի մատակարարում), ջրամատակարարում, ջեռուցում, օդափոխություն եւ այլն,
- տրամադրել համակարգիչներ եւ գրասենյակային կահույք, գրասենյակների, լսարանների, գրադարանի եւ դասախոսների աշխատասենյակների համար անհրաժեշտ այլ սարքավորումներ,
- անվճար տրամադրել կահավորված բնակարաններ, փոխադրամիցոցներ, կապ եւ բժշկական ծառայություններ Հնդկաստանից գործուղված փորձագետների համար,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ապահովել մատակարարված ապրանքների մաքսագերծումը և դրանց տեղափոխումը Կենտրոն կարճ ժամկետներում,
 - տրամադրել ամենօրյա ֆինանսական եւ կառավարման աջակցություն Կենտրոնին,
 - հոգալ Կենտրոնի ամենօրյա գործառնական ծախսերը,
 - տրամադրել բոլոր պահանջվող բույլտվությունները և հաստատումները Կենտրոնի ստեղծման եւ գործունեության համար եւ այլն:
4. Հուշագրի կիրարկման նպատակով մշակված բոլոր փաստաթղթերը կլինեն հուշագրի անքածանելի մասը:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիմանագիտական ուղիներով ստանալու օրվանից եւ գործում է անորոշ ժամկետով:

Փոխըմբռնման հուշագրի գործողությունը դադարում է Կողմերից մեջ՝ դրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից վեց ամիս հետո:

5. Փոխըմբռնման հուշագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին եւ բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հունիսի 26-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև Հայ-հնդկական տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու մասին փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**16 սեպտեմբերի 2009 թ.
ՍՊԸ-828**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1999 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՕԳԱՅԻՆ ՓՈԽԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇ ԿԱՆՈՆՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՑՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

16 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թողյանի, Մ. Թոփոլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի (գեներալ), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր լնիքացակարգով քննեց «1999 թվականի մայիսի 28-ին Մոնրեալում ստորագրված՝ Միջազգային օդային փոխադրումների որոշ կանոնների միասնականացման մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 01.09.2009թ.
ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Ա. Մարությանի գրավոր բացատրությունը, հետա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

զոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրվել է 1999թ. մայիսի 28-ին՝ Մոնթելում: Կոնվենցիան բաղկացած է 7 գլուխներից, որոնցում ներառված են 57 հոդվածներ:

2. Կոնվենցիան նպատակառության է 1944 թվականի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում կատարված՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի դրույթների համաձայն միջազգային օդային փոխադրումների զարգացման արդյունքում՝ 1929 թվականի հոկտեմբերի 12-ին Վարչավայում ստորագրված՝ «Միջազգային օդային փոխադրումներին վերաբերող որոշ կանոնների միասնականացման մասին» կոնվենցիայի դրույթների պահանջների արդիականացմանը եւ համախմբմանը:

Հիշյալ կոնվենցիաներին Հայաստանի Հանրապետությունը միացել է համապատասխանաբար՝ 1994 թվականի մարտի 29-ին եւ 1994 թվականի մարտի 16-ին:

Կոնվենցիան կիրառվում է՝

- օդանավով վճարի դիմաց իրականացվող՝ մարդկանց, ուղերենի կամ բեռի բոլոր տեսակի միջազգային փոխադրումների նկատմամբ,
- ավիափոխադրող ընկերության կողմից օդանավով իրականացվող անվճար փոխադրումների նկատմամբ:

3. Կոնվենցիայով սահմանվում են՝

- պետության կողմից իրականացվող փոխադրումների եւ փոստի փոխադրման կարգը,
- ուղեւորների, ուղերենի եւ բեռի փոխադրմանը վերաբերող կողմերի փաստաթղթերի եւ պարտականությունների կարգը,
- փոխադրողի պատասխանատվությունը եւ վճարի փոխադրուման չափը՝ ուղեւորների մահվան եւ վճարվածքներ ստանալու, ուղերենի կամ բեռի վճարման, ուշացման եւ այլ դեպքերում,
- խնդիրների լուծման եղանակը, այդ բվում դատական կարգով,
- խառը փոխադրումների կարգը,
- պայմանագրային փոխադրողներ չհանդիսացող անձանց կողմից իրականացվող օդային փոխադրումների կարգը:

4. Կոնվենցիայով նախատեսված են նաև պայմանագրային փոխադրողներ չհանդիսացող անձանց կողմից իրականացվող օդային փոխադրումների իրականացման կարգը, առանձին դրույթներ անվավեր ճանաչելու, կոնվենցիան ստորագրելու, վավերացնելու, ուժի մեջ մտնելու, չեղյալ հայտարարելու, վերապահումներ անելու կարգն ու պայմանները:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

5. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ուղեւորների փոխադրման ժամանակ տրամադրել փոխադրման անհատական կամ կողեկտիվ փաստաթուղթ, որը պարունակում է մեկնանան եւ նշանակման կետերի նշումը կամ առնվազն մեկ այդպիսի կանգառի նշումը, եթե մեկնանան եւ նշանակման կետերը գտնվում են Մասնակից պետություններից մեկի տարածքում,
 - ուղեւորն հանձնել գրանցված յուրաքանչյուր ուղերեսի յուրաքանչյուր կտորի համար ուղերեսի նույնականացման պիտակ,
 - երաշխավորել փոխադրողի պատասխանատվությունն ուղեւորի մահվան կամ մարմնական վճառվածք ստանալու դեպքում տեղի ունեցած վնասի համար՝ միայն այն պայմանով, որ պատահարը, որը մահվան կամ վնասվածքի պատճառ է դարձել, տեղի է ունեցել օդանավում կամ օդանավից իջնելու ժամանակ,
 - երաշխավորել, որ պատասխանատվություն կրող անձի մահվան դեպքում վնասի հատուցման վերաբերյալ հայցը, կոնվենցիայի պայմաններին համապատասխան, կմերկայացվի նրա օրինական ներկայացուցչին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

1. 1999 թվականի մայիսի 28-ին Սոներեալում ստորագրված՝ Միջազգային օդային փոխադրումների որոշ կանոնների միասնականացման մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2009 թվականի ՍՊ-829



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ՄՈՍԿՎՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱՁԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՎՄՄ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՍՏԱՏԱՄԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՄԹՅ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

16 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի,
Ֆ. Խոհովյանի, Մ. Թոփուզյանի (գեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նա-
զարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100
հոդված 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատա-
րանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդ-
վածների,

դրսքաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009
թվականի հունիսի 9-ին Մոսկվայում ստորագրված՝ Եվրասիական տնտե-
սական ընկերակցության հակածգնաժամային իհմնադրամի իհմնադր-
ման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հա-
յաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխա-
նության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետու-
թյան սահմանադրական դատարանին ուղղված Հանրապետության Նա-
խագահի դիմումը՝ մուտքագրված 02.09.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հան-
րապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանս-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը եւ վերջինիս անբաժանելի մասը կազմող Կանոնադրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Խնդրո առարկա պայմանագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 9-ին՝ Մոսկվայում: Պայմանագիրն ստորագրվել է Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության կողմից:

Պայմանագիրը բաղկացած է 8 հոդվածից եւ կից Կանոնադրությունից, որը պայմանագրի հավելվածն է:

2. Պայմանագրին համապատասխան հիմնադիր պետությունները ստեղծելու են Եվրասիական տնտեսական համագործակցության հակազնաժամային հիմնադրամ՝ ազգային տնտեսությունների կողմից համաշխարհային ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամի բացասական հետեւանքները հաղթահարելու, դրանց տնտեսական եւ ֆինանսական կայունությունն ապահովելու, ինչպես նաև հիմնադրամի մասնակից պետությունների տնտեսությունների ինտեգրման հետագա խորացմանն աջակցելու նպատակով:

Համաձայն պայմանագրի 2-րդ հոդվածի՝ հիմնադրամի միջոցները, մասնավորապես, օգտագործվելու են հետեւյալ նպատակների համար՝

- հիմնադրամի մասնակից պետություններին անկախ փոխառություններ տրամադրելու,

- եկամտային ցածր մակարդակով կայունացման վարկեր տրամադրելու,

- միջազգային ներդրումային նախագծեր ֆինանսավորելու:

Հիմնադրամի միջոցները տրամադրվում են վճարման, ժամկետային սահմանափակման եւ վերադարձման պայմաններով:

3. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը կրում է ֆինանսական պարտավորություններ:

Ըստ պայմանագրի 3-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կողմից կատարվող նախնական հատկացումը կազմելու է 1 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Հիմնադիր պետությունների կողմից նախնական վճարումները կատարվելու են հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 /վեց/ ամսվա ընթացքում:

Ընդ որում, վերոնշյալ գումարի 10%-ը հիմնադիր պետություններից յուրաքանչյուրը վճարում է ԱՄՆ դոլարով եւ /կամ Եվրոյով, մնացած 90%-ը

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վճարվելու է պարզ, չշրջանառվող եւ անտոկոս պարտամուրհակի թողարկման միջոցով, որի մարումն իրականացվում է հիմնադրամի մասին Կանոնադրությամբ սահմանված կարգին համապատասխան:

Հիմնադրամի հիմնադիր պետությունները դառնում են դրա մասնակիցներ նախնական վճարման պարտավորությունների կատարելուց հետո, ներառյալ դրամական միջոցների վճարումը եւ պարտամուրհակների հանձնումը:

Պայմանագիրը բաց է ցանկացած շահագրգիռ պետության կամ կազմակերպության մասնակցության համար:

Համաձայն պայմանագրի 4-րդ հոդվածի՝ հիմնադրամի միջոցների կառավարումն իրականացվելու է հիմնադրամի խորհրդի կողմից, որի անդամներն են հիմնադրամի մասնակից պետությունների ֆինանսների նախարարները եւ հիմնադրամի մասնակից միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, հիմնադրամի միջոցների կառավարչի հետ համատեղ:

Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթների կատարումը վերապահվում է Եվրասիական զարգացման բանկին հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագրի հիման վրա, որը կնքվում է հիմնադիր պետությունների եւ բանկի միջև։

4. Պայմանագրի հավելվածն է հանդիսանում հիմնադրամի Կանոնադրությունը, որը բաղկացած է 4 բաժնից, 23 հոդվածից։

Կանոնադրության 1-ին բաժնով սահմանվում է հիմնադրամի կարգավիճակը՝ այն իրավաբանական անձ կամ կազմակերպություն չի հանդիսանում։

Հիմնադրամի մասնակիցները պատասխանատվություն են կրում հիմնադրամի գործառնությունների շրջանակներում իրենց ստանձնած պարտավորությունների համար՝ հիմնադրամի միջոցներում իրենց ունեցած մասնարաժնի սահմաններում։

Կանոնադրության 2-րդ բաժնում կանոնակարգում է հիմնադրամի միջոցների ձեւավորման եւ օգտագործման հետ կապված հարաբերությունները։

Համաձայն Կանոնադրության 6-րդ հոդվածի՝ հիմնադրամի միջոցների գոյացման աղբյուրներն են՝

ա. հիմնադրամին կատարվող վճարումները,

բ. հիմնադրամի ժամանակավորապես ազատ միջոցների տեղաբաշխումից ստացված մուտքերը,

գ. վերադարձման հիմքով հիմնադրամի միջոցների տրամադրումից ստացված մուտքերը,

դ. հիմնադրամին կատարվող նվիրաբերությունները,

ե. հիմնադրամին ուղղված այլ մուտքերը։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Կանոնադրության 3-րդ բաժինը նախատեսում է հիմնադրամի միջոցների կառավարման ընդհանուր սկզբունքները, հիմնադրամի խորհրդի, խորհրդի նախագահի և հիմնադրամի միջոցների կառավարչի կարգավիճակը և լիազորությունների շրջանակը:

Կանոնադրության 4-րդ բաժինը նվիրված է հիմնադրամի կազմից մասնակիցների դրուս գալու, գործառնությունների ժամանակավոր կասեցման, դադարեցման և վեճերի լուծման կարգին ու պայմաններին:

Հարկ է արձանագրել, որ պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածի դրույթներին, քանզի կոչված են զարգացնելու կողմերի միջեւ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ, ինչպես նաև ստեղծել բարենպաստ պայմաններ հակածնաժամային ծրագրեր իրականացնելու, ֆինանսական կայունություն հաստատելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2009 թվականի հունիսի 9-ին Մոսկվայում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական ընկերակցության հակածնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**16 սեպտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ-830**

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱՁԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՎԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱԲՅԵ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

16 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (գեկուցող), Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

ηηδρωαց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակածգնաժամային իիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 31.08.2009թ. սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ.Արամյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Եվրասիական տնտեսական ընկերակցության հակածգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 9-ին Մոսկվայում՝ համաձայնագրի մասնակից թվով վեց պետությունների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) եւ Եվրասիական զարգացման բանկի (այսուհետ՝ Բանկ) միջև։ Համաձայնագիրը կնքվել է Եվրասիական տնտեսական ընկերակցության հակածգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագրի եւ դրանում նախանշված հիմնական խնդիրների իրականացման, այն է՝ համաշխարհային տնտեսական եւ ֆինանսական ճգնաժամի բացասական հետեւանքներն ազգային տնտեսությունների համար հաղթահարելու, դրանց ֆինանսական եւ տնտեսական կայունությունն ապահովելու եւ հակածգնաժամային հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) մասնակից պետությունների տնտեսությունների միասնականացման գործընթացի հետագա խորացմանն աջակցելու նպատակով։

2. Համաձայնագրով կողմները սահմանել են Հիմնադրամի միջոցների համատեղ կառավարման կարգը։ Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթներն իրականացնում է Բանկը։ Սահմանված է, որ այդ գործառույթներն իրականացնելիս Բանկն առաջնորդվում է բացառապես Հիմնադրամի մասնակիցների շահերով եւ Հիմնադրամի ստեղծման նպատակներով, գործադրում է բոլոր հնարավոր ջանքերը Հիմնադրամի միջոցների արդյունավետ կառավարումն ապահովելու համար։ Համաձայնագրի 1-ին հոդվածի, ինչպես նաև Բանկի հիմնադիր փաստաթղթերի համաձայն Հիմնադրամի միջոցների եւ գործառնությունների նկատմամբ, սահմանված իրավագործության շրջանակներում, կիրառվում են Բանկի անձեռնմխելիության, առավելությունների, արտոնությունների վերաբերյալ նախատեսված նորմատիվ կանոնները։

3. Համաձայնագրով Բանկն իրավասու է տնօրինել Հիմնադրամի բոլոր, այդ թվում՝ Հիմնադրամի մասնակիցների կենտրոնական (ազգային) բանկերի հաշիվներին փոխանցված դրամական միջոցները՝ այդ բանկերի հետ կնքվող բանկային հաշվի համապատասխան պայմանագրերի հիման վրա, ընդ որում, Հիմնադրամի միջոցների նկատմամբ մասնակիցների սեփականության իրավունքը Բանկն չի փոխանցվում։ Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն Բանկն իր ունեցվածքով պատասխանատու չէ Հիմնադրամի գործառնությունների իրականացման շրջանակներում Հիմնադրամի մասնակիցների անունից իր ստանձնած պարտավորությունների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պարտավորությունների ստանձնան դեպքում Բանկը խախտել է Հիմնադրամի փաստաթղթերի դրույթները։

Հիմնադրամի միջոցների տնօրինման շրջանակներում Բանկը Հիմնադրամի մասնակիցների անունից իրավասու է իրականացնել մի շարք իրավաբանական գործողություններ (գործառնություններ), որպիսիք նախատեսված են համաձայնագրի 2-րդ հոդվածում։ Հիմնադրամի միջոցնե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ըլ Բանկի կողմից ենթարկվում են հաշվապահական հաշվառման՝ համաձայնագրի 3-րդ հոդվածում նախանշված կանոններով:

Հիմնադրամի միջոցների վարչական կառավարումը եւ Հիմնադրամի խորիոյի (Հիմնադրամի կառավարման մարմնի), փորձագիտական խորիոյի հետ գործակցությունը Բանկն իրավասու է իրականացնել համաձայնագրի 4-րդ հոդվածում նախատեսված նորմերի (լճացակարգի) շրջանակներում:

Համաձայնագրի 5, 6 եւ 7-րդ հոդվածների դրույթներին համապատասխան նախատեսված են Հիմնադրամի միջոցների տնօրինման օրինականությունը (նախատակայնությունը, հիմնավորվածությունը) ստուգելու, ֆինանսական հաշվետվությունները հաստատելու եւ Հիմնադրամի միջոցների օգտագործման հետ կապված հակաիրավական հնարավոր գործողությունների կանխման համապատասխան գործընթացներ:

Համաձայնագրի եզրափակիչ դրույթներում նախատեսված են համաձայնագրի ուժի մեջ մտնելու, գործողությունը դադարելու, կողմերի միջև հնարավոր վեճերը լուծելու վերաբերյալ նորմեր:

4. Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է պատշաճ կերպով կատարել համաձայնագրի դրույթներից քիող իր պարտավորությունները:

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները եւ դրանցից քիող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածի դրույթներին եւ քիում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելեկով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.

1. 2009 թվականի հունիսի 9-ին Մոսկվայում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական ընկերակցության հակածքնաժմային հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**16 սեպտեմբերի 2009 թվականի
ՍԴՌ-831**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«ՍԱԹԻ» ՓԲԸ-ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՎ ՎՐԱ՝ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 15 ՀՈԴՎԱԾԻ «զ» ԿԵՏԻ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 240 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ
ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Բ
ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

22 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուբյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թողյանի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ դիմոն՝ «Սարի» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Տ. Աքանեանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Սարի» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածի «զ» կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Սարի» ՓԲԸ-ի՝ 20.04.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Յ Ց**.

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքն ընդունել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ 1997 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահն այն ստորագրել է 1997 թվականի մայիսի 12-ին: Օրենքն ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 30-ին (ՀՕ-107):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահն այն ստորագրել է 1998 թվականի օգոստոսի 7-ին: Օրենսգիրքն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի 15 հոդվածի «զ» կետի համաձայն. «Հարկ վճարողը պարտավոր է՝ ... ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը»:

Օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն. «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը՝ ... մասնակիորեն բեկանում եւ փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, եւ եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 31.08.2007թ. հանձնարարագրի՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյանի 1 հարկային տեսչության կողմից 04.10.2007 թվականից մինչեւ 07.11.2007 թվականը «Սարի» ՓԲԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության եւ հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ստուգում: Ստուգման արդյունքներով 07.11.2007 թվականին կազմվել է թիվ 1032425 ակտը, որով արձանագրվել են ՀՀ օրենսդրության խախտումներ եւ ընկերությանն առաջադրվել են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների եւ դրամարկղային գործառնությունների մասին ՀՀ օրենսդրության պահանջների գծով պարտավորություններ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Նշված ակտի վերաբերյալ իր՝ 12.11.2007թ. թիվ 071112412/ՀՏ գրությամբ «Սաքի» ՓԲԸ-ն առարկություններ է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողով, որն իր՝ 30.11.2007թ. թիվ 186/1 որոշմամբ նշված ակտը բողել է անփոփոխ: Գանգատարկման հանձնաժողովն իր՝ 30.11.2007թ. թիվ 186/1 որոշմամբ, հղում կատարելով «Զբոսաշրջության եւ զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքին եւ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետին, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... Նշված գործունեությունը կարգավորվում է «Զբոսաշրջության եւ զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Ընկերության կողմից իրականացրած օրական շրջագայությունների կազմակերպումը չի համապատասխանում զբոսաշրջության գործունեություն, զբոսաշրջային գործակալություն հասկացություններին: Ընկերությունը խախտել է նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի զ) կետի պահանջները՝ չներկայացնելով ծառայությունները օտարերկրյա քաղաքացիներին մատուցելու վերաբերյալ հաստատող փաստաթղթեր (անձը հաստատող փաստաթղթի պատճեն, պայմանագրի առկայություն) ...»:

Մինչ Գանգատարկման հանձնաժողովի որոշման կայացումը, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 27.11.2007թ. թիվ ԱՀ 002097 հանձնարարագրով Սպանդարյանի 1 հարկային տեսչության իրավաբանական բաժնի աշխատակիցներին հանձնարարվել է «Սաքի» ՓԲԸ-ին պատկանող գույքի վրա չկատարված հարկային պարտավորությունների չափով արգելանք դնել, ինչն էլ իրականացվել է՝ նշված աշխատակիցների՝ նույն օրը՝ 27.11.2007 թվականին ընդունած թիվ ԱՀ 002097 որոշմամբ:

Ընկերությունը 17.12.2007թ. դիմել է ՀՀ տնտեսական դատարան ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 07.11.2007թ. թիվ 1032425 ստուգման ակտը, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 27.11.2007թ. թիվ ԱՀ 002097 հանձնարարագրով եւ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովի՝ 30.11.2007թ. թիվ 186/1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Գործը՝ ենթակայության եւ ընդդատության կանոնների պահպանմամբ, փոխանցվել է ՀՀ վարչական դատարան:

Վարչական դատարանի՝ 01.08.2008թ. թիվ ՎԴ/0041/05/08 վճռով ընկերության հայցը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 07.11.2007թ. թիվ 1032425 ստուգման ակտի 1-ին (շահութահարկ) եւ 4-րդ (ավելացված արժեքի հարկ) կետերը, եւ ՀՀ կառավարությանն առընթեր

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովի՝ 30.11.2007թ. թիվ 186/1 որոշումը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 26.12.2008թ. թիվ ՎԴ/0041/05/08 որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, Վարչական դատարանի 01.08.2008թ. թիվ ՎԴ/0041/05/08 վճիռը՝ հայցը բավարարելու մասով բեկանվել է եւ փոփոխվել. «Սարի» ՓԲԸ-ի հայցը մերժվել է:

3. Ըստ դիմողի՝ հարկ վճարողի համար հարկային արտոնությունների նրա իրավունքը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու պարտականության սահմանումն իրավաչափ չէ եւ նման պարտականություն սահմանող՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 21, 22 եւ 33.1. հոդվածներին: Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 21 եւ 22 հոդվածներով սահմանված՝ անմեղության կանխավարկածի եւ «լրության» իրավունքի սկզբունքները կիրառելի են ոչ միայն քրեական դատավարության ոլորտում, այլ նաև այլ վարույթներում: Այսպիսի դիրքորոշման հիման վրա դիմողը գտնում է, որ հարկային իրավահարաբերություններում ապացուցման բեռը կրում է պետական մարմինը, եւ հարկատուն պարտավոր չէ ներկայացնել հարկային արտոնություններից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկությունները հաստատող փաստաթղթեր, քանի որ դրանք իր անմեղությունն ապացուցելու եւ իր դեմ ցուցմունք տալու դրսեւրման եղանակներ են: Միաժամանակ, դիմողը գտնում է, որ «... ոչ մի օրենքով արգելված չէ գրադիր ձեռնարկատիրական գործունեությամբ՝ օգտվելով հարկային արտոնություններից, այն պայմաններում, երբ հարկային արտոնությունները հաստատող ապացույցներ չեն ներկայացվել վարչարարություն իրականացնող համապատասխան մարմնին»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի առնչությամբ դիմողը գտնում է, որ, պայմանավորված վճռաբեկ դատարանում դատավարության առանձնահատկություններով, վճռաբեկ դատարանում չեն գործում դատավարության կողմերի մի շարք իրավունքներ եւ ստորադաս դատարաններին հատուկ դատական մի շարք գործառույթներ, որոնք հիմք են դատական պաշտպանության արդյունավետության ապահովման համար: Նման պայմաններում վճռաբեկ դատարանին գործը նորովի լուծելու իրավասություն վերապահելը, դիմողի կարծիքով, չի հանդիսանում դատական պաշտպանության արդյունավետ միջոց՝ հակասելով ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերին:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիմողը բարձրացնում է նաեւ օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իրավական անորոշության հարցը, գտնելով, որ անորոշ է օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում օգտագործված «արդարադատության արդյունավետության շահ» հասկացությունը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետի վիճարկող դրույթը դիմողի կողմից ընկալվում եւ մեկնարանվում է սխալ՝ հաշվի չառնելով հոդվածի բուն իմաստը: Այդ դրույթը որեւէ կերպ չի սահմանափակում անձի՝ օրենքով նախատեսված հարկային արտոնությունից օգտվելու իրավունքը եւ չի պահանջում լրացուցիչ բույլտվություն: Վիճարկող դրույթում խոսքը վերաբերում է ոչ թե անձին՝ օրենքով նախատեսված արտոնությունից զրկելուն, այլ հարկային արտոնություն ստանալու մեխանիզմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի առնչությամբ պատասխանող նշում է, որ դրանով սահմանված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը նպաստում է իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, քանի որ հակառակ դեպքում դատաքննության ժամկետները կարող են ձգձգվել:

Բացի դրանից, նշված դրույթը որեւէ կերպ չի խոչընդոտում բողոքատուին ներկայացնել իր առարկություններն ու բացատրությունները: Ինչ վերաբերում է ապացույցներ ներկայացնելու արգելքին, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ վճռաբեկ դատարանում ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը սահմանափակում է միանգամայն իրավաչափորեն:

5. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետի սահմանադրականության հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշված հարցը դիտարկել պետության գործառությների, անձ-պետություն փոխհարաբերությունների համատեքստում:

Պետության ֆինանսական վերահսկողության գործառույթը փոխկապակցված է պետության տնտեսական եւ սոցիալական գործառույթների հետ եւ վերջիններիս հետ մեկտեղ ուղղված է պետության խնդիրների լուծմանն ու պետության առջեւ Սահմանադրությամբ առաջադրված նպատակներին հասնելուն: Վերջիններս ներառում են համընդիանութ բարորությունը, անհատի բարոյական, նյութական, ֆիզիկական բարեկեցությունը, սոցիալական առավելագույն պաշտպանվածությունը: Հարկային իրավահարաբերությունների՝ որպես հանրային բնույթի իրավահարաբերությունների, նկատմամբ մասնավորապես պետական վերահսկողության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գործառույթի միջոցով է, որ պետությանը հնարավորություն է ընձեռվում առավել արդյունավետ կերպով հասնելու վերը նշված նպատակներին: Հարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետական վերահսկողության գործառույթի միջոցով ապահովում է հարկերի հավաքագրման եւ բյուջեի մուտքերի ապահովման արդյունավետությունը եւ թափանցիկությունը, պետության տնտեսական կայունությունը:

Հարկային իրավահարաբերությունների կանոնակարգումն իրականացվում է հարկային իրավահարաբերությունների մասնակիցների համար փոխադարձ իրավունքների եւ պարտականությունների սահմանմամբ, որոնք ուղղված են ոչ միայն անհատական, այլ նաև հանրային շահերի երաշխավորմանը: Վերջինս դրսեւորվում է հարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետության ֆինանսական վերահսկողության գործառույթի իրականացման արդյունավետության ապահովմամբ, որն էլ, իր հերթին, ի թիվս այլոց, կարող է դրսեւորվել հարկատունների նկատմամբ որոշակի պարտականությունների սահմանմամբ: Տվյալ դեպքում ՀՀ սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե հարկատուի համար որոշակի պարտականություն սահմանելիս արդյոք ապահովել է տվյալ պարտականության իրավաչափությունը, ինչպես նաև ֆինանսական վերահսկողությունն իրականացնող մարմինների եւ հարկատունների պարտականությունների միջև հավասարակշռությունը՝ բացառելու հարկատունների համար անիրավաչափ պարտականություններ սահմանելը:

6. Վերը նշված հարցադրումների կապակցությամբ անհրաժեշտ է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետի սահմանադրականության հարցը դիտարկել ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի, 83.5. հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 45 հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով եւ չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»:

ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին կետի համաձայն, «Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ... ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը»:

Ըստ ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 2-րդ կետի, «Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ... ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի ... վճարման կարգը»:

Սահմանադրության վերը նշված դրույթները համակարգային առումով փոխապակցված եւ փոխարացնող դրույթներ են: Սահմանադրության

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

45 հոդվածով սահմանված նորմը չի նախատեսում եւ չի էլ կարող նախատեսել հարկային իրավահարաբերությունների կարգավորման մանրամասները, իսկ հարկեր վճարելու պարտականության բովանդակությունը որոշվում է օրենսդրի հայեցողությամբ:

Սահմանադրությամբ օրենսդիր իշխանությունն է օժտված հարկերի վճարման կարգը որոշելու իրավասությամբ: Ինչպես ցանկացած իրավունքի եւ պարտականության իրականացում, տվյալ դեպքում հարկային արտոնություններից օգտվելու իրավունքի եւ հարկեր վճարելու պարտականության իրականացումը ենթադրում է գործնթաց, որը ներառում է հիմնական իրավունքի կամ հիմնական պարտականության իրականացման ուղղված լրացուցիչ այլ իրավունքների եւ պարտականությունների առկայություն: Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ օրենսդիրն է սահմանում, թե ինչ գործողություններով է դրսեւորվում հարկեր վճարելու սահմանադրական պարտականության կատարումը: Այս իրավասության շրջանակներում օրենսդիրն օժտված է նաև այդ պարտականության կատարումն ապահովող արդյունավետ մեխանիզմի սահմանման լիազորությամբ, որը կապահովի, մի կողմից, տվյալ իրավունքի կամ պարտականության արդյունավետ իրականացումը, մյուս կողմից՝ հարկային արտոնությունից օգտվելու նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը, հարկերի վճարման սահմանադրական պարտականության կատարման բնագավառում հնարավոր չարաշահումների նկատմամբ հակազդումը, ինչպես նաև բյուջե հարկերի փոխանցման ու վճարման բազմափուլ գործընթացի մասնակից սուրյեկտների իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային արտոնությունից օգտվելու իրավունքի իրականացումն ըստ էության հարկեր վճարելու պարտականության կատարումն է եւ Սահմանադրության 45 հոդվածով սահմանված հարկեր վճարելու պարտականության կատարումն ապահովող արդյունավետ մեխանիզմի տարրը:

Սահմանադրության 45 հոդվածով սահմանված նորմին փոխադարձում են Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված նորմերը: Վերջիններիս վերլուծությունից բխում է, որ սուրյեկտիվ իրավունքների եւ հարկերի վճարման սուրյեկտիվ պարտականության իրականացումը չի կարող տեղի ունենալ կամայական ձեւով: Նման մոտեցումն ինքնանպատակ չէ, քանի որ ցանկացած սուրյեկտիվ իրավունք, այդ թվում՝ հարկերի վճարման սուրյեկտիվ պարտականություն առնչվում է այլոց իրավունքներին եւ պարտականություններին, ինչպես նաև սահմանադրուեն պահպանվող այլ արժեքներին եւ կարող է խոչընդութել դրանց իրականացումը կամ խախտել դրանք: Այդ հիմնավորմամբ է, որ Սահմա-

«ԱՎՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրությունը պարտավորեցնում է սուբյեկտիվ իրավունքները եւ պարտականություններն իրականացնել որոշակի պայմաններում եւ կարգով: Տվյալ դեպքում «կարգ» հասկացությունը ներառում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետով հարկատուի վրա դրված պարտականությունը, որն էլ ուղղված է անձի կողմից հարկային արտոնության իր սուբյեկտիվ իրավունքի, ինչպես նաև հարկերի վճարման պարտականության իրականացմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետով սահմանված պարտականությունը, որպես հարկային արտոնությունից օգտվելու սուբյեկտիվ իրավունք, հետեւաբար՝ հարկերի վճարման պարտականության իրականացման կարգի տարր, ապահովելով պետության ֆինանսական վերահսկողության գործառույթի արդյունավետ իրականացումը՝ հետապնդում է իրավաչափ նպատակ եւ չի կարող դիտարկվել որպես հարկատուի վրա դրված անիրավաչափ պարտականություն:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետը սահմանադրականության խնդիր չի առաջացնում, եւ հարկատուների համար սահմանված պարտականությունը համահունչ է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական, սոցիալական պետության հիմնարար սկզբունքներին, 89 հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ բյուջեի կատարումն ապահովելու՝ գործադիր իշխանության պարտականությանը: Հարկատուների համար սահմանված՝ քննարկվող պարտականության բացակայությունը, ընդհակառակն, անարդյունավետ կդարձներ հարկային պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ պետության վերահսկողական գործառույթի իրականացումը:

7. «Վարչարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով օրենքի I բաժնի գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա: Օրենքի 1-ին բաժնի 10-րդ հոդվածը, որպես վարչարարության սկզբունք, սահմանում է «հավաստիության կանխավարկածի» սկզբունքը: Վերջինիս նպատակը վարչական մարմինների եւ անձանց միջեւ փոխվստահության ձեւավորումն է, ինչպես նաև նրանց միջեւ իրավահավասարության ամրապնդումը: Ըստ 10 հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Նույն հոդվածի 2-րդ պարբերությունը միաժամանակ արգելում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկությունները, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով: Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, եթե օրենքներով սահմանվում է համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու պահանջ, անձը պարտավոր է դրանք ներկայացնել:

Տվյալ դեպքում «Վարչարության իիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությանը համահուն՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետով սահմանվել է անձանց՝ վարչական մարմնին փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը: Ընդ որում, այդ փաստաթղթերը ներկայացվում են ոչ թե վարչական մարմնի մոտ անձի ներկայացրած տվյալների վերաբերյալ ծագած կասկածների առկայությամբ վարչական մարմնի եւ անձի միջև ծագած վեճը լուծելու նպատակով, այլ որպես արտոնությունից օգտվող տնտեսավարող սուբյեկտի՝ հարկեր վճարելու սահմանադրական պարտականության բարեխիղճ կատարման բաղադրատարր, հետեւաբար՝ նաև իրավաչափ պարտավորության կատարման անհրաժեշտ պայման:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկատուի կողմից հարկերի վճարման իր սահմանադրական պարտականության բարեխիղճ կատարման նպատակով համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու փուլում գործում է հավաստիության կանխավարկածի սկզբունքը: Ներկայացված փաստաթղթերի կապակցությամբ վարչական մարմնի մոտ կասկած ծագելու դեպքում է միայն, որ ներկայացված տվյալների ոչ հավաստի լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Այսինքն՝ տվյալ դեպքում վարչական մարմնի կողմից ապացուցման բեռը կրելու պարտականություն կարող է ծագել միայն այն դեպքում, եթե հարկատուն փաստաթղթեր ներկայացնելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը կատարել է:

Ինչ վերաբերում է վարչական վարույթի ընթացքում ապացուցման բեռի բաշխմանը, ապա «Վարչարարության իիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գործում է նույն օրենքի 43 հոդվածը: Վերջինս վարչական վարույթում ապացուցման պարտականության բաշխում է կատարում՝ ելնելով նրանից, թե վարույթի ընթացքում ընդունվող ակտը վերջինիս համար բարենպաստ, թե ոչ բարենպաստ փաստական հետեւանքներ է ունենալու: Ըստ այդմ, վարչական վարույթում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ վերջինիս համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, եւ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների դեպքում: Օրենսդրական նման կարգավորումը նկատի է առ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նում, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությունը հնարավոր չէ վերապահել վարչական մարմնին, քանի որ, որպես կանոն, շահագրգիռ անձն է տեղյակ իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությանը, եւ նա է տիրապետում այդ հանգամանքներն ապացուցող տվյալների: Չնայած այն հանգամանքին, որ ստուգումը բարենպաստ ընթացակարգ չէ մասնավոր անձի համար, սակայն դրա շրջանակում իր հարկային արտոնությունները հիմնավորող փաստերը նրա դրությունը բարելավող, նրան արտոնող փաստական հանգամանքներ են, որոնց ապացուցման պարտականությունը կրում է ինքը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ համաձայն գործի նյութերի՝ իրավակիրառական պրակտիկայում հստակ չի տարանջատվում ապացուցման պարտականությունը վարչական վարույթում, եւ ապացուցման բեռք՝ վարչական դատավարությունում: Վարչական վարույթում ապացուցման պարտականությունը թեեւ ընդհանուր աղերսներ ունի վարչական դատավարությունում ապացուցման բեռի հետ, այն նույնական չէ վերջինիս հետ: Նմանությունն այն է, որ երկուսն էլ ունեն օբյեկտիվ բնույթ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, եւ երկուսն էլ վերաբերում են ապացուցման հարցի լուծմանը՝ ապացուցական անորոշության առաջացման դեպքերում: Սակայն վարչական դատավարությունում օրենսդրական լուծումներն այլ են՝ այստեղ խոսքը փաստական հանգամանքների բարենպաստ կամ ոչ բարենպաստ լինելու մասին չէ, այլ առավելապես վարչական մարմնի կարգավիճակ ունենալու մասին է, այն էլ ոչ բոլոր հայցատեսակների դեպքում (Վարչական դատավարության օրենսգրքի 26 հոդվածի 3-րդ մաս): Մասնավորապես, պարտավորեցման հայցի դեպքում, երբ խոսքն անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին է, ապա ապացուցման բեռք կրում է հայցվորը (ՎԴՕ 26 հոդվածի 2-րդ մաս՝ զուգակցված ՎԴՕ 25 հոդվածի 1-ին մասի հետ): Սակայն տվյալ դեպքում վարչական դատարանը վճիռ է կայացրել վիճարկման հայցի հիման վրա:

8. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «զ» կետի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի հիմնական փաստարկներն առնչվում են ՀՀ Սահմանադրության 21 հոդվածին եւ 22 հոդվածի 1-ին մասին:

ՀՀ Սահմանադրության 21 հոդվածն ամրագրում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ սահմանելով ապացուցման պարտականության բաշխման հիմնական կանոնը, որի համաձայն՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը սերտորեն առնչվում է Սահմանադրության 22

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ անձի դատական պաշտպանության իրավական երաշխիքներն ամրագրող 6-րդ հոդվածը՝ ընդհանրապես, եւ դրա 2-րդ կետում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի են ոչ միայն ներպետական օրենսդրությանը համապատասխան որպես քրեական հանցանք որպես պարքերի առնչությամբ հարուցված վարույթների նկատմամբ, այլև, պայմանավորված տվյալ արարքի բնույթով եւ նախատեսված պատասխանատվության տեսակներով ու խսությամբ, կարող են կիրառվել նաև վարչական եւ կարգապահական պատասխանատվության վարույթների նկատմամբ։ Սակայն վարչական կամ կարգապահական պատասխանատվության վարույթների առնչությամբ անմեղության կանխավարկածի եւ դրա հետ փոխկապակցված «լրելու իրավունքի» կիրառելիության հանգամանքը դեռևս բավարար պայման չէ վիճարկվող նորմը նշված սկզբունքի եւ իրավունքի ենթադրյալ խախտման տեսանկյունից քննության առարկա դարձնելու համար։ Այս առնչությամբ էական նշանակություն ունի «մեղադրանք», «մեղադրվող», «մեղադրվում է» հասկացությունների բովանդակությունը։ Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ «մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես «իրավասու մարմինների կողմից շահագրգիռ անձին ուղղված պաշտոնական ծանուցում առ այն, որ տվյալ անձը ենթադրաբար կատարել է տվյալ իրավախախտումը»։ Մեղադրանքը որոշ դեպքերում կարող է դրսեւորվել նաև այլ ձեւերով, սակայն, էականն այն է, որ այն **պետք է վկայի իրավախախտում կատարած լինելու ենթադրության մասին** (տե՛ս՝ Օգրուքն ընդդեմ Գերմանիայի գործով 1984թ. փետրվարի 21-ի վճիռը, Ozturk v. Germany):

Ըստ վերոգրյալի մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում եւ 22 հոդվածի 1-ին մասում ամրագրված սահմանադրական սկզբունքների բովանդակությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձն այդ սկզբունքների պաշտպանությունից սկսում է օգտվել միայն այն պահից սկսած, եթե նա տեղեկացվում է, որ իրավասու մարմինները իհմք ունեն ենթադրելու, որ նա կատարել է դատապարտելի արարք։ Հետեւաբար, անձը չի կարող օգտվել նշված սկզբունքների պաշտպանությունից, քանի դեռ իրավասու մարմինների մոտ չի ծագել ենթադրություն իր կողմից դատապարտելի արարք կատարած լինելու վերաբերյալ, եւ ինքը չի տեղեկացվել այդ ենթադրության առկայության մասին։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի եւ «քրեական մեղադրանք» հասկացության նշված բովանդակությունից եւ հաշվի առնելով, որ իրավասու մարմինների կողմից տնտեսավարող տուրքեկտին՝ վիճարկվող նորմում ամրագրված պարտականության կատարման պահանջ ներկայացնելու դեպքում որեւէ իրավախսատում կատարած լինելու ենթադրություն դեռևս առկա չէ՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 21 հոդվածով սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքը եւ դրա հետ փոխկապակցված՝ 22 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու պարտավորություն չկրելու սկզբունքը խնդրու առարկա իրավիճակում կիրառելի էն:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային արտոնությունների իրավունքը, ինչպես նաև առհասարակ հարկային պարտավորությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունն ամբողջությամբ բխում է հարկ մուծելու սահմանադրական պարտականությունից եւ ուղղված է այդ պարտականության բարեխիղճ կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

Վիճարկվող իրավադրույթը որեւէ հակասության մեջ չի մտնում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի հետ, քանի որ այն որպես ընդհանուր օրենքի նորմ չի կարող կիրառվել ինքնուրույն՝ առանց առանձին հարկատեսակներին վերաբերող օրենքների եւ հարկային արտոնություններից օգտվելու կարգը կոնկրետացնող ենթաօրենսդրական նորմների: Իսկ այդ ակտերի համատեքստում օրենքի այդ դրույթը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին: Չի կարող ընդհանուր օրենքը բոլոր բնագավառների եւ բոլոր հարկատեսակների համար սահմանել այն փաստաթղթերի տեսակները եւ ցանկը, որոնք անհրաժեշտ են ներկայացնել՝ բավարար է, որ այն նախատեսում է նման պարտականություն, որը պետք է կատարվի այլ օրենքներով եւ ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգով: Իսկ հատուկ օրենքների դրույթներ սահմանադրական դատարան ներկայացված դիմումում չեն վիճարկվում եւ սույն գործի շրջանակներում քննության առարկա չեն կարող դառնալ:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթի հակասությանը Սահմանադրության 33.1. հոդվածին, ապա հարկ է նշել, որ այն նպատակ ունի, ընդհակառակն, խթանելու ձեռնարկատիրական գործունեության իրականացումը եւ ազատ մրցակցության համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու՝ հարկային արտոնությունների կիրառման ընդհանուր կարգ սահմանելու միջոցով տնտեսապես ավելի հզոր սուրբեկտներին հակաշռություն միտումով: Իսկ որեւէ արտոնությունից օգտվելու համար իրավահավասարության սկզբունքի ուժով անհրաժեշտ է կատարել որոշակի ձեւական բնույթի պարտականություններ: Հարկերի մասին օրենքի վի-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ճարկվող դրույթը մասնավոր անձանց չի ծանրաբեռնում այնպիսի պարտականություններով, որոնք համարժեք հարաբերակցության մեջ չեն հարկային արտոնություններից օգտվելու հետ:

9. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանադրականության հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում այդ կետով նախատեսված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի վիճարկվող լիազորության իրավաչափությունը դիտարկել ՀՀ դատական իշխանության համակարգում վճռաբեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական տեղի եւ դերի, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ նրա սահմանադրական գործառույթի համատեքստում:

Այս հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-690 որոշման 11-րդ կետում արտահայտել է, մասնավորապես, հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... պետաշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, այդ թվում՝ նաև ՀՀ վճռաբեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ»: Այս դիրքորոշման համատեքստում պետական ցանկացած մարմնի կարող է տրվել այս կամ այն լիազորությունը, որն անհրաժեշտ է նրա առջեւ դրված խնդիրների լիարժեք լուծելու համար, եթե դրանք համապատասխանում են տվյալ մարմնի սահմանադրահրավական կարգավիճակին եւ սահմանադրորեն ամրագրված ու երաշխավորված արժեքներին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթին համարժեք դրույթ պարունակվում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, որի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը որոշակի դիրքորոշում է արտահայտել նույն հոդվածի 6-րդ կետի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ գործով իր՝ 2007 թվականի դեկտեմբերի 11-ի ՍԴՈ-720 որոշման 5-րդ կետի 3-րդ պարբերությունում: Համաձայն սահմանադրական դատարանի հիշյալ իրավական դիրքորոշման. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 3, 4 եւ 6 կետերով նախատեսված լիազորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանին նման լիազորություններ վերապահելը նպատակ է հետապնդել կանխելու այն դատական շրջապատույթը, որը գոյություն է ունեցել մինչ այդ: Այդ լիազորությունների միջոցով դատական շրջապատույթի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքն-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նույրյունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրափական պահանջի իրացումը, ինչպես նաև ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը»:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, նախատեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի խնդրու առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչները։ Այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լիազորությունը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները թույլ են տալիս վճռաբեկ դատարանին ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ կայացնելու, եւ եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից։

Հաշվի առնելով նշված իրավակարգավորման առկայությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը կարող է տեղի ունենալ բացառապես հետեւյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ, որոնք, մի կողմից, վճռաբեկ դատարանին պահում են իր սահմանադրափական կարգավիճակում, մյուս կողմից՝ երաշխավորում են արդար դատաքննության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները։ Դրանք են։

ա/ ՀՀ վճռաբեկ դատարանը հետազոտության առարկա չի դարձնում որեւէ փաստական հանգամանք, այլ իր սահմանադրափական կարգավիճակին համահունչ անդրադառնում է միայն իրավունքի հարցերին,

բ/ ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները պետք է հնարավորություն տան վճռաբեկ դատարանին կայացնելու ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ,

գ/ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը պետք է բխի արդարադատության արդյունավետության շահերից,

դ/ այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն ստորադաս դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը։

Նման գործերի քննության ժամանակ պետք է հաշվի առնվեն նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227 հոդվածով նախատեսված դատավարության սկզբունքները։

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ի թիվս այլոց, ենթադրում է նաև խնդրու առարկա հայեցողական լիազորու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյունից օգտվելիս արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորումը՝ որպես այդ լիազորության կիրառման իրավաչափության երաշխիք: Մինչդեռ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ այդ պահանջին մի շարք դեպքերում ձեռական մոտեցում է ցուցաբերվում: Վերջինս, սակայն, ոչ թե օրենքի դրույթի սահմանադրականության, այլ հիմնավորված կիրառելու խնդիր է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկվող հայեցողական լիազորությունն իրականացնելիս դրա կիրառման իրավաչափությունը կարող է ապահովվել, եթե վճռաբեկ դատարանը հիմնավորում է արդարադատության արդյունավետության այն շահի առկայությունը, որը հիմք է հանդիսանում նշված լիազորությունից օգտվելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածի «զ» կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 սեպտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ-832



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԵՎ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.7 ՀՈԴՎԱԾԻ, 426.2
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 426.4 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

13 հոկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ա. Զեյնալյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դոճքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ա. Զեյնալյանի եւ Վ. Խաչատրյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի, 426.2 հոդվածի 2-րդ մասի եւ 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Զեյնալյանի եւ Վ. Խաչատրյանի՝ 26.03.2009թ. եւ Վ. Խաչատրյանի՝ 19.05.2009թ. ՀՀ սահմա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրական դատարան մուտքագրված դիմումներն են, որոնց հիման վրա, դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով, մինչեւ դատաքննությունն սկսելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Յ Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոքներկայացնելու իրավունք ունեն միայն այդ հանգամանքի հետ առնչվող գործին մասնակցած շահագրգիռ անձինք, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի»:

Օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Նոր հանգամանքների հետեւանքով դատական ակտերը վերանայվում են հետեւյալ դեպքերում.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով՝ դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել.

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից այդ դատարանի հիմնադրման կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրին համապատասխան՝ այդ դատարանը դատավճիռ կամ որոշում է կայացրել, որով հիմնավորվում է, որ տվյալ քրեական գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության դատարանը բոլոր է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտում.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերում»:

Օրենսգրքի վիճարկվող 426.7 հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«Նոր հանգամանքների հիմքով շահագրգիռ անձի փոխարեն բողոք կարող է ներկայացնել նրա լիազորած անձը, որը բողոքի հետ միաժամա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նակ դատարան պետք է ներկայացնի նաեւ իր լիազորությունները հաստատող փաստաբուղբը: Շահագրգիռ անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը»:

Քաղաքացի Վ. Խաչատրյանի դիմումը սահմանադրական դատարանի բիկ 2 դատական կազմի՝ 01.06.2009թ. որոշմամբ քննության է ընդունվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի միայն 2-րդ կետի առնչությամբ: Սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ նաեւ վիճարկվող նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրաբավական բովանդակության հարցին:

2. Ինչպես Ա. Զեյնալյանի եւ Վ. Խաչատրյանի միացյալ դիմումի, այնպես էլ Վ. Խաչատրյանի դիմումի հիման վրա քննության ընդունված եւ միավորված գործերի դատավարական նախապատությունը հանգում է հետեւյալին: Վ. Խաչատրյանը 2008թ. հուլիսի 23-ին դիմել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա «ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2003թ. ապրիլի 7-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը» վերանայելու բողոքով: Դատարանը 2008թ. օգոստոսի 7-ին կայացրել է «Դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին» որոշում: Վերջինս բողոքարկվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը վկայակոչելով օրենսգրքի 426.7 հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ Ա. Զեյնալյանին չի ճանաչել որպես վերաքննիչ բողոք բերողի ներկայացուցիչ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 01.10.2008թ. կայացրել է որոշում, որով օրինական ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը: ՀՀ վերաքննիչ դատարանի նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 19.11.2008թ. որոշմամբ բողոքը թողել է առանց քննության: Ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանի որոշումները հիմնվել են այն պատճառաբանության վրա, որ դիմողը որպես իր վերաբերյալ դատական ակտի վերանայման հիմք է մատնանշել Եվրոպական դատարանի վճիռը, որով արձանագրվել է ոչ թե կոնկրետ դիմոնի, այլ մեկ այլ անձի իրավունքի խախտման փաստը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Օրենսգրքի 426.7 հոդվածի սահմանադրականության առնչությամբ դիմողները փաստարկում են, որ այդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ «Ծահագողիո անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը», հակասում է ՀՀ Սահմանադրության 14.1., 18 եւ 19 հոդվածների պահանջներին: Եթե նման պահանջի նպատակը դատարան ներկայացվող դիմումի մասնագիտական որակի ապահովումն է, ապա այդ նպատակը, ըստ դիմողների, «ի չիք է դառնում, եթե առկա է դիմողի՝ առանց երրորդ անձի (այդ թվում փաստաբանի) դիմելու անհրաժեշտության անմիջականորեն դատարան դիմելու իրավունքը»: Վիճարկվող դրույթում ամրագրված պահանջն այն պայմաններում, երբ շահագրգիռ անձանց համար երաշխավորված չէ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, սահմանափակում է դատարանի մատչելիության՝ անձի իրավունքը:

Դիմող Վ. Խաչատրյանի պնդմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասում եւ 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ մասերում ամրագրված դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 6, 22, 18, 19 եւ 43 հոդվածներին: Այդ հակասությունը, ըստ դիմողի՝ դրսեւորվում է նրանում, որ վիճարկվող նորմերը թույլ չեն տալիս սահմանադրական դատարանի որոշման եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա վերանայել համանման իրավախախտման արդյունքում տուժած անձանց վերաբերյալ դատական ակտը: Դիմողը գտնում է, որ ներպետական մակարդակում Եվրոպական դատարանի վճռի հիման վրա պետք է ապահովվի ոչ միայն այն անձի վերաբերյալ դատական ակտի վերանայումը, որի գանգատի հիման վրա տվյալ վճիռը կայացվել է, այլ նաև այլ անձանց վերաբերյալ դատական ակտերը, որոնց առնչությամբ թույլ է տրվել իրավունքի նույն խախտումը: Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասում «... միայն այդ հանգամանքի հետ առնչվող գործին մասնակցած շահագրգիռ անձինք ...» դրույթը՝ այնպես, ինչպես դա կիրառվում է ու իրավակիրառական պրակտիկայով իմաստ է ստացել, լուրջ խոչընդոտներ է հարուցում ՄԻԵԴ-ի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման եւ պաշտպանության, հետեւարար՝ նաև ՄԻԵԴ-ի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմող կողմի դիրքորոշումն անընդունելի է, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2000 թվականի հունվարի 19-ի R(2000)2 հանձնարարականի 13-րդ կետում ամրագրված դրույթների պա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հանջներին համապատասխան պատասխանող պետությունը պարտավոր է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռների հիման վրա վերանայել միայն այն գործերը, որոնցով արձանագրվել է Կոնվենցիայի խախտում, հետեւաբար, ինչպես կարծում է պատասխանող կողմը, սահմանադրական դատարանի ՍԴՈ-751 որոշման եզրահանգումները կիրառելի չեն սույն գործով, եւ դիմոր կողմի մատնամշած՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով դիմոր Վ. Խաչատրյանի վերաբերյալ գործով չի կարող հանդիսանալ նոր հանգամանք հավաստող ապացույց: Այս հիմնավորմամբ պատասխանող կողմը գտնում է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասն ու 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդիրներ չեն առաջացնում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ պատասխանող կողմը գտնում է, որ «շահագրգիռ անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը» դրույթում որեւէ խտրականության մասին խոսք չի գնում», եւ օրենքը սույն նպատակ է հետապնդում քաղաքացու իրավունքների ու շահերի պաշտպանությունն իրականացնել համապատասխան որակավորում ունեցող անձի միջոցով, «որը կբարձրացներ այդ նույն իրավունքների շահերի պաշտպանության արդյունավետությունը»:

Պատասխանող կողմը միաժամանակ արտահայտում է այն կարծիքը, թե «... այլ հարց է, թե որքանո՞վ է ներկա պայմաններում նման սահմանափակումը օգնում վերը նշված նպատակների իրականացմանը ...»: Ըստ պատասխանողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերոհիշյալ նորմի նախատեսումն արդարացված է եւ բխում է բողոք բերած անձի շահերից, իսկ կիրառված պողիտիվ խտրականությունը համաշափ է եւ ողջամիտ, քանի որ տեսական ու պրակտիկ համապատասխան գիտելիքներ ունեցող փաստաբանը կարող է առավելագույնս արդյունավետ ձեւով ներկայացնել իր վստահորդի շահերը:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել նոր հանգամանքների հիմքով քրեական գործերով դատական ակտերի վերանայման վարույթի բնորոշ առանձնահատկությունները՝ ելնելով դիմողների հարցադրումների բովանդակությունից, հաշվի առնելով նաեւ, որ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-701, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767 որոշումներով անդրադարձել է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի էությանն ու բովանդակությանը, դրա կիրառման եւ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսդրական կարգավորման արդյունավետության ու սահմանադրականության խնդիրներին:

Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն ըստ էության ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում իր ամրագրումն ստացավ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 14.12.2004թ. ՀՕ-57-Ն ՀՀ օրենքով, համաձայն որի՝ այդ օրենսգիրքը լրացվեց 408.1, 410.1 հոդվածներով, որոնք համապատասխանաբար սահմանում էին նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու հիմքերը եւ վարույթ հարուցելու կարգը: 28.11.2007թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով նշված հոդվածները ճանաչվեցին ուժը կորցրած եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվեց «Դատական ակտերի վերանայումը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով» վերտառությամբ 12.1 բաժնով: Արդյունքում, նշված օրենքով լրացված օրենսգրքի 426.4 հոդվածը որպես նոր հանգամանք է դիտարկում ՀՀ սահմանադրական դատարանի՝ տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին որոշումը, ինչպես նաև, ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից այդ դատարանի հիմնադրման կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրին համապատասխան՝ այդ դատարանի ակտը, որով հիմնավորվում է, որ տվյալ քրեական գործի քննության ժամանակ ՀՀ դատարանը բույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին, քանի որ դրանք պարտադիր իրավաբանական ուժ ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում:

Անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի բովանդակությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-767 որոշմամբ արձանագրելով քաղաքացիական եւ քրեական գործերով այդ ինստիտուտի իրավակարգավորման ընդհանությունները, կարեւորել է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիարժեք եւ արդյունավետ համակարգի առկայությունը քրեական դատավարության շրջանակներում, ենելով այն իրողությունից, որ «քրեական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն առանձնակի նշանակություն ունեն՝ հաշվի առնելով անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայության հանգամանքը»: Հետեւարար, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հնարավոր ու անհրաժեշտ է համարում քրեական գործերով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինս-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տիտուտի իրավակարգավորման սահմանադրականությունը միաժամանակ զնահատել ինչպես այդ ակտերի վերանայման նախատեսված հիմքերի, այնպես էլ այդպիսի գործերով շահագրգիռ անձանց ներկայացուցչության ինստիտուտի իրավակարգավորման սահմանադրականությունը զնահատելու միջոցով: Սահմանադրական դատարանը միաժամանակ կարեւում է քրեական եւ քաղաքացիական գործերով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման օբյեկտիվ առանձնահատկությունների օրենսդրական հստակ ամրագրումն այնքանով, որքանով այն անհրաժեշտ է անձանց խախտված իրավունքների ու ազատությունների (թե՛ սահմանադրական եւ թե՛ Սարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների (այսուհետ՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներ)) ներպետական արդարադատական (ընդհանուր դատական եւ սահմանադրական-արդարադատական) եղանակով արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար:

6. Նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու հիմքերի, ինչպես նաև այդ հանգամանքների հիմքով վարույթ հարուցելու գործող օրենսդրական կարգի ուսումնասիրությունը վկայում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի նպատակը, ինչպես արձանագրվել է նաև սահմանադրական դատարանի վերոհիշյալ համապատասխան որոշումներում, հակասահմանադրական ճանաչված օրենքի կիրառման հետեւանքով անձանց խախտված սահմանադրական եւ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների վերականգնումն է: Այսինքն՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն անձանց խախտված իրավունքների վերականգնման իրավական կարեւոր միջոց է: Վերջինիս իրավական բովանդակությունը, սույն գործի շրջանակներում, թույլ է տալիս հատկանշել քրեական եւ քաղաքացիական դատավարության շրջանակներում կարգավորման հետեւյալ սկզբունքային առանձնահատկությունները.

- նոր հանգամանքներով վարույթ հարուցելու նախաձեռնության դրսեւումն անձինք (շահագրգիռ անձը, վերջինիս ներկայացուցիչը) պետք է օժտված լինեն միեւնույն կարգավիճակով (համարժեք իրավունքներով եւ պարտականություններով), որպիսի հանգամանքը վիճարկվող նորմերում հաշվի է առնված,

- նոր հանգամանքներով վարույթի իրավակարգավորումը, գլխավորապես, թելադրված կամ պայմանավորված չպետք է լինի քրեական կամ քաղաքացիական դատավարության առանձնահատկություններով, մասնավորապես՝ այդ վարույթի իրավակարգավորման առանձին տարրեր չեն

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կարող բացառապես հիմնավորվել կամ արդարացվել դատավարության այս կամ այն տեսակի էությամբ եւ առանձնահատկություններով,

- պայմանավորված վերոհիշյալ հանգամանքներով՝ ՀՀ քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման կարգը, ըստ էության, պետք է երաշխավորի անձանց խախտված իրավունքների եւ ազտությունների արդյունավետ վերականգնման համարժեք հնարավորություն:

7. Քրեական գործով վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ փաստաբանի մասնակցության անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես մրցակցային դատավարության շրջանակներում մեղադրանքը հերքող, ամբաստանյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը եւ դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքների բացահայտման եւ դատարանին ներկայացնելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի նպատակը անձանց խախտված իրավունքների (սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված) վերականգնման հնարավորության եւ ոչ թե քրեական մեղադրանքի հարցի լուծումն է:

Օրենսդրի տարբերակված մոտեցումը՝ քրեական վարույթում շահագրգիռ անձանց ներկայացուցչության ինստիտուտի իրավակարգավորման եւ բացառապես փաստաբանին որպես լիազորված անձ նախատեսելու հարցում, պայմանավորված է նաև սահմանադրական դատարանի կամ միջազգային դատարանի համապատասխան ակտի հիման վրա անձանց շահերը ներկայացնելու խնդրում մասնագիտական պատշաճ մակարդակ ապահովելու անհրաժեշտությամբ, որն անհրաժեշտ եւ իրավաչափ պայման է՝ այդ վարույթում անձանց իրավունքների արդարադատական արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի 4-րդ մասի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատել նաև նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վերաբերյալ բոլոր ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման իրավական հնարավորության տեսանկյունից, որը սահմանադրական դատարանի ՍԴՈ-756 որոշման համաձայն կարեւոր չափանիշ է իրավաբանական օգնություն ստանալու՝ անձի սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացման գործող երաշխիքները գնահատելու տեսանկյունից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսգիրքը չեն երաշխավորում փաստաբանական անվճար ծառայություն այն անձանց համար, ովքեր ի վիճակի չեն անվճարունակության կամ այլ հիմքով ապահովելու իրենց շահերի պաշտպանությունը։ Մասնավորապես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածը՝ ի դեմս պետության, երաշխավորում է անվճար իրավաբանական օգնություն (համրային պաշտպանություն) խիստ սահմանափակ դեպքերում։ «...քրեական գործերով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ նախատեսված դեպքերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ... դեպքերում»։

Սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշմամբ բացահայտելով իրավաբանական օգնության իրավունքի սահմանադրաբանական բովանդակությունը՝ ընդգծել է, որ «ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է նախ, որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորություն, եւ երկրորդ, պետության պարտականությունը՝ ապահովելու այդպիսի անվճար օգնություն՝ կարիք ունեցող անձանց համար։ Պետության նշված պարտականությունը նաև ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատավարության համապատասխան (այդ թվում նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման) փուլում անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն, կամ այն բխում է դատավարության շահերից, ապա յուրաքանչյուր կարիքավոր անձ պետք է իրավունք եւ երաշխավորված հնարավորություն ունենա ստանալու այդպիսի օգնություն։ Ընդ որում, որպես այդպիսի կարիքի զնահատման չափանիշ առաջին հերթին կարեւորվում է անձի վճարունակության մակարդակը։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ անհրաժեշտության դեպքում պետության հաշվին անձին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես ընդհանուր կանոնից բացառություն՝ արդյունքում գործով շահազրգիո կարիքավոր անձանց առնչությամբ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու օրենքով խիստ մասնավոր դեպքեր նախատեսելու համար։

Հետեւարար, վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաշափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական եւ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու միջոցով վերականգնման հնարավորությունը՝ վտանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի եւ թե՛ իր խախտված իրավունքները միջազգային ատյաներում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը:

Սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է դատավարության մասնակից ճանաչելու պահանջի իրավունքի եւ այն խախտվելիս վերականգնելու երաշխիքների (մասնավորապես՝ դատական կարգով) վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100 հոդվածում ամրագրված նորմերի ընդհանուր իրավակարգավորիչ նշանակությունն ու դրանց տրամարանական զարգացման անհրաժեշտությունը քրեական դատավարության բոլոր, այդ թվում նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլում (ներառյալ այն դեպքերը, երբ համապատասխան միջնորդությունը մերժվել է միջանկյալ դատական ակտով, հատկապես, երբ այդ ակտով ուղղակի շոշափվում են անձի սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները):

Հետեւաբար, անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 426.7 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության խնդրին, դատարանը դիմող կողմի փաստարկները համարում է հիմնավոր, միաժամանակ հաստատագրում, որ խնդրի լուծումը պահանջում է համայիր իրավակարգավորում՝ կապված նաեւ դատավարության մյուս փուլերում երաշխավորված անվճար իրավաբանական օգնության տրամադրման՝ օրենքով նախատեսված հիմքերի ընդարձակման հետ: Դատարանը վերահաստատում է իր ՍԴՈ-765 որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի. «... փաստարանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, եթե բխում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցությունն իրականացնելով արիեստավարժ եւ փորձառու մասնագետների միջոցով ... միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստարանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, եթե օրենսդրությունը փաստարանի ծառայությունից օգտվելու հմարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձանց փաստարանական ծառայությամբ ապահովելու իրավակարգավորման համանան սկզբունքի կիրառումն անհրաժեշտ է քրեական վարույթի բոլոր՝ այդ թվում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերը վերանայելու փուլում: Այս համատեքստում ել ՀՀ Ազգային ժողովի իրավասության խնդիրն է

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ դատավարական օրենսգրքերում եւ համապատասխան այլ օրենքներում նախատեսել գործով շահազրգիո եւ կարիքավոր անձանց իրավաբանական (փաստաբանական) անվագար օգնություն տրամադրելու առավել լայն երաշխիքներ:

8. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերում ամրագրված դրույթների սահմանադրականությանը՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդիրը դիտարկել նախ՝ ՍԴՈ-751 որոշման պահանջների եւ իրավական դիրքորոշումների տեսանկյունից: Սահմանադրական դատարանն իր որոշումների իրավական հետեւանքների եւ դրանց հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի կիրառման պրակտիկան ուսումնասիրելով՝ արձանագրել է, որ դատարանների կողմից վերանայվում են միայն այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա սահմանադրական դատարանն ընդունել է օրենքի կիրառված դրույթի՝ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում եւ նշել, որ նման իրավակիրառական պրակտիկան «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասում ամրագրված՝ «դիմող» եզրույթի բովանդակությանը սահմանափակ մեկնաբանություն հաղորդելու արդյունք է: Սահմանադրական դատարանը վերոհիշյալ որոշմամբ շեշտել է, որ «տվյալ դեպքում «դիմող» հասկացությունը պետք է մեկնաբանվի լայն իմաստով եւ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը պետք է օրենսդրուեն երաշխավորված լինի», եւ նշել է, որ սահմանադրական դատարանի միջոցով տրամադրվող իրավական պաշտպանությունից օրենքով սահմանված վեցամյա ժամկետում օգտվելու հնարավորությունը լիարժեք կարող է ապահովել միայն այն դեպքում, եթե սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաև այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմունների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը (ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 5-րդ մասի պահանջից): Հետեւարար, սահմանադրական դատարանն ընդգծել է օրենսդրի պարտականությունը՝ սահմանել նոր հանգանաքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը երաշխավորի անձի՝ Սահմանադ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բության 101 հոդվածի 6-րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը։ Սահմանադրական դատարանը նշել է, որ «անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասերի ուժով։ Դրանով իսկ կարեւորվել է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը լիարժեք հնարավորություն կընձեռի անձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը։

Հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայումը՝ որպես անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության միջոց, սահմանադրական դատարան դիմելու (ՀՀ Սահմ. 101 հոդվածի 6-րդ կետ) միջոցով անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության իրավունքի բաղադրատարն է, սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձինք իրենց նկատմամբ կայացված դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու իրավունքից կարող են օգտվել, եթե իրացրել են սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը (այսինքն՝ առկա է սահմանադրական դատարանի որոշումը՝ անձանց նկատմամբ կիրառված օրենքը Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ) կամ սահմանադրական դատարանի նոր հանգամանք հանդիսացող որոշման կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դատաքննությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդպիսի իրավունքն օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու պոտենցիալ հնարավորություն։

Վերահաստատելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա համանման գործերով դատական ակտերի նոր հանգամանքներով վերանայման հնարավորությունը պետք է քննարկվի, մի կողմից՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետության ապահովման, մյուս կողմից՝ իրավական որոշակիության եւ իրավական անվտանգության սկզբունքների երաշխավորման անհրաժեշտության տեսանկյունից, որոնք պահանջում են սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հնարավորության իրացման ժամկետային որոշակի սահմանափակում:

Հետեւաբար, վերոհիշյալ վեցամսյա ժամկետի ավարտից հետո ընդունված դատական ակտով շահագրգիռ անձը չի կարող սահմանադրական դատարանի որոշման հիման վրա իրացնել նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իր իրավունքը:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանը զնահատում է ելեկով իր ՍԴՈ-751 որոշմամբ արտահայտված, ինչպես նաև վերոհիշյալ դիրքորոշումներից եւ գտնում, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա քրեական գործերով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման գործող իրավակարգավորումը լիարժեք չի երաշխավորում շահագրգիռ անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

9. Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովն առաջմ չի անդրադարձել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական վերակարգավորման խնդրին, որն էական խոչընդուն է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում շահագրգիռ անձանց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու համար:

Սահմանադրական դատարանը մատնանշում է նաև ՍԴՈ-751 որոշման պահանջների, դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացման անհրաժեշտությունը դատական պրակտիկայում: Դատարանների իրավակիրառական համապատասխան պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա առավելապես վերանայվում են այն անձանց վերաբերյալ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա կայացվել է սահմանադրական դատարանի՝ նոր հանգամանք հանդիսացող որոշում:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան միարժեք վկայում է, որ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումներում սահմանադրության կամ օրենքի նորմի իրավական բովանդակության բացահայտման (մեկնաբանման) միջոցով արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր բնույթ ունեն ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար:

10. Միաժամանակ, ելեկով սույն գործով դիմու եւ պատասխանող կողմերի դիրքորոշումներից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրեն-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ սահմանադրական դատարանի որոշումները, որպես կանոն, չունեն հետադարձ ուժ և չեն տարածվում մինչ սահմանադրական դատարանի որոշման ընդունումը ծագած եւ դատական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա: Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերը նախատեսում են վերոհիշյալ ընդիհանուր կանոնից բացառություններ՝ տարբերակված մոտեցում դրսեւորելով քաղաքացիական դատարանի հարաբերությունների առնչությամբ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 13-րդ մասում նախատեսված բացառության համաձայն քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա, առանց որեւէ ժամկետային սահմանափակման, վերանայման են ենթակա այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված բոլոր դատական եւ վարչական ակտերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 426.2 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը՝ «բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով ... նախատեսված դեպքերի» ձեւակերպմամբ նաեւ հաշվի է առել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 13-րդ մասով նախատեսված բացառությունը՝ ապահովելով նշված նորմով նախատեսված՝ սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա այն անձանց վերաբերյալ դատական ակտերի վերանայումը, ովքեր տվյալ գործով սահմանադրական դատարանում դատավարության կողմ չեն հանդիսացել:

11. Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական մակարդակում, ի լրումն տվյալ վճռի կոնկրետ հասցեափրոց, նաեւ համանման իրավախստման արդյունքում տուժած այլ անձանց վերաբերյալ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վերաբերյալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նախատեսված դրույթի սահմանադրականությանը, ապա սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նպատակի, Կոնվենցիայի առաջին հոդվածին համապատասխան մասնակից պետությունների ստանձնած ընդիհանուր պարտավորության եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) առաքելության ու գործառությների համատեքստում՝ համադրելով այն ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 4-րդ մա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սում եւ 19 հոդվածում ամրագրված իրավունքների սահմանադրախրավական բռվանդակության հետ:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 4-րդ մասում ամրագրված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու անձի սուբյեկտիվ իրավունքը՝ որպես այդ իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային իրավական կարեւոր միջոց: ՀՀ քրեական դատավարության վիճարկվող նորմի համատերատում, անձի սահմանադրական այդ իրավունքն իրացվում է արդարադատական եղանակով, այսինքն՝ դատարան դիմելու միջոցով՝ հանդիսանալով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով երաշխավորված անձի իրավունքի դրսեւորման առանձնահատուկ ձեւ եւ իրականացվում է Կոնվենցիայում (կից համապատասխան արձանագրություններով) սահմանված ընթացակարգով:

Կոնվենցիայի նպատակն է մարդու իրավունքների պաշտպանությունը եւ ժողովրդավարական հասարակության զաղափարների եւ արժեքների պահպանումը: Կոնվենցիայում եւ դրան կից արձանագրություններում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը սահմանադրական դատարանը գնահատել է իր ՍԴ-350 որոշմամբ եւ նշել, որ Կոնվենցիայի նշանակած նպատակին համապատասխան մասնակից պետությունները, այդ թվում՝ նաև Հանրապետանի Հանրապետությունը, պարտավոր են ապահովել Կոնվենցիայի I բաժնում սահմանված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար: Կոնվենցիայի 19 հոդվածի համաձայն՝ Եվրոպական դատարանը հիմնվել է Կոնվենցիայով և կից արձանագրություններով անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Այդ գործառույթը Եվրոպական դատարանը կատարում է միջազետական գանգատների, անհատական գանգատների եւ Կոնվենցիայի մեկնարանության հետ կապված խորհրդատվական եզրակացություններ տալու միջոցով:

Եվրոպական դատարանի՝ կոնկրետ անհատական գանգատի վերաբերյալ կայացրած յուրաքանչյուր վճիռ ուղղված է ոչ միայն տվյալ անձի իրավունքների պաշտպանությանը, այլև՝ պատասխանող պետության կողմից Կոնվենցիայով ստանձնված այս կամ այն պարտավորության կատարումն ապահովելուն: Տվյալ պարտավորության կատարումը պատշաճ երաշխավորելու համար հաճախ բավարար չէ միայն անհատական գանգատ ներկայացրած անձի իրավունքների վերականգնումը, եթե խնդիրն առնչվում է ներպետական իրավական համակարգի այնպիսի բարեփոխումների իրականացման անհրաժեշտությանը, որոնք կոչված լինեն

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ապահովելու մարդու՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանություն: Հետեւարար, անհատական գանգատմերը եւ Եվրոպական դատարանի կողմից դրանք քննության ընդունելու արդյունքում կայացված որոշումները հաճախ իրավական այն միջոցներն են, որոնք մատնանշում են ներպետական համակարգում իրավակարգավորման, իրավակիրառական (այդ թվում՝ դատական) պրակտիկայի կատարելազորդման կոնկրետ ուղիներ:

Սահմանադրական դատարանն իր ՍԴ-758 որոշմամբ արձանագրել է, որ «... Եվրոպական դատարանի պրակտիկայում հետեւողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ ուղենիշ (ուկավար) վճիռների ինստիտուտը ... Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները եւ ենելով ուղենիշ վճիռների հիման վրա ներպետական մակարդակում Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնացն անհետեւանք»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՍԴ-758 որոշմամբ արտահայտված իրավական վերոհիշյալ դիրքորոշումները դեռևս մնացել են անհետեւանք:

Վերահաստատելով ՍԴ-758 որոշմամբ արտահայտած իր վերոհիշյալ դիրքորոշումները, հաշվի առնելով Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների բովանդակությունը, դրանցով հետապնդվող հանրային-իրավական նպատակն ու կարեւորությունը՝ կատարելազորդելու մարդու իրավունքների պաշտպանության ներպետական իրավական համակարգը, նաև հաշվի առնելով Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական իրավահամակարգի կատարելազորդման անհրաժեշտության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (2004)3 հանձնարարականի դրույթները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է նախատեսել օրենսդրական կարգավորման այնպիսի միջոցներ, որոնց առկայությամբ կերաշխավորվի ոչ միայն Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավահամակարգային բնույթի բարեփոխումների իրականացումը, այլև այն անձանց՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների դատական կարգով արդյունավետ պաշտպանության ապահովումը, ովքեր Եվրոպական դատարանի կողմից համապատասխան վճռի կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դատարներությունն սկսելու օրվա դրույթամբ) ունեցել են այդ իրավունքը Կոնվենցիայով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 101 հոդվածի 6-րդ կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1, 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասը եւ դրա հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, ովքեր տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու պոտենցիալ հնարավորություն:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**13 հոկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 833**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐԱՄ ՔԱՐԱՄՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄՆ ՎՐԱ՝ «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 25 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

20 Խոկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողներ Ա. Քարամյանի, Հ. Հայրապետյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արամ Քարամյանի եւ Հայկ Հայրապետյանի դիմումների հիման վրա՝ «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ Արամ Քարամյանի եւ Հայկ Հայրապետյանի դիմումների հիման վրա քննության ընդունված դիմումները վերաբերում են նույն հարցին, իր՝ 08.06.2009թ. աշ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Խատակարգային որոշմամբ որոշել է դրանք միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

Գործի քննության առիթն Արամ Ջարամյանի եւ Հայկ Հայրապետյանի՝ 20.05.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Փախստականների մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթորերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Փախստականների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1999 թվականի մարտի 3-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 1999 թվականի մարտի 27-ին եւ ուժի մեջ մտել 1999 թվականի ապրիլի 11-ին (ՀՕ-288):

Օրենքի՝ «1988-1992 թվականներին Հայաստանի Հանրապետություն բռնագաղթված անձանց մասին» վերտառությամբ 25 հոդվածն իր սկզբնական խմբագրությամբ սահմանել է. «Սույն օրենքի այն նորմերը, որոնք սահմանափակում են փախստականի կարգավիճակ հայցողների իրավունքները, չեն տարածվում 1988-1992 թվականներին Հայաստանի Հանրապետություն բռնագաղթված անձանց վրա»: Հետագայում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի մարտի 3-ին ընդունված՝ ««Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 11 հոդվածով «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածը փոփոխվել է եւ շարադրվել հետեւյալ խմբագրությամբ. «1988-1992 թվականներին Աղբքեցանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթված եւ փախստականների հարցերով գրադիոդ պետական մարմնում որպես փախստական հաշվառված անձինք հանդիսանում են փախստական՝ սույն օրենքի իմաստով»:

Ավելի ուշ՝ 2008 թվականի նոյեմբերի 27-ին, ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՕ-211-Ն ՀՀ օրենքը, որի 65 հոդվածի երկրորդ մասի ուժով 2009 թվականի հունվարի 24-ից ուժը կորցրել է «Փախստականների մասին» 1999 թվականի մարտի 3-ի ՀՕ-288 ՀՀ օրենքը:

Դիմողները սահմանադրական դատարանում վիճարկում են «Փախստականների մասին» ՀՀ օրենքի՝ 2004 թվականի մարտի 3-ի ՀՕ-49-Ն օրենքի խմբագրությամբ 25 հոդվածը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Արամ Քարամյանի դիմումի առնչությամբ քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ Ա. Քարամյանը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միզրացիոն գործակալության՝ իրեն որպես փախստական «Հանակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում հաշվառելու և համապատասխան տեղեկանք տրամադրելու պահանջների մասին:

Հայկ Հայրապետյանի դիմումի առնչությամբ քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ Հ. Հայրապետյանը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միզրացիոն գործակալության՝ իրեն որպես փախստական ճանաչելու և որպես փախստական «Հանակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում հաշվառելու պահանջների մասին:

Վարչական դատարանի՝ 06.10.2008թ. թիվ ՎԴ /3334/05/08 և թիվ ՎԴ /2008/05/08 վճիռներով վերոնշյալ երկու հայցերն ել բավարարվել են:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի ներկայացրած վճռաբեկ բողոքների հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 13.03.2009թ. թիվ ՎԴ /3334/05/08 և թիվ ՎԴ /2008/05/08 որոշումներով վարչական դատարանի՝ 06.10.2008թ. թիվ ՎԴ /3334/05/08 և թիվ ՎԴ /2008/05/08 վճիռները բեկանվել են և փոփոխվել՝ Արամ Քարամյանի և Հայկ Հայրապետյանի հայցերը մերժվել են:

ՀՀ վճռաբեկ դատարանը՝ վկայակոչելով տվյալ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի դրույթները, ինչպես նաև մեկնարանելով նույն օրենքի 25 հոդվածի դրույթները, գտել է, որ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար հիմք են հետեւյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

ա/ 1988-1992 թվականներին Աղբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթված լինելը,

բ/ փախստականների հարցերով զբաղվող պետական մարմնում որպես փախստական հաշվառված լինելը:

Միաժամանակ, վերոնշյալ իրավական դիրքորոշման շրջանակներում հիմք ընդունելով այն փաստը, որ Աղբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն են բռնագաղթել դիմողների ծնողները, իսկ դիմողները ծնվել են Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դիմոդները 1988-1992 թվականներին Աղբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթված անձինք չեն, իսկ նրանց ծնողների բռնագաղթված լինելու հանգամանքը

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հիմք չէ «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի ուժով դիմողներին փախստական ճանաչելու մասին:

3. Դիմողներն օրենքի 25 հոդվածը վիճարկում են փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխայի կարգավիճակի տեսանկյունից: Հստ դիմողների՝ օրենքի վիճարկող 25 հոդվածը չի համապատասխանում իրավական որոշակիության, համաշխառության, իրավահավասարության սկզբունքներին, ինչի հետեւանքով հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 6, 14, 14.1., 19, 20, 30.1., 42, 43, 44 և 47 հոդվածների պահանջներին: Դիմողները գտնում են, որ իրավական անորոշության հետեւանքով վճռաբեկ դատարանն իր որոշմամբ օրենքի 25 հոդվածին տվել է այնպիսի մեկնարանություն, որի պարագայում իրենց, որպես փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից ծնված երեխաների, մերժվել է փախստականի կարգավիճակի տրամադրումը:

Բացի դրանից, դիմողները պնդում են, որ օրենքի 25 հոդվածի իրավական անորոշության վրա հիմնված՝ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման հետեւանքով իրենք հայտնվել են անորոշ կարգավիճակում. չունեն իրենց կարգավիճակը հաստատող որեւէ իրավական փաստաթութ, ինչի պատճառով խախտվում են միջազգային պայմանագրերով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրենց իրավունքներն ու ազատությունները:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի եւ 25 հոդվածի համարված վերլուծության արդյունքներով գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունում ծնված եւ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված դիմողը չի կարող համարվել փախստական՝ անկախ նրա ծնողների բռնազգադրված լինելու հանգանաքից: Հստ պատասխանողի՝ «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում ամրագրված դրույթները մեկնարանելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի պահանջներին համապատասխան՝ պարզ է դառնում, որ վիճարկող նորմի ուժով դիմողը չի կարող փախստական ճանաչվել, քանի որ ծնվել է Հայկական ԽՍՀ-ում և ոչ թե Ադրբեյջանական ԽՍՀ-ում: Փախստականների երեխաներին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունել պարտավորեցնելու վերաբերյալ դիմողների պնդումները «Փախստականների մասին» ՀՀ օրենքի եւ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի սխալ մեկնարանման արդյունք են:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5. «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի սահմանադրականության հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում, նախ՝ պարզել «փախստական» եւ «1988-1992 թվականներին Աղբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթված անձ» հասկացությունների բովանդակությունը:

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի Ժնևի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա. բաժինը սահմանում է «փախստական» հասկացությունը: Նշված բաժնի 2-րդ պարբերության համաձայն՝ «փախստական» եզրույթը կիրառելի է այն անձի նկատմամբ, ով «... ցեղի, կրոնի, ազգության, որոշակի ընկերային խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի պատճառով հալածանքի հիմնավորված երկյուղ կրելու կապակցությամբ գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս եւ անկարող է կամ այդպիսի երկյուղի պատճառով անհոժար է օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն եւ նման պատահարների հետեւանքով գտնվելով իր նախկին սովորական բնակության երկրից դուրս, անկարող է կամ այդպիսի երկյուղի պատճառով անհոժար է այնտեղ վերադառնալ»:

2008թ. նոյեմբերի 27-ին ընդունված՝ «Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածը գրեթե տառացիորեն վերարտադրել է Ժնևի կոնվենցիայի վերոհիշյալ դրույթը՝ իր առաջին մասում սահմանելով, որ փախստական է համարվում «... այն օտարերկրյա քաղաքացին, որը ուսայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետեւանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս եւ չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն եւ գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ»:

Փախստականի հասկացության վերաբերյալ նմանատիպ դրույթներ եր բովանդակում նաեւ 1999թ. մարտի 3-ին ընդունված եւ արդեն ուժի կորցրած՝ «Փախստականների մասին» ՀՕ-288 ՀՀ օրենքի 1-ին հոդվածը:

Բերված սահմանումներից ակնհայտորեն բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստանալուն կարող է հավակնել այն անձը.

ա) ով քացառապես օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող այնպիսի անձ, ում մշտական բնակության երկիրը Հայաստանի Հանրապետությունը չէ,

բ) ում համար առկա է հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում մեկնարանել նաեւ «Փախստականների մասին» ՀՕ-288 ՀՀ օրենքի 1-ին հոդվածում ամրագրված՝ «հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ» հասկացության բովանդակությունը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ հետապնդումն իրավական արժեքներին վճաս պատճառելու դեմք է, որն անձին դմում է անելանելի դրության մեջ:

Անձի իրավունքների դեմ անբույլատրելի ոտնագությունը դեռևս բավարար չէ հետապնդման մասին խոսելու համար: Ավելի շուտ պահանջվում է իրավունքների խախտման այնպիսի սպառնալիք, որն իր ձեռով ու ծանրությամբ կառաջացնի մարդու արժանապատվության ոտնահարում եւ տուժողին կդնի անելանելի դրության մեջ: Այն կարող է վնասել կյանքի բոլոր ոլորտները՝ կրոնական, մշակութային կամ տնտեսական: Նման իրավիճակն առկա է միշտ այն դեպքում, երբ վտանգված են, այսպես կոչված, հիմնարար արժեքները: Դրանց թվին են պատկանում կյանքի իրավունքը, ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, անձնական ու կրոնական ազատությունը, ինչպես նաև կեցության տնտեսական հիմքը:

6. «Փախստականների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 25 հոդվածի նպատակը 1988-1992 թվականներին Աղրբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղրված անձանց կարգավիճակի հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումն էր: Այդ նպատակով օրենսդիրը վերը նշված անձանց կարգավիճակը հավասարեցրել է փախստականի կարգավիճակին: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը՝ իմք ընդունելով նաեւ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ օրենքի 25 հոդվածում ամրագրված՝ «1988-1992 թվականներին Աղրբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղրված... անձինք» հասկացությունը վերաբերում է այն անձանց, ովքեր բավարարում են հետեւյալ բոլոր պայմանները միաժամանակ՝

ա) Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելիս եղել են օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող այնպիսի անձինք, որոնց մշտական բնակության երկիրը Հայաստանի Հանրապետությունը չեր,

բ) ունեցել են եւ փախստականի կարգավիճակ հայցելու պահին շարունակում են ունենալ Աղրբեջանի Հանրապետությունում հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ օրենքի 25 հոդվածի նպատակը չէր սահմանել փախստականի կարգավիճակ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՅԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ստացած անձանցից Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաների իրավական կարգավիճակը: Օրենսդրական նման քաղաքականությունն իրավաչափ է, քանի որ փախստականի կարգավիճակ ստացած անձանցից սերված լինելը, Հայաստանի Հանրապետությունում ծնվելու պարագայում, ինքնին չի կարող առաջացնել փախստականի կարգավիճակ ստանալու պարտադիր պայման, քանի որ նման պայմանը չի տեղափոխում «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի Ժնեվի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա. բաժնով եւ «Փախստականների մասին» ՀՕ-288 ՀՀ օրենքով սահմանված՝ «փախստական» հասկացության շրջանակներում:

Ավելին, փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից ծնված երեխաների կարգավիճակին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ միջազգային իրավունքը խրախուսում է այդ կատեգորիայի անձանց ընդունող պետության քաղաքացիության պետքերման մասին անդամ պետություններին ուղղված R(84) 21 հանձնարարականում Նախարարների կոմիտեն հանձնարարում է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար ընդունող պետությունում կամ այլուր ծնված՝ փախստականների երեխաների՝ ընդունող պետության քաղաքացիության ձեռքբերումը:

Հիմք ընդունելով վերոգրյալ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 25 հոդվածը չի առաջացնում իրավական անորոշություն, այլ ընդհակառակն, դրա բացակայությունն անարդյունավետ կդարձներ 1988-1992 թվականներին Աղբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղրված անձանց կարգավիճակի հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը:

Անդրադառնալով փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաների իրավական կարգավիճակին եւ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության վերլուծության արդյունքները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաներն ինքնարերար չեն կարող ՀՀ-ում ստանալ փախստականի կարգավիճակ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 1999 թվականի մարտի 3-ին ընդունված՝ «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 հոդվածը՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի մարտի 3-ին ընդունված ՀՕ-49-Ն օրենքի խմբագրությամբ, մինչեւ 2008 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՕ-211-Ն ՀՀ օրենքի 65 հոդվածի երկրորդ մասի ուժով 2009 թվականի հունվարի 24-ից ուժը կորցնելը, համապատասխանել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**20 հոկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 834**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՓՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳՎՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍԱԿԱՆ
ՆԸՆԱՎԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՅԹԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

Քաղ. Երեւան

20 հոկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի սեպտեմբերի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված 2009 թվականի հոկտեմբերի 1-ին:

ՀԱՅՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Սարգսյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի սեպտեմբերի 4-ին՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջնորդի կողմէ:

Հստ համաձայնագրի՝ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետեւ՝ Բանկ) կենսական նշանակության ավտոճանապարհների 140 կմ երկարությամբ ընտրված հատվածներն արդիականացնելու եւ շինարարության ոլորտում ժամանակավոր աշխատատեղեր ստեղծելու ծրագրի (այսուհետեւ՝ Ծրագիր) իրականացման համար Հայաստանի Հանրապետությանը (այսուհետեւ՝ Վարկառու) տրամադրելու է 36.600.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի վարկ:

2. Վարկային համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում երեք ժամանակացույց եւ մեկ հավելված, որոնցում ամրագրված են համաձայնագրի այն միջոցառումները, որոնց իրականացմանն ուղղվում է վարկավորումը, եւ համաձայնագրում ներառված սահմանումները:

3. Վարկային համաձայնագրով սահմանված են Վարկառուին տրամադրվելիք վարկի չափը, վարկի մարման եւ փակման ժամանակացույցը, վճարման արժույթի տեսակը: Վարկի հիմնագումարը պետք է մարզի կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին եւ նոյեմբերի 1-ին՝ 2019թ. նոյեմբերի 1-ից մինչեւ 2034թ. մայիսի 1-ը: Ընդ որում, 2019թ. նոյեմբերի 1-ից մինչեւ 2033թ. նոյեմբերի 1-ը մասնակի մարման բաժինը կազմելու է 3,33%, իսկ 2034թ. մայիսի 1-ին՝ 3,43%: Վարկառուի կողմից վճարման ենթակա սկզբնական վճարը հավասար է վարկի գումարի 0,25 տոկոսին (91.500 ԱՄՆ դոլարին համարժեք գումար):

4. Համաձայնագրի համաձայն Վարկառուի կողմից յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարվելիք տոկոսավճարը պետք է հավասար լինի վարկի արժույթի համար սահմանված Լիբու-ին՝ գումարած տատանումների տարրերությունը:

5. Վարկային համաձայնագրով Վարկառուն պարտավորվում է պատշաճ եւ արդյունավետ իրազրծել համաձայնագրի 1-ին ժամանակացույցում ամփոփված Ծրագրի նպատակները, 2-րդ ժամանակացույցում ամփոփված Ծրագրի իրականացման միջոցառումները, պահպանել 3-րդ ժամանակացույցում ամփոփված վարկի մարման ժամկետները:

6. Համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի Բաժին 4-ի Ա կետի 2-րդ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ենթակետում ներկայացված աղյուսակի համաձայն Ծրագրի իրականացման համար տեղաբաշխված վարկի գումարը 36.508.500 ԱՄՆ դոլարին համարժեք գումար է, որը կազմում է ֆինանսավորման ենթակա ծախսերի 80%-ը: Վարկառուն պարտավորվում է իր միջոցների հաշվին համաֆինանսավորում տրամադրել մնացած 20%-ի չափով:

7. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է նաև հետեւյալ պարտավորությունները.

- Ծրագրի տետողության ընթացքում տարեկան բյուջեում ապահովի ճանապարհաշինության ոլորտի համար միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների պահպանման նպատակով անհրաժեշտ միջոցների առկայությունը,

- ՏԿՆ-ի միջոցով մինչեւ Ծրագրի ավարտը պետք է ԾԻԳ-ը և ՀԱՃՏ-ն ապահովի Բանկի պահանջները բավարարող աշխատակազմով, միջոցներով եւ իրավասություններով եւ նրանց հանձնարարի Ծրագրի իրականացման և համակարգման ընդհանուր կառավարման պարտավորությունը,

- ՏԿՆ-ի միջոցով պահպանի Իրականացման համաձայնագրի՝ Բանկին բավարարող ձեւն ու բովանդակությունը, պատշաճ կերպով կատարի Իրականացման համաձայնագրով ստանձնած իր բոլոր պարտավորությունները եւ չփոխանցի, չփոփոխի, չեղյալ չհայտարարի Իրականացման համաձայնագիրը կամ հրաժարվի դրանից՝ առանց Բանկի նախնական համաձայնության,

- ոչ ուշ, քան Վարկառուի պառլամենտի կողմից սույն Համաձայնագրի վավերացումից երկու շաբաթ հետո բացի Ծրագրի հաշիվ Բանկի համար ընդունելի որեւէ բանկում եւ այդ հաշվին մուտքագրի Վարկառուի՝ Ծրագրի համաֆինանսավորման գումարի 20%-ը,

- ապահովի, որ Ծրագիրն իրականացվի Հակառակություն ուղեցույցների դրույթներին, ինչպես նաև Բանկին բավարարող բնապահպանական չափորոշիչներին եւ ուղեցույցներին համապատասխան,

- իրականացնի Ծրագրի առաջընթացի մոնիթորինգ եւ պատրաստի Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների դրույթների եւ Բանկի հետ համաձայնեցված ցուցանիշների հիման վրա: Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ընդգրկի մեկ օրացուցային եռամսյակ եւ Բանկին ներկայացվի եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան 45 օր հետո,

- ապահովի ապրանքների եւ աշխատանքների գնումների կատարումը բացառապես Գնումների ուղեցույցների Բաժին 1-ի պահանջներին համապատասխան:

8. Համաձայնագրում ամրագրված են նաև համաձայնագիրն ուժի մեջ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մտնելու կարգն ու ժամկետները: Ծրագրի ավարտի վերջնաժամկետը 2011 թվականի դեկտեմբերի 31-ն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2009 թվականի սեպտեմբերի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջև «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**20 հոկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 835**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՆ ՎՐԱ՝

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 55 ՀՈԴՎԱԾԻ
4-ՐԴ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՍՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ, «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 2
ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ»

Քաղ. Երեւան

27 հոկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփոլյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71 հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական դատարանի՝ 30.07.2009թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, դատական գործը, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից: «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004թ. մարտի 16-ին եւ ուժի մեջ է մտել 2004թ. դեկտեմբերի 31-ից: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000թ. մայիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000թ. հունիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 2000թ. հուլիսի 1-ից:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում ամրագրված նորմը քննիչին լիազորում է «պահանջել կատարելու վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ»:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասում ամրագրված է. «Սույն օրենքը չի կարգավորում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած անձանց գործունեության նկատմամբ իրականացվող վերստուգումների, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողության, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման եւ անցկացման, Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսված մաքսային հսկողության (բացառությամբ հետքացքողումային հսկողության), հողերի օգտագործման ու պահպանման նկատմամբ վերահսկողության հետ կապված հարաբերությունները, տնտեսավարող սուբյեկտի գործադիր մարմնի նկատմամբ բաժնետերերի, փայտերերի, հիմնադիրների կամ անդամների կողմից

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

իրականացվող հսկողության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի տարածքային ու կառուցվածքային ստորաբաժանումների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտի գործադիր մարմնի կողմից իրականացվող հսկողության հետ կապված հարաբերությունները»:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Սույն օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա»:

3. Գործի դատավարական նախապատմությունը հետեւյալն է: ՀՀ վարչական դատարանն իր՝ 2008թ. հոկտեմբերի 8-ի վճռով մերժել է ՀՀ գլխավոր դատախազության հայցը՝ վիճելի իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը: ՀՀ վարչական դատարանի նշված վճիռը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 13.03.2009թ. ՎԴ/0216/05/08 որոշմամբ քեկանել է ՀՀ վարչական դատարանի բողոքարկված վճիռը եւ գործն ուղարկել նոր քննության: Վճռաբեկ դատարանը նշված որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման եւ անցկացման հետ կապված հարաբերությունները դուրս են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորման շրջանակից: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է, որ. ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով վերոնշյալ օրենքները սույն վեճի լուծման համար կիրառելի չեն»:

4. Դիմող կողմը սահմանադրական դատարանին ուղղված դիմումում խնդրում է քննության առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ «իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանման, այն է՝ քրեական դատավարության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կարգով նշանակվող ստուգումները դուրս են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանելու հարցը»:

Դիմող՝ վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ մասը, գտնում է, որ իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն (այդ թվում՝ ստուգումներ) իրականացնելու պայմանները եւ կարգը, այդ թվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների իրականացման պայմաններն ու կարգը պետք է սահմանվեն օրենքով: Եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով այդ պայմաններն ու կարգը սահմանված չեն, իսկ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը բացառում է նշված օրենքի կանոնակարգումների կիրառելիությունը, ապա ակնհայտ է, որ պետք է լինի օրենք, որպեսզի նշված ստուգումներն իրականացվեն դրան համապատասխան: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը միայն սահմանում է իրավասու պաշտոնատար անձի լիազորությունը պահանջելու «ստուգողական գործողություններ», իսկ այդ ստուգողական գործողությունների իրականացման պայմաններն ու կարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չի կանոնակարգվում: ՀՀ քրեական դատավարության շրջանակներում նշանակվող ստուգումները կանոնակարգող հատուկ օրենքի բացակայության պայմաններում, ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնարանությունն առաջացնում է վիճարկող նորմերի սահմանադրականության հարց՝ կապված ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:

5. Պատասխանող կողմը նշում է, որ ՀՀ վարչական դատարանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան ոչ թե վիճարկող դրույթների, այլ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնարանության սահմանադրականության հարցով:

Պատասխանող կողմը միաժամանակ նշում է, որ քրեական դատավարության ընթացակարգով նշանակված ստուգումների դեպքում անձը զրկված չէ ինչպես իր իրավունքների եւ շահերի պաշտպանության հնարավորությունից, այնպես էլ ստուգում իրականացնող մարմինների կամայական գործողություններից: Օրենքով սահմանված են նաև այն անձանց

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՒԽ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

իրավունքներն ու պարտականությունները, ում մոտ իրականացվում են ստուգումներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը հնարավորություն է տալիս բողոքարկել քննիչի համապատասխան որոշումը:

Այն օրենսդրական բացի առնչությամբ, որ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների անցկացման պայմաններն ու կարգը պետք է սահմանվեն օրենքով, պատասխանողը նշում է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է խնդրը առարկային վերաբերող «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

6. ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի համաձայն դատարանները հանդիսանում են կոնկրետ սահմանադրական վերահսկողության սուբյեկտ: Դատարանների դիմումների հիման վրա կոնկրետ վերահսկողության նպատակն է կանխել դատարանի կողմից կոնկրետ վեճի լուծումը ենթադրյալ հակասահմանադրական օրենքի հիման վրա: Ըստ այդմ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանները կարող են սահմանադրական դատարանում վիճարկել ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված այն իրավական ակտերի սահմանադրականությունը, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գոնվող կոնկրետ գործով: Այլապես, դատարանների դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ սահմանադրական վերահսկողությունը չի ծառայի իր հիմնական նպատակին:

Գործի քննությունը վկայում է, որ վարչական դատարանի կողմից վիճարկվող՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի դրույթները վարչական դատարանի կողմից տվյալ գործով նոր քննության վարույթում կիրառման ենթակա օրինադրույթներ չեն: Մասնավորապես, այս հանգամանքը հավաստվում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 13.03.2009թ. ՎԴ/0216/05/08 որոշմամբ, որով վճռաբեկ դատարանը ՀՀ վարչական դատարանի վճիռը բեկանել է եւ գործն ուղարկել նոր քննության այն հիմնական հիմնավորմամբ, որ վարչական դատարանի կողմից վիճարկվող վերոհիշյալ օրինադրույթները տվյալ վեճի լուծման համար կիրառելի չեն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 122 հոդվածը սահմանում է, որ վարչական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանի որոշման հիման վրա՝ վճռաբեկ դատարանի սահմանած ծավալով։ Վարչական դատավարության օրենսգրքի նշված դրույթը դիտարկելով վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի համատեքստում, ակնհայտ է դառնում, որ վարչական դատարանը գործի նոր քննության ընթացքում ըստ էության կաշկանդված է վճռաբեկ դատարանի՝ վերոհիշյալ վիճարկվող դրույթների կիրառելիության վերաբերյալ իրավական դիրքորոշմամբ։

Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի 5-րդ մասին համապատասխան սահմանադրական դատարանին ուղղված դիմումում դատարանը, ի թիվս այլոց, պետք է հիմնավորի այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ։ Տվյալ դեպքում սահմանադրական դատարանին ուղղված դիմումում նշված պահանջը ոչ միայն բավարարված չէ, այլ անեւ, ինչպես նշվեց, «Հայատանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքը եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը գործի նոր քննության համար կիրառելի չեն, իսկ դիմող կողմի հարցադրումները տվյալ օրենքների առնչությամբ դուրս են գալիս նորմատիվ քննույթ ունեցող իրավական ակտի դրույթի/դրույթների սահմանադրականության գնահատման շրջանակներից։

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետին անդրադառնում է ոչ թե վիճարկվող նորմերի բովանդակության սահմանադրականության տեսանկյունից, այլ բարձրացնում է օրենսդրական բացի խնդիր։ Չնայած այն հանգամանքին, որ դիմումում անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի 5-րդ մասի պահանջները, այդուամենայնիվ, դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան բավարար հստակությամբ չի սահմանել քրեական գործի շրջանակներում ստուգումների իրականացման դեպքերը, պայմանները եւ կարգը։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի փաստարկները չեն վկայում վիճարկվող դրույթի անորոշության կամ ոչ իրավաչափ լինելու մասին։ Տվյալ դրույթը կոչված է կարգավորելու քննիչի՝ որպես քրեական դատավարության մասնակցի եւ քրեական գործի նախաքննության շրջանակներում դրա բազմակողմանի, լիիվ եւ օրյեկտիվ քննության համար լիազորված եւ պատասխանատու պաշտոնատար անձի լիազորությունը՝ վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Քյունների կատարում պահանջելու վերաբերյալ, որպիսիք քննիչի գնահատմամբ կոնկրետ գործով կարող են անհրաժեշտ քննչական գործողություններ հանդիսանալ՝ քրեական գործով օրյեկտիվ ճշնարսության բացահայտմամբ պայմանավորված խնդիրներ լուծելու համար (ապացուցման ենթակա հանգամանքների պարզում, ապացույցների ձեռքբերում, դրանց գնահատում եւ այլն): Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննիչին օրենքով եւ վիճարկվող վերոհիշյալ նորմով այդպիսի լիազորություն վերապահելու իրավաչափ է, համապատասխանում է նրա գործառույթներին եւ ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում:

Արձանագրելով, որ քրեական գործի նախաքննության շրջանակներում ինչպես քննչական ցանկացած այլ գործողության, այնպես էլ վերստուգումների, գույքագրումների եւ այլ ստուգողական գործողությունների կատարումն օրյեկտիվորեն կարող է առնչվել անձանց իրավունքների եւ ազատությունների պահպանման խնդրին, սահմանադրական դատարանը գտնում է, որ լրացուցիչ օրենսդրական կարգավորման են ենթակա այդպիսի գործողությունների կատարման պայմանները (հիմքերը, համապատասխան որոշման կայացման կարգն ու պայմանները) եւ կարգը (այդ թվում՝ արդյունքների արձանագրման), եւ այս առումով հիմնավոր են դիմողի հարցադրումները: Սակայն չի կարող ստուգումների՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգը մեխանիկորեն տարածվել քրեադատավարական գործընթացների վրա՝ առանց հաշվի առնելու դրանց առանձնահատկությունները, անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության երաշխիքների ապահովումը, մյուս կողմից՝ խոչընդոտներ ստեղծել պետական իշխանության մարմինների գործառույթների լիարժեք իրականացման համար: Այս խնդիրը, ինչպես նշվեց, լրացուցիչ իրավակարգավորման առարկա է, այլ ոչ թե Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի հիմքով օրենքի տվյալ կոնկրետ վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդիր:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 71 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա գործի վարույթը՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանմանը, մասով, կարձել:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**27 հոկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 836**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2005 թվականի վրիշտի 13-ին նշում ՅՈՐՔՈՒՄ ՍԱՈՐԱԳՐՎԱԾ՝
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋՈՎԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

3 նոյեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Հ. Դանիելյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի ապրիլի 13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Միջուկային ահարեկչական գործողությունների դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի տե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ղակալ Ռ. Հարությունյանի բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 2005 թվականի ապրիլի 13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Սիջուկային ահարեկչական գործողությունների դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007 թվականի հուլիսի 7-ին։ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի դրությամբ այն ստորագրել է 115 պետություն։ Կոնվենցիան ուժի մեջ է մտել 54 պետության համար։ Հայաստանի Հանրապետության կողմից այն ստորագրվել է 2005 թվականի սեպտեմբերի 15-ին։ Ադրբեջանի Հանրապետության հայտարարության դեմ հայտարարությամբ։

2. Նշված կոնվենցիայի նպատակն է միջուկային ահարեկչական գործողությունների կանխարգելման եւ մեղավորներին քրեական հետապնդման ու պատասխանատվության ենթարկելու համար արդյունավետ, գործնական միջոցների մշակման ու ձեռնարկման ուղղությամբ պետությունների միջեւ համագործակցության ամրապնդման ապահովումը։

Կոնվենցիան չի վերաբերում պետությունների կողմից միջուկային գենքի օգտագործման օրինականությանը կամ օգտագործման սպառնալիքին առնչվող հարցին եւ ոչ մի կերպ չի կարող մեկնարանվել որպես դրան վերաբերող։

Ցանկացած Մասնակից պետություն պարտավորվում է մյուս պետության իրավագորությանը վերաբերող հարցերի շրջանակներում չիրականացնել ոչ մի իրավագորություն եւ գործառույթ, որոնք բացառապես վերապահված են այդ Մասնակից պետության իշխանություններին՝ վերջինիս ներպետական իրավունքին համապատասխան։

Կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- կատարել փոփոխություն ՀՀ ներպետական օրենսդրություններում եւ կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված գործողությունները ճանաչել հանցագործություն (հոդվ. 5, «ա» կետ),
- հաշվի առնելով այդ հանցագործությունների ծանր բնույթը՝ այդ հանցագործությունների համար սահմանել համապատասխան պատիժներ (հոդվ. 5, «բ» կետ),
- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որ կոնվենցիայի գործողության ոլորտում գտնվող հանցավոր գործողությունները, որոնք, մասնավորապես, ուղղված կամ նախատեսված են բնակչության, անձանց խմբերի կամ կոնկրետ անձանց շրջանում ահարեկչական իրավիճակ ստեղծելուն, ոչ մի դեպքում չարդարացվեն որեւէ քաղաքական,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏՐԱՄԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

փիլիսոփայական, գաղափարախոսական, ռասայական, էթնիկական, կրոնական կամ նման այլ բնույթի նկատառումներով եւ պատժվեն իրենց ծանրության աստիճանին համապատասխան (հոդվ. 6),

- ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, համապատասխանեցնելով ՀՀ ներպետական իրավունքը՝ ՀՀ համապատասխան տարածքների սահմաններում կամ սահմաններից դուրս կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված հանցագործությունների նախապատրաստումը կանխարգելելու, ՀՀ տարածքների սահմաններում կամ սահմաններից դուրս այդպիսի նախապատրաստմանը հակազդելու նպատակով, ինչպես նաև ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք արգելում են ՀՀ տարածքում անձանց, խմբերի եւ կազմակերպությունների անօրինական գործողությունները, որոնք խրախուսում, դրդում, կազմակերպում, կանխամտածված ֆինանսավորում կամ տեխնիկական օգնություն, կամ տեղեկատվություն են տրամադրում կամ մասնակցում են այդ հանցագործությունների կատարմանը (հոդվ. 7, «ա» կետ),
- միջոցներ ձեռնարկել, որպեսզի անհապաղ տեղեկացվի 9-րդ հոդվածում նշված պետություններին 2-րդ հոդվածում նշված հանցագործությունների կատարման եւ ՀՀ-ին հայտնի դարձած այդպիսի գործողությունների նախապատրաստման մասին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այդ մասին տեղեկացնի միջազգային կազմակերպություններին (հոդվ. 7, «բ» կետ),
- պահպանել մյուս մասնակից պետություններից ստացված եւ միջազգային կազմակերպություններին տրամադրած ցանկացած տեղեկատվության գաղտնիությունը (հոդվ. 7, 2-րդ մաս),
- չի պահանջվում տրամադրել այնպիսի տեղեկատվություն, որը ՀՀ-ն իրավունք չունի տարածել ներպետական իրավունքի համաձայն, կամ կարող է վտանգել ՀՀ-ի անվտանգությունը կամ միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանությունը (հոդվ. 7, 3-րդ մաս),
- հանցագործությունների կանխարգելման նպատակով ներդնել բոլոր ջանքերը ռադիոակտիվ նյութի պաշտպանության ապահովման ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար՝ հաշվի առնելով Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության համապատասխան առաջարկություններն ու գործառույթները (հոդվ. 8),
- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ ՀՀ իրավագործությունը հաստատելու համար, երբ հանցագործությունը կատարվում է ՀՀ տարածքում, կամ հանցագործությունը կատարվում է ՀՀ դրոշի տակ նավարկող նավի վրա կամ այն

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օդանավում, որը հանցագործության կատարման պահին գրանցված է եղել ՀՀ օրենքների համաձայն կամ հանցագործությունը կատարվում է ՀՀ քաղաքացու կողմից (հոդվ. 9, կետ 1),

- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ ՀՀ իրավագործությունը հաստատելու համար՝ այն դեպքում, եթե հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը գտնվում է ՀՀ տարածքում և ՀՀ-ն նրան չի հանձնում այն Մասնակից պետություններից որեւէ մեկին, որոնք իրենց իրավագործությունն են հաստատել կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան (հոդվ. 9, կետ 4),
- ստանալով տեղեկատվություն այն մասին, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված հանցագործությունը կատարվել կամ կատարվում է ՀՀ տարածքում, կամ որ հանցագործություն կատարած կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը կարող է գտնվել ՀՀ տարածքում, ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, ՀՀ ներպետական իրավունքին համապատասխան, այդ տեղեկատվության մեջ նշված փաստերը քննելու համար (հոդվ. 10, կետ 1),
- անձին կալանավորելուց հետո, այդ անձի կալանքի տակ գտնվելու փաստի եւ նրա կալանավորմանը վերաբերող հանգամանքների մասին անմիջականորեն կամ ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարի միջոցով անհապաղ տեղեկացնել այն Մասնակից պետություններին, որոնք, կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն, իրավագործություն են հաստատել, եւ եթե նպատակահարմար կհամարվի, նաեւ ցանկացած այլ շահագրգիռ Մասնակից պետության, ինչպես նաեւ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հետաքննության անցկացման պարագայում, նշված Մասնակից պետություններին անհապաղ տեղեկացնել գործի մանրամասների մասին եւ հայտնել, թե արդյոք մտադիր է իրականացնել իրավագործություն (հոդվ. 10, կետ 6),
- եթե հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը գտնվում է ՀՀ տարածքում, այն դեպքերում, որոնց նկատմամբ կիրառվում է կոնվենցիայի 9-րդ հոդվածը, եւ ՀՀ-ն չի հանձնում այդ անձին, ապա առանց որեւէ բացառության կամ անկախ նրանից՝ հանցագործությունը կատարվել է ՀՀ տարածքում, թե՛ ոչ, առանց անհիմն հետաձգումների՝ գործը հանձնել ՀՀ իրավասու մարմիններին՝ ՀՀ օրենքներին համապատասխան վարույթ հարուցելու միջոցով քրեական հետապնդում իրականացնելու նպատակով եւ ապահովել, որպեսզի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- այդ մարմինները որոշում կայացնեն այնպես, ինչպես կկայացնեին, ՀՀ իրավունքի համաձայն, ծանր բնույթի ցանկացած այլ հանցագործության դեպքում (հոդվ. 11, կետ 1),
- կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված հանցագործությունները, որպես հանձնման հանգեցնող հանցագործություններ, ներառել հանձնման մասին հետազայում կնքվելիք բոլոր պայմանագրերում (հոդվ. 13, կետ 1),
 - անհրաժեշտության դեպքում կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված հանցագործություններին արձագանքել, Մասնակից պետությունների միջեւ հանձնման նպատակներով, ինչպես եթե այդ հանցագործությունները կատարված լինեին ոչ միայն այն վայրում, որտեղ տեղի է ունեցել այդ հանցագործությունը, այլև այն պետությունների տարածքում, որոնք, կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան, սահմանել են իրենց իրավագործությունը (հոդվ. 13, կետ 4),
 - հնարավորինս աջակցել մյուս Մասնակից պետություններին կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված հանցագործությունների հետաքննության, քրեական հետապնդման կամ հանձնման վարույթների հետ կապված հարցերում, ներառյալ վարույթների համար անհրաժեշտ՝ ՀՀ տրամադրության տակ գտնվող ապացույցների ստացմանն օժանդակելը (հոդվ. 14, կետ 1),
 - կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտավորությունները կատարել Մասնակից պետությունների հետ փոխադարձ իրավական օգնության մասին ցանկացած պայմանագրի կամ այլ պայմանավորվածությունների համաձայն, որոնք կարող են գոյություն ունենալ միմյանց միջեւ. այդպիսի պայմանագրերի կամ պայմանավորվածությունների բացակայության դեպքում մասնակից պետություններին օգնություն տրամադրել ՀՀ ներպետական իրավունքի համաձայն (հոդվ. 14, կետ 2),
 - հանձնված անձին պահել անազատության մեջ, եթե այն պետությունը, որը հանձնել է անձին, այլ բան չի խնդրել կամ այլ բան չի որոշել, ինչպես նաև առանց հետաձգումների կատարել այն պետությանն այդ անձին վերադարձնելու ՀՀ պարտավորությունը, որը նախկինում հանձնել է այդ անձին, ինչպես դա համաձայնեցվել է նախապես կամ այլ կերպով երկու պետությունների իրավասու իշխանությունների կողմից (հոդվ. 17, կետ 2, ենթակետեր «ա» եւ «բ»),
 - անձին հանձնած պետությունից չպահանջել նրա վերադարձման համար հանձնման վարույթի հարուցումը, ինչպես նաև ՀՀ-ում պատի-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժը կրելու ժամկետից հանել այլ պետությունում անազատության մեջ պահելու ժամկետը (հոդվ. 17, կետ 2, ենթակետեր «գ» և «դ»),

- առզրավելով կամ այլ կերպով ՀՀ հսկողության տակ վերցնելով ուղղուակտիվ նյութերը, սարքերը կամ միջուկային օբյեկտները կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված հանցագործությունը կատարվելուց հետո՝ այսպիսի առարկաներ տրամադրության տակ ունենալու պարագայում ձեռնարկել միջոցներ ուղղուակտիվ նյութը, սարքերը կամ միջուկային օբյեկտները վնասազերծելու նպատակով, ապահովել, որպեսզի ցանկացած միջուկային նյութ պահպի Ասումային էներգիայի միջազգային գործակալության կողմից հրապարակված՝ ֆիզիկական պաշտպանության վերաբերյալ առաջարկությունները եւ առողջության ու անվտանգության պահպանման ոլորտի ստանդարտները (հոդվ. 18, կետ 1),
- եթե ներպետական կամ միջազգային իրավունքով ՀՀ-ին արգելվում է վերադարձնել կամ ընդունել այդպիսի ուղղուակտիվ նյութ, սարք կամ միջուկային օբյեկտ, կամ եթե այդ մասին պայմանավորվում են համապատասխան Մասնակից պետությունները, ապա ուղղուակտիվ նյութ, սարք կամ միջուկային օբյեկտ տնօրինելիս, կոնվենցիայի 18-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները պահպանելով, շարունակել ձեռնարկել կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետում նշված միջոցները. այդպիսի ուղղուակտիվ նյութերը, սարքերը կամ միջուկային օբյեկտներն օգտագործել բացառապես խաղաղ նպատակներով (հոդվ. 18, կետ 3, ենթակետ «ա»),
- եթե ուղղուակտիվ նյութ, սարքեր կամ միջուկային օբյեկտներ տնօրինող ՀՀ-ի համար դրանք տնօրինելն անօրինական է, ապա ապահովել, որպեսզի դրանք հնարավորինս շուտ փոխանցվեն այն պետությանը, որի համար դրանց տնօրինումն օրինական է, եւ որն անհրաժեշտության դեպքում, կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան, ՀՀ-ի հետ խորհրդակցություններ անցկացնելիս երաշխիքներ է ներկայացրել դրանց վնասազերծման համար. այդպիսի ուղղուակտիվ նյութերը, սարքերը կամ միջուկային օբյեկտներն օգտագործվում են բացառապես խաղաղ նպատակներով (հոդվ. 18, կետ 3, ենթակետ «բ»),
- կոնվենցիայի 18-րդ հոդվածին համապատասխան ուղղուակտիվ նյութի, սարքի կամ միջուկային օբյեկտի տնօրինմամբ կամ պահպանմամբ զբաղվելու պարագայում, տեղեկացնել Ասումային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր տնօրենին այն մա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սին, թե ինչպես է տնօրինվել կամ պահպանվել այդ իրը (հոդվ. 18, կետ 6),

- եթե ՀՀ-ում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում, ապա, ՀՀ ներպետական իրավունքին կամ կիրառվող լնքացակարգերին համապատասխան, վարույթների վերջնական արդյունքների մասին տեղեկացնել ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարին (հոդվ. 19):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց Յ.

1. 2005 թվականի ապրիլի 13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Սիջուկային ահարեկչական գործողությունների դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Յ նոյեմբերի 2009 թվականի
ՍՊ-Ա -837



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՄՊՈՐՏՈՒՄ ԴՐՈՒՅԴԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը
ՀԱՄԱԳՈՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՑՐ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

3 նոյեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (գելկուցող).

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի հոկտեմբերի 19-ին Փարիզում ստորագրված՝ Սպորտում դռափինգի դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիջը Հանրապետության Նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարան 12.10.2009թ. նույ�ագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գելկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Ա. Գրիգորյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Կոնվենցիան ստորագրվել է 2005թ. հոկտեմբերի 19-ին՝ Փարիզում: Կոնվենցիայի նպատակն է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության ծրագրի եւ ուսումնավարության շրջանակներում նպաստել սպորտի եւ ֆիզիկական դաստիարակության բնագավառում դռափինքի օգտագործման կանխարգելմանն ու դռափինքի դեմ պայքարին՝ նպատակ ունենալով վերացնել այն:

2. Կոնվենցիայի բաղկացուցչ մասն են կազմում երկու հավելվածներ, որոնցում սահմանված են արգելված նյութերի ցանկը եւ միջազգային չափանիշները, ինչպես նաև բուժման նպատակով օգտագործման բույլտվության տրամադրման միջազգային չափանիշները:

3. Կոնվենցիայի գերազույն մարմինն է Մասնակիցների խորհրդաժողովը, որն իր հերթական նիստերը գումարում է երկու տարին մեկ, իսկ արտահերք նիստ գումարվում է Մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդի պահանջով:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Համաշխարհային հակադոպինզային օրենսգրքի սկզբունքներին համապատասխան անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ներպետական եւ միջազգային մակարդակներում խրախուսելու միջազգային համագործակցության բոլոր ձեւերը՝ ուղղված մարզիկների պաշտպանության ապահովմանը, սպորտում էթիկայի սկզբունքների ապահովմանը եւ հետազոտությունների արյունքների համատեղ օգտագործմանը, ինչպես նաև աջակցել դռափինքի դեմ պայքարի ոլորտում բոլոր շահագրգիռ կողմների համագործակցությունը,
- միջոցներ ձեռնարկել նյութերի (սուրատանցների) եւ միջոցների մատչելիության սահմանափակման ուղղությամբ՝ սպորտում մարզիկների կողմից դրանց օգտագործման սահմանափակման նպատակով, եթե դրանք չեն օգտագործվում բուժման նպատակով օգտագործման բույլտվության հիման վրա, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այդ խնդրի իրականացման համար ստեղծել ներպետական համապատասխան մարմիններ,
- անհրաժեշտության դեպքում ՀՀ բյուջեի շրջանակներում տրամադրել միջոցներ բոլոր մարզաներում թեստավորման ազգային ծրագրերի ֆինանսավորման համար կամ օգնություն ցուցաբերել մարզական եւ հակադոպինզային կազմակերպություններին դռափինք-ստուգումը ֆինանսավորելու համար ուղղակի սուրահիանների կամ դրամաշնորհների տեսքով, կամ այդ կազմակերպություններին տրամադրվող սուրահիանների կամ դրամաշնորհների ընդհանուր գումարը որոշելիս այդ ստուգման համար նախատեսված ծախսերը հաշվանցելով,
- դադարեցնել այն մարզիկին կամ նրան օժանդակող անձնակազմին տրամադրվող ֆինանսական աջակցությունը, որոնց մասնակցությունը կասեցվել էր հակադոպինզային կանոնների խախտման հե-

«ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- տեսանքով, ինչպես նաև մասամբ կամ ամբողջությամբ դադարեցնել ցանկացած մարզական կամ հակադոպայինգային կազմակերպության ֆինանսական աջակցությունը, որը խախտում է օրենսգրքով սահմանված հակադոպայինգային կանոնները,
- պաշտպանել պետական մարմինների եւ օլիմպիական շարժման կողմից Համաշխարհային հակադոպայինգային գործակալության հաստատած հիմնական տարեկան բյուջեն հավասարաշափ ֆինանսավորելու սկզբունքը,
 - մշակել կամ իրականացնել դռափինզի դեմ պայքարի վերաբերյալ կրթական եւ վերապատրաստման ծրագրեր եւ աջակցել դրանց, խրախուսել համապատասխան իրավասու մասնագիտացված ասցիացիաներին եւ հաստատություններին՝ մշակելու եւ կիրառելու սպորտում դռափինզի դեմ պայքարի մասին վարչեցողության կանոնագիրք,
 - անհրաժեշտության դեպքում փոխանակել անցկացրած հակադոպայինգային հետազոտությունների արդյունքները մասնակից մյուս պետությունների եւ Համաշխարհային հակադոպայինգային գործակալության հետ,
 - երկու տարին մեկ ամսամ Մասնակիցների խորհրդաժողով ներկայացնել ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

5. Կոնվենցիայով սահմանված են նաև մոնիթորինզի իրականացման կարգը, կոնվենցիայում եւ դրան կից հավելվածներում փոփոխություններ կատարելու ընթացակարգը, այն վավերացնելու, ընդունելու, վերապահումներ անելու, հաստատելու կամ միանալու, ինչպես նաև այն ուժի մեջ մտնելու եւ չեղյալ հայտարարելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2005 թվականի հոկտեմբերի 19-ին Փարիզում ստորագրված՝ Սպորտում դռափինզի դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 նոյեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 838



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

««ԳԼՈՒԽ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱԲՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 63 ՀՈԴՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Հ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան

24 նոյեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփոլյանի, Մ. Թոփոլյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրնաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««ԳԼՈՒԽ» ՍՊԸ-ի դիմումի իման վրա՝ «Վարչարարության իմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 հոդվածի երրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիջը «ԳԼՈՒԽ» ՍՊԸ-ի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Վարչարարության իմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.07.2009թ. ՍԴԱՈ-67 աշխատակարգային որոշմամբ «ԳԼՈՒԽ» ՍՊԸ-ի՝ ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն ընդունել է քննության:

2. Դիմողը վիճարկում է «Վարչարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի երրորդ մասի սահմանադրականությունը: Վիճարկվող դրույթը սահմանում է. «Ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, եւ վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որեւէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որեւէ համայնքի:»

Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածն ինտ վերադարձնելը վնաս կապատճառի վարչական ակտի հասցեատիրոջը»:

Ըստ դիմողի՝ օրենքի վիճարկվող դրույթն իրավական անորոշության պատճառաբանությամբ հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության սկզբունքին: Ըստ դիմողի՝ իրավական անորոշություն է առաջացնում վիճարկվող նորմում «Վնաս պատճառել» արտահայտությունը, որը դատարաններին տալիս է սուբյեկտիվ մեկնաբանության հնարավորություն: Դիմողը գտնում է, որ այդպիսի հնարավորությունն օգտագործելով՝ դատարանները կարող են ենթադրել, որ տվյալ վարչական ակտը չի կարող վնաս պատճառել որեւէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որեւէ համայնքի, մինչդեռ այդ ակտն օբյեկտիվ տեսանկյունից կարող է վնասել այլ անձանց գույքային շահերը, եւ, ըստ դիմողի, իրականում կոնկրետ դեպքում վնասում է «ԳԼՈՒԽ» ՍՊԸ-ի գույքային շահերը:

3. Պատասխանող կողմը՝ դիմողի մատնանշած՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ անորոշության առնչությամբ նշում է, որ իրավական որոշակիությունը չի նշանակում, որ օրենքները պետք է լինեն բացարձակ կողմնորոշչ այս կամ այն վարքագիծը դրսեւրելու համար: Ըստ պատասխանողի բացատրությունների՝ վիճարկվող դրույթը հստակ սահմանում է այն հիմքը, եթե ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունքին եւ որեւէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որեւէ համայնքին վնաս չպատճառելուն: Օրենքի 63 հոդվածի 1-ին մասի, 4-րդ մասի եւ վիճարկվող դրույթի համադրված վերլուծությունից բխում է, որ եւ՝ կառուցվածքային, եւ՝ բովանդակային

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

առումով նշված հոդվածը հստակ կարգավորում է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու հետ կապված հարաբերությունները:

Հստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթը պաշտպանում է հենց քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքները: Վիճարկվող դրույթը ոչ միայն չի հակասում ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջներին, այլ, ընդհակառակն, ընդունված է այդ պահանջներին համապատասխան, քանի որ իրավունքների պաշտպանությունն իրավական պետության կարեւորագույն սկզբունքներից է, եւ ձեւական առումով ոչ իրավաչափ վարչական ակտը չպետք է անվավեր ճանաչվի, եթե այն ուղղված է իրավունքների պաշտպանությանը եւ որեւէ անձի վճառ չի պատճառում:

4. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ «ԳԼՈՒՌ» ՍՊԸ-ն հանդիսացել է Մարտունու «ՍԻԳ-ՍԱ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի մի մասի սեփականատեր: Նշված քաժնետոմսերի պատկանելության կապակցությամբ առաջացած վեճի արդյունքում քաղաքացիներ Ֆիրդուս Զաքարյանը եւ Ժիրայր Գալստյանը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարան հայց են ներկայացրել «ԳԼՈՒՌ» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Դարբինյանի եւ Գուրգեն Դարբինյանի դեմ «ՍԻԳ-ՍԱ» ԲԲԸ-ի բաժնետոմսերն իրենց անունով վերագրանցելը պարտավորեցնելու պահանջի մասին:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 24.08.2006թ. վճռով հայցը մերժվել է:

Ֆ. Զաքարյանի եւ Ժ. Գալստյանի ներկայացրած վերաբննիշ բողոքի հիման վրա ՀՀ վերաբննիշ քաղաքացիական դատարանն իր՝ 17.11.2006թ. վճռով վերաբննիշ բողոքը բավարարել է՝ պարտավորեցրել է Տ. Դարբինյանին եւ Գ. Դարբինյանին գրանցելու «ՍԻԳ-ՍԱ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 40 տոկոսը Ֆ. Զաքարյանի եւ Ժ. Գալստյանի անունով՝ յուրաքանչյուրին 20 տոկոսի չափով, ինչն էլ որ կատարվել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. ««ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնետոմսերը գրանցելու մասին» որոշմամբ:

17.06.2008թ. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանը քննության առնելով «ԳԼՈՒՌ» ՍՊԸ-ի դիմումն ընդդեմ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունքի, երրորդ անձինք՝ Տիգրան Դարբինյանի, Գուրգեն Դարբինյանի, Ֆիրդուս Զաքարյանի եւ Ժիրայր Գալստյանի՝ պաշտո-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նատար անձի՝ օրենքին հակասող ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վճռել է պահանջը բավարարել՝ վերացնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. ««ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնետոմսերը գրանցելու մասին» որոշումը, կիրառել անվավերության հետեւանքներ՝ «ՍԻԳՍՍ» ԲԲԸ-ի 8991 հատ բաժնետոմսերը վերագրանցել որպես «ԳԼՈՒՌ» ՍՊԸ-ի սեփականություն:

Յ. Զաքարյանի եւ Ժ. Գալստյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 10.10.2008թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ բողնելով Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի վճիռը:

Յ. Զաքարյանի եւ Ժ. Գալստյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 13.02.2009թ. որոշմամբ հաստատել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. ««ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնետոմսերը գրանցելու մասին» որոշման ոչ իրավաչափ լինելը, սակայն, հղում կատարելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի երրորդ մասի առաջին պարբերությանը, գտել է, որ վերը նշված ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող վճար պատճառել որեւէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որեւէ համայնքի, եւ այդ ակտի հասցեատերեր Ֆիրդուս Զաքարյանը եւ Ժիրայր Գալստյանն իրավունք ունեն վստահելու այդ ակտի գոյությանը: Նշված պատճառաբանությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ թեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 10.10.2008թ. որոշումը եւ այն փոփոխել՝ ամբողջությամբ մերժել է «ԳԼՈՒՌ» ՍՊԸ-ի դիմումը:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջական պատճառահետեւանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի եւ իր իրավունքների խախտման փաստի միջև:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտը, որն անվավեր ճանաչելու պահանջը մերժվել է պաշտպանության արժանի վստահության իրավունքի առկայության հիմնավորմամբ, ընդունվել է ի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի: Կատարողական վարույթը, որի նպատակը դատական ակտի կատարումն է, ըստ էության հանդիսանում է անձի խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ փուլ: Այս մոտեցումն է ամրագրված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Հետեւարար, կատարողական վարույթում ընդունված՝ կատարողական թերթի պահանջի իրացմանն ուղղված վարչական ակտի իրավական հետեւանքներն ածանցյալ են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետեւանքներից, նման վարչական ակտն ինքնուրույն իրավական հետեւանքներ չի առաջացնում: Անկախ խնդրո առարկա վարչական ակտն օրենքի ձեւական պահանջների խախտմամբ կամ պահպանմամբ ընդունվելու հանգամանքից՝ այն դիմողի համար առաջացնելու էր միեւնույն իրավական հետեւանքները: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանության արժանի վստահության իրավունքը տվյալ դեպքում կարող էր ծագել ոչ թե վարչական ակտի, այլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առնչությամբ:

Գործում առկա դատական ակտերի, ինչպես նաև դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ խնդրո առարկա վարչական ակտի վերոհիշյալ առանձնահատկությունը հաշվի չի առնվել ինչպես դատարանների, այնպես էլ դիմողի կողմից: Վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը դիմողը փորձում է հիմնավորել ոչ թե խնդրո առարկա նորմի ենթադրյալ հակասահմանադրականության պատճառով իր սահմանադրական իրավունքների խախտման փաստով, այլ խնդրո առարկա վարչական ակտով իր համար առաջացած բացասական հետեւանքներով, որոնք ել իրենց հերթին արդյունք էին հետազայում օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտի, որի կատարմանն էր ուղղված վարչական ակտը: Փաստորեն դիմողը փորձ է անում դատական ակտի իրավական հետեւանքները վերագրել վիճարկվող դրույթին: Թերեւս այս է պատճառը, որ դիմողը նաև փորձում է վիճարկել խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը ՀՀ Սահմանադրության 8 հոդվածին հակասելու հիմքով:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման եւ վիճարկվող դրույթի միջև որեւէ պատճառահետեւանքային կապ առկա չէ, դիմողը ձեւական առումով առաջարկելով օրենքի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում է վարչական ակտով իրեն վնաս պատճառելու հանգամանքի զնահատման իրավաչափության խնդիրը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի՝ անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաեւ այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Ելնելով վերոշարադրյալից եւ դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 6-րդ կետի, 60 հոդվածի 1-ին կետի, 69 հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

««ԳԼՈՒԽ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 հոդվածի երրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարձել:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**24 նոյեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 839**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՖՂԱՆԱՍՏԱՆՈՒՄ
ՄԻԶԱՋՎԱՅԻՆ ԱՆՎԱՆՎԱԳՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆՄԱՆ ՄԱՄԱՎԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՀՅՈՒՄԻԱՍՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ /ՆԱՏՕ/ ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱՄԱԿՆԵՐԻ
ՓՈԽՎԱԾԿՄԱՆ ԿՆՔՎՈՂ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

1 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հոկտեմբերի 19-ին և 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված՝ Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսասլանտյան դաշինքի

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՆԱՏՕ/ հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին ուղղված՝ Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 23.11.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ «Հ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Խնդրու առարկա համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի հոկտեմբերի 19-ի՝ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի նամակի եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված պատասխան նամակի փոխանակման միջոցով։

Համաձայնագրի նպատակն է Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից դեկավարվող Անվտանգության աջակցության միջազգային ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված իրավական հարցերի կարգավորումը։

2. Համաձայնագրի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ Աֆղանստանի վերականգնման ծրագրի շրջանակներում ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2001թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1386 բանաձեւի համաձայն ստեղծվել են Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժեր։ Վերջիններիս առաքելության հիմնական նպատակն է աջակցել Աֆղանստանի ժամանակավոր վարչակազմին անվտանգության պահպանման գործում։

Նշված ուժերի գործունեության ժամկետը ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի հետագա բանաձեւերով քանից երկարաձգվել է, իսկ վերջին՝ 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1890 բանաձեւով՝ ես մեկ տարով։ Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի դեկավարությունն ստանձնել է ՆԱՏՕ-ն։ Ներկայումս նշված ուժերի թվաքանակը կազմում է 50 000, որում ընդգրկված են 42 պետությունների զինված ուժերի ներկայացուցիչներ, այդ թվում ՆԱՏՕ-ի անդամ բոլոր 28 պետությունները։

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումները 2004 թվականից ի վեր մասնակցել են Իրաքում եւ Կոստովյում իրականացվող խաղաղապահ առաքելություններին։

ՀԱՅՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Համաձայնագրից բխում է, որ նախնական քննարկումների արդյունքում համաձայնություն է կայացվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 35-40 զինծառայողից բաղկացած ստորաբաժանումն ընդգրկել Աֆղանստանի Կունդուզ նահանգի՝ Գերմանիայի հրամանատարության ներքո գտնվող Նահանգային վերականգնողական խմբում։ Աֆղանստանի տարածքում հերթափոխի ժամանակ հայկական զորախմբի առավելագույն թվաքանակը կարող է հասնել 80 զինծառայողի։ Հայկական զորախմբի գլխավոր առաքելությունը պետք է լինի Աֆղանստանի Կունդուզ քաղաքի օղանավակայանի բոլիչադաշտի, շինությունների պահպանությունը։

Հայկական զորախումբն իր առաքելությունն սկսելու է իրականացնել 2010թ. առաջին եռամսյակից՝ մեկ տարի ժամկետով, փոխադարձ համաձայնությամբ մասնակցության հետագա երկարածզման հնարավորությամբ։

Հայկական կողմը պարտավորվում է իր զորախումբը դուրս չհանել առանց աջակցման ուժերի հրամանատարին նախապես՝ առնվազն երեք ամիս առաջ ծանուցելու, եթե այլ համաձայնություն ձեռք չբերվի։

Հայկական զորախմբի հրամանատարությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ անձնակազմի կողմից պատշաճ կարգապահության պահպանումն ապահովելու համար եւ քննության առարկա դարձնել զինծառայողների կողմից իրավախախտման յուրաքանչյուր դեպք։

Համաձայնագիրը սահմանում է հայկական զորախմբի եւ աջակցման ուժերի հրամանատարության միջեւ փոխամագործակցության կարգը եւ պայմանները։

Ազգային զորախմբերը կօգտագործվեն դրանց կարողություններին ներդաշնակ՝ հաշվի առնելով զորախմբի հրամանատարի խորհուրդը։

Հայկական կողմը համաձայնում է դեկավարվել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձերում եւ ՆԱՏՕ-ի զործողությունների պլանավորման փաստաթղթերում ամրագրված սկզբունքներով։

Համաձայնագիրն արձանագրում է, որ ՆԱՏՕ-ի եւ ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող երկրների միջեւ գաղտնի տեղեկատվության փոխանակումը կիրականացվի բոլոր մասնակից պետությունների կողմից գործադրվելիք անվտանգության համապատասխան միջոցառումների համաձայն։

Համաձայնագրից բխում է նաև, որ համապատասխան զինված ուժեր տրամադրող պետությունները քաղաքական բնույթի հարցերի պարագայում կարող են դիմել ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարին։

Ըստ համաձայնագրի՝ դրանում չհիշատակված ցանկացած այլ խնդիր մնում է Հայաստանի Հանրապետության պատասխանատվության ներքո եւ չի ենթադրում որևէ ֆինանսական պարտավորություն ՆԱՏՕ-ի

«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եւ աջակցման ուժերի ազգային բաղադրիչներից որեւէ մեկի կողմից: Այլ խոսքով՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է կատարել համաձայնագրով չնախատեսված, սակայն դրա գործողության ընթացքում առաջացած ծախսերի ֆինանսավորումը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ներպետական բոլոր ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության կողմից ավարտելու մասին ծանուցումը ՆԱՏՕ-ի կողմից ստանալու օրվանից:

4. Միջազգային անվտանգության ապահովման արդի համակարգում բոլոր պետությունների անվտանգության խնդիրները փոխկապակցված են, եւ Հայաստանի Հանրապետությունը եւս պարտավոր է ՄԱԿ-ի կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունների շրջանակներում իր ներդրումն ունենալ միջազգային անվտանգության ապահովմանն ուղղված առաքելություններին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ռ Ե Յ .

1. 2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված՝ Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսաւայանույան դաշինքի /ՆԱՏՕ/ հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴԱ- 840



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ, ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՖԴԱՆՍԱՆՈՒՄ
ՄԻԶԱՋԱՅԻՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ՈՒԺԵՐԻ
ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ՍՏՈՐԱԳՐԱԺԱՆՄԱՆ ՄԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՀՅՈՒՍԽԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ /ՆԱՏՕ/ ՀԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԳԵՐՅԱԼ ՆԱՄԱԿՆԵՐԻ
ՓՈԽՎԱՆԱԿՄԱՐՔ ԿՆՔՎՈՂ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԳԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեսան

1 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի,
Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական
ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100
հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրա-
կան դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38
և 72 հոդվածների,

դռնբաց դատական ճիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009
թվականի հոկտեմբերի 19-ին և 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստո-
րագրված՝ Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման
ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորա-
բաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսատլանտյան դաշինքի

ՀԱՅՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՆԱՏՕ/ հետ ֆինանսական հարցերի կարգավորման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին ուղղված՝ Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 23.11.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարար U. Օհանյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Յ Ց**.

1. Խնդրու առարկա համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի հոկտեմբերի 19-ի՝ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի նամակի եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված պատասխան նամակի փոխանակման միջոցով։

Համաձայնագրի նպատակն է Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից դեկավարվող Անվտանգության աջակցության միջազգային ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված ֆինանսական հարցերի կարգավորումը։

Համաձայնագրի եւ գործում առկա այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ Աֆղանստանի վերականգնման ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2001թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1386 բանաձեւի համաձայն ստեղծվել են Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժեր։ Վերջիններիս առաքելության հիմնական նպատակն է աջակցել Աֆղանստանի ժամանակավոր վարչակազմին անվտանգության պահպանման գործում։

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումները 2004 թվականից ի վեր մասնակցել են Իրաքում եւ Կոստովյում իրականացվող խաղաղապահ առաքելություններին։

2. Քննության առարկա համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք ֆինանսական պարտավորություններ։

Ըստ համաձայնագրի 3-րդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու է մեկնման նշանակված կետից դեպի գործողությունների տարածքում իրենց հատկացված կայանատեղի եւ հակառակ ուղղությամբ հայկական գորախմբի անձնակազմի, սպառազինության եւ սարքավորումների տեղափոխման համար՝ համատեղ հաստատ-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱԲԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ված հերքափոխի գրաֆիկի համաձայն, առանց ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորման:

Համաձայնագրով սահմանված հաջորդ պայմանն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու է գործողությունների տարածքում հայկական զորախմբին սննդով, կացարանով, կենցաղային անհրաժեշտ պայմաններով (գազ, էլեկտրականություն, ջուր, նավթով, քսուկային նյութերով եւ բժշկական օգնությամբ ապահովելու համար՝ առանց ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորման:

Համաձայնագիրը սահմանել է նաև, որ Հայկական կողմը հոգալու է իր զորախմբի անձնակազմի աշխատավարձերի, հատուկ վճարների, հավելավճարների, օրապահիկների, նպաստների վճարումն իր միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է իր զորախմբին ապահովել առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ սպառագինությամբ եւ այլ հարկավոր սարքավորումներով:

Համաձայնագրի 8-րդ պարբերությանը համապատասխան ՆԱՏՕ-ի ցանկացած շտարում ազգային ներկայացուցչի գործունեության ֆինանսավորումը կիրականացվի Հայկական կողմի միջոցների հաշվին:

Համաձայնագրի 9-րդ պարբերությունն արձանագրում է, որ ՆԱՏՕ-ի անդամ եւ աջակցման ուժեր տրամադրող մյուս պետությունները համաձայնության են եկել հրաժարվելու միմյանց եւ ՆԱՏՕ-ի անդամ շիանդիսացող այլ պետությունների նկատմամբ հայցերից, որոնք կվերաբերեն ազգային զորախմբերին պատկանող կամ դրանց կողմից օգտագործվող անշարժ գույքին պատճառված վնասներին եւ անձնակազմի ստացած վնասվածքներին: Աջակցման ուժեր տրամադրող կողմերը պատասխանատու են այն հայցերի համար, որոնք ներկայացվել են իրենց գործողությունների կամ բացքողումների արդյունքում պատճառված վնասների համար՝ երրորդ կողմ հանդիսացող այն պետության կողմից, որտեղ պատճառվել է սույն վնասը:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նաև լուծել համաձայնագրում չիշտակված (չնախատեսված: ցանկացած բնույթի ֆինանսական հարց: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է կատարել համաձայնագրով չսահմանված, սակայն դրա գործողության ընթացքում առաջացած ծախսերի ֆինանսավորումը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ներպետական բոլոր ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության կողմից ավարտելու մասին ծանուցումը ՆԱՏՕ-ի կողմից ստանալու օրվանից:

3. Գործի նյութերը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված տեղե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կանքը վկայում է, որ հայկական զորախսմբի՝ գերմանական հրամանատարության ներքո գործունեության ֆինանսական և տեխնիկական հարցերը նախատեսվում է կարգավորել ԳԴՀ-ի դաշնային պաշտպանության նախարարության հետ կնքվելիք միջզերատեսչական պայմանագրի միջոցով, համաձայն որի՝ Գերմանական կողմը պարտավորվում է հոգալ վերը թվարկված ծախսերի գերակշիռ մասը և ապահովել հայկական զորախսմբի բոլոր կարիքները (բացառությամբ աշխատավարձի, որը պետք է վճարի Հայկական կողմը):

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2009 թվականի հոկտեմբերի 19-ին և 2009 թվականի հոկտեմբերի 20-ին ստորագրված՝ Աֆղանստանում Սիջազզային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Հյուսիսաւանատյան դաշինքի /ՆԱՏՕ/ հետ ֆինանսական հարցերի կարգավորման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**1 դեկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 841**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻԶԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՎԻՐԱԾՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

1 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյա-
նի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի
(զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական
ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նա-
խարարի տեղակալ Շ. Ջոշարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100
հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրա-
կան դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38
և 72 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հու-
նիսի 21-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության
կառավարության և Արարական Միացյալ Էմիրությունների կառավարու-
թյան միջև դիվանագիտական ներկայացուցություն իմմնելու նպատա-
կով հողատարածքի նվիրատվության մասին համաձայնագրում անրագր-
ված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում 16.11.2009թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնափրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2009թ. հունիսի 21-ին Երեւանում՝ Հայաստանի Հանրապետության եւ Արարական Միացյալ Էմիրությունների միջև հարաբերությունների հետագա զարգացման եւ ամրապնդման նպատակով:

2. Համաձայնագրով սահմանված է, որ կողմերը պարտավորվում են դեսպանության շենքի կառուցման համար միմյանց տրամադրել 0,7 հա հողատարածք Երեւանում եւ Աբու-Դարիում:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

ա) կատարել անհրաժեշտ բոլոր ծախսերն իր դեսպանության շենքի կառուցման համար տրամադրված հողատարածքի վրա,

բ) հողատարածքի վրա շինությունների կառուցման, ընդարձակման եւ վերակառուցման աշխատանքներն իրականացնել ԱՍՏ օրենսդրության համաձայն եւ իրավասու մարմնի թույլտվությամբ,

գ) աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի եւ սարքավորումների ներմուծման ժամանակ չգանձել մաքսային տուրքեր եւ որպես ընդունող երկիր կարգավորել այդ աշխատանքներին մասնակցող անձնակազմին արտոնագիր տրամադրելու հետ կապված հարցերը,

դ) կառուցման աշխատանքների ավարտից հետո աջակցել մյուս կողմին կառուցված շինությունների սեփականության իրավունքի պետական գրանցման հարցում,

ե) համաձայնագրում նշված հողատարածքը եւ կառուցման ենթակա շինությունները չվաճառել, վարձակալությամբ չտալ կամ չփոխանցել՝ առանց մյուս կողմի թույլտվության, եւ դրանք օգտագործել բացառապես դիվանագիտական եւ հյուպատոսական ծառայությունների համար, ինչպես նաև դիվանագիտական անձնակազմի կեցության համար:

4. Համաձայնագրում ամրագրված է նաև համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման ընթացքում ծագող վեճերի լուծման, ինչպես նաև համաձայնագիրն ուժի մեջ մտնելու եւ դադարելու կարգը:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.

1. 2009 թվականի հունիսի 21-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արարական Միացյալ է միբությունների կառավարության միջեւ դիվանագիտական ներկայացուցչություն իիմնելու նպատակով հողատարածքի նվիրատվության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**1 դեկտեմբերի 2009 թվականի
ՍՊ- 842**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՎԱՊԱՀ, ՀԱԿԱՀՐԴԵՎԱՅԻՆ, ՎԹԱՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը
ՀԱՍՍՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

1 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ, Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն Է. Բարսեղյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դոնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի սեպտեմբերի 5-ին Մոսկվայում ստորագրված՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության մասնակից պետությունների իրավապահ, հակահրդեհային, վթարափրկարարական մարմինների և հատուկ ծառայությունների համար կադրերի պատրաստման մասին հա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՅԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մաճայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության մասնակից պետությունների իրավապահ, հակահրդեհային, վթարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների համար կադրերի պատրաստման մասին համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի սեպտեմբերի 5-ին՝ Մոսկվայում:

2. Նշված համաձայնագրի նպատակն է համագործակցել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության մասնակից պետությունների իրավապահ, հակահրդեհային, վթարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների, ինչպես նաև դրանց կազմի մեջ մտնող զորքերի եւ զորական կազմավորումների համար կադրերի պատրաստման գործում՝ ըստ համաձայնեցված մասնագիտությունների եւ ուսումնական ծրագրերի:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- «Հ իրավապահ, հակահրդեհային, վթարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների միջոցով իրականացնել համագործակցություն՝ ՀՀ օրենսդրությանը եւ ՀՀ-ի մասնակցությամբ միջազգային պայմանագրերին համապատասխան,
- համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ՀՀ-ի կողմից ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը եւ իրավապահ, հակահրդեհային, վթարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների ցանկը հանձնել ավանդապահին, ինչպես նաև մեկ ամսվա ընթացքում գրավոր ծանուցել ավանդապահին նշված ցանկում կատարված փոփոխությունների մասին,
- կադրերի պատրաստումն իրականացնել կողմերի իրավապահ, հակահրդեհային, վթարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների կողմից կնքվող պայմանագրի հիման վրա՝ հաշվի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- առնելով գաղտնիության պայմանակարգի, սահմանափակ տարածման ենթակա ծառայողական տեղեկատվության եւ ընդունող կողմի՝ գաղտնի տեղեկատվության պահպանության ապահովման հետ կապված սահմանափակումները, ինչպես նաև Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պահպանության փոխադարձ ապահովման մասին 2004 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը,
- որպես ընդունող կողմ որոշել կադրերի համատեղ եւ առանձին պատրաստման կազմակերպումը, ինչպես նաև կադրերի պատրաստումն իրականացնել արտոնյալ կամ անվճար հիմունքով՝ ըստ ընդունող կողմի սահմանած քվոտաների,
 - արտոնյալ հիմունքով կադրերի պատրաստման դեպքում, որպես ընդունող կողմ, կրել ուսուցման ժախսերը, իսկ որպես ուղարկող կողմ՝ կրել ապրուստի ժախսերը, ներառյալ բնակության ու սննդի համար վճարումը,
 - անվճար հիմունքով կադրերի պատրաստման դեպքում, որպես ընդունող կողմ, կրել ուսուցման եւ ապրուստի ժախսերը, ներառյալ բնակության ու սննդի համար վճարումը,
 - ուսուցման հայտերը ներկայացնել ընդունող կողմին մինչեւ ուսուցումն սկսվելու տարվա հունվարի 15-ը,
 - որպես ընդունող կողմ՝ մինչեւ ուսուցումն սկսվելու տարվա մայիսի 15-ը ուղարկող կողմին տեղեկացնել իրավապահ, հակահրդեհային, վրարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների՝ ուսուցման ընդունվող աշխատակիցների քանակի մասին, այդ թվում՝ արտոնյալ եւ անվճար հիմունքով պատրաստման քվոտաներով, նշելով ուսումնական հաստատությունները, մասնագիտությունները, ուսուցման ծրագրերը, ինչպես նաև՝ ըստ յուրաքանչյուր մասնագիտության, ուսումնական ծրագրի տրամադրվող տեղերի քանակը,
 - որպես ընդունող կողմ՝ ՀՀ իրավապահ, հակահրդեհային, վրարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների միջոցով սահմանել ուսուցման թեկնածուների ընտրության պահանջները,
 - որպես ուղարկող կողմ անցկացնել ուսուցման թեկնածուների ընտրությունն ու նրանց բուժզննումը՝ ելնելով ընդունող կողմի ուսումնական հաստատություններ ընդունվելու պայմաններից եւ պահանջներից,
 - որպես ընդունող կողմ ապահովել, որպեսզի ուսուցման թեկնածուները ՀՀ իրավապահ, հակահրդեհային, վրարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների աշխատակիցների հետ հա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մատեղ, ընդունելության քննությունների արդյունքների համաձայն, ընդունվեն ուսումնական հաստատություններ, որոնք, ըստ անհրաժեշտության, անցկացվում են ՀՀ ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ուղարկող կողմի տարածքում,

- իրավապահ, հակահրդեհային, վրարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների աշխատակիցներին իրավունք ընձեռել շարունակելու ուսուցումը եւ ավարտելու ՀՀ ուսումնական հաստատությունները, որտեղ նրանք ընդունվել են մինչեւ համաձայնագրի ուժի մեջ մտնելը ավելի վաղ կճշված պայմանագրերի պայմաններով,
- ճանաչել ընդունող կողմի ուսումնական հաստատություններն ավարտելու, ինչպես նաև գիտական աստիճանների ու կոչումների շնորհման մասին փաստաթղթերի համարժեքությունը,
- կողմերին օգնություն ցուցաբերել իրավապահ, հակահրդեհային, վրարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների աշխատակիցների պատրաստման ուղղությամբ ազգային ուսումնական հաստատությունների զարգացման գործում,
- ուսումնական նպատակներին հասնելու համար անհրաժեշտության դեպքում մյուս կողմի հետ համատեղ իրականացնել գիտական, ուսումնական, տեղեկատվական եւ այլ նյութերի պատրաստում եւ հրատարակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության մասնակից պետությունների իրավապահ, հակահրդեհային, վրարափրկարարական մարմինների եւ հատուկ ծառայությունների համար կաղըթի պատրաստման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2009 թվականի
ՍՊ-843



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ

**ԵՎ Կ. ՌՈՒԲԻՆՅԱՆԻ, Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290 ՀՈԴՎԱԾԻ
1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

7 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (գեկուցող),

մասնակցությամբ՝ դիմողներ Ա. Զեյնալյանի, Մ. Դանիելյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի և 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ա. Զեյնալյանի, Ա. Սարգսյանի և Կ. Ռուբինյանի, Մ. Դանիելյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ՝ Ա. Զեյնալյանի՝ 01.06.2009թ., Ա. Սարգսյանի և Կ. Ռուբինյանի՝ 09.11.2009թ., Մ. Դանիելյանի՝ 17.11.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով՝ սահմանադրական դատարանի 17.11.2009թ. ՍԴԱՆ-101 և 24.11.2009թ. ՍԴԱՆ-106 աշխատակարգային որոշումներով վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են եւ քննվել դատարանի նույն ճիստում:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողների գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական եւ անհիմն որոշումների եւ գործողությունների բողոքարկումը դատարան» վերտառությամբ 290 հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերը սահմանում են.

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների եւ գործողությունների օրինական եւ հիմնավոր չինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները եւ օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով եւ գործողություններով, եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

...

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների եւ ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, եւ անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմոնին եւ վարույթն իրականացնող մարմնին»:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Վիճարկելով վերոնշյալ նորմերի սահմանադրականությունը՝ դիմողները գտնում են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը ձեւակերպված է այնքան անդրոշ, «ոչ միանշանակ, ոչ հստակ», որ դատարանները դրանք ընկալում են կիրառում են որպես հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից դրսեւրած անգործության դատական կարգով բողոքարկման կարգ։ Այդ անորոշությունը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, «ուստի՝ վիճարկող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության իրավական որոշակիության սկզբունքներն ամրագրող՝ 1-ին, 3-րդ, 6-րդ եւ 43-րդ հոդվածներին»։ Ըստ դիմող Ա. Զեյնալյանի՝ «Դատարանների՝ դատական ակտերով վերոգրյալ նորմին տրված մեկնարանությունից հետևում է, որ անձը կարող է ոստիկանության ոչ իրավաչափ անգործությունից դատախազության (որպես դատարանից տարբերվող «պետական այլ մարմնի») առջեւ «իրավական պաշտպանության միջոցը» սպառել է, ու այդ միջոցը եղել է անարդյունավետ։ Դատարանի կողմից օրենսգրքի դրույթին տված մեկնարանությունը կամ, եթե խնդրո առարկա դրույթը հենց այդպես ու այդ նպատակով էլ գրված է, հակասում է ... ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ, Կոնվենցիայի 6, 13-րդ հոդվածներին։ Դիմողի կարծիքով, հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների դրսեւրած անգործության դեմ դատական պաշտպանության իրավունքներու համար «միջանկյալ օղակ նախատեսելը չի բավարարում՝ իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքի չափանիշին, ինչը՝ ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչն է»։ Դիմողը եզրակացնում է, որ ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 6, 43-րդ հոդվածներին կամ ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «, եւ եթե նրանց բողոքները չեն բավարպել դատախազի կողմից» դրույթը, «անգործության» մասով հակասում է ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ նույնաբովանդակ փաստարկներ են ներկայացրել նաև դիմողներ Ա. Սարգսյանը, Կ. Ռուբինյանը եւ Մ. Դանիելյանը։ Բացի դրանից, դիմողներ Ա. Սարգսյանը եւ Կ. Ռուբինյանը գտնում են, որ «ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մասով սահմանված պաշտոնատար անձանց գործողություններից եւ որոշումներից դատական պաշտպանություն հայցելու «սուբսիդիար» սկզբունքի վերացնելու դեպքում ի հայտ կզա շահերի իրական բախում՝ մրցակցություն, նախաքննության մարմին-դատախազություն-դատարան, որտեղ՝ պաշտպանության միջոցի արդյունավետության տեսակետից, ընտրությունը կկատարի դիմող/բողոք բերողը, ինչը ամփուսափելիորեն կլսքանի էվոլյուցիան ... կրաքարանա թե՛ նախաքննության մարմնի որոշումների, թե՛ դատարանների որոշումների որակը, եւ վերջապես՝ դատարանի անկախությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներ Ա. Սարգսյանը եւ Կ. Ռուբինյանը գտնում են, որ վերջինիս «... վարույթն իրականացնող մարմնի պարտականության» դրույթի պատճառով, բույլ չի տրվում ապահովել «անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնում»: Հետեւաբար՝ այդ դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքը երաշխավորող 18 եւ 19-րդ հոդվածներին:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում խոսք է գնում միայն գործողությունների եւ որոշումների բողոքարկման հնարավորության մասին, սակայն դիմումատուն չի ներկայացրել որեւէ փաստարկ առ այն, որ տվյալ նորմի իրավակիրառ պրակտիկայում դատարանները հրաժարվում են քննել հետաքննության մարմինների աշխատակիցների, քննիչների, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից դրսեւողված անգործության դեմ բերված բողոքները: Պատասխանող կողմը գտնում է, որ այդ նորմում որոշակիության սկզբունքը չի խախտվել եւ միանշանակորեն բողոքները կարող են բերվել եւ պետք է քննության առնվեն ինչպես գործողության, այնպես էլ անգործության դեմ: Հետեւաբար, վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության 1, 3, 6 եւ 43 հոդվածների միջև որեւէ հակասության մասին խոսք չի կարող գնալ:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը սահմանում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունների եւ կայացրած որոշումների բողոքարկման հերթականությունը, եւ դատախազական հսկողության իրականացումն այդ գործընթացում «պաշտպանության իրավունքն իրականացնելու համար միջանկյալ օղակ» գնահատվել չի կարող, քանի որ «եւ դատախազական հսկողու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյունը, եւ դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», հետեւաբար, ինչպես գտնում է պատասխանողը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր կատարման ենթակա են ցանկացած սուբյեկտի կողմից եւ դրանց չկատարման համար օրենքով սահմանված են պատասխանատվության համապատասխան միջոցներ: Այսինքն՝ այն դեպքում, եթե դատարանը որոշում է կայացնում պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու անձի իրավունքների եւ ազատությունների խախտումը, ապա վարույթն իրականացնող մարմնինը չի կարող չկատարել դատարանի որոշումը, հակառակ դեպքում տվյալ պաշտոնատար անձը ենթարկվելու է պատասխանատվության, այդ քում՝ քրեափառական: Հետեւաբար, առաջարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

4. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ.

- մինչդատական վարույթում հետաքննություն եւ նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների եւ գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրափառական բովանդակությանը, օրենսդրական կարգավորմանն ու նշանակությանը,

- մինչդատական վարույթում դատական վերահսկողության եւ դատախազական հսկողության գործառույթների բովանդակությանը, դրանց տարանջատմանը եւ սահմանադրորեն թույլատրելի շրջանակներին, հաշվի առնելով նաև դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները,

- հետաքննություն եւ նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների եւ գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկային՝ այնքանով, որքանով առնչվում է դիմումի առարկային:

5. Մինչդատական վարույթում հետաքննություն եւ նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիննե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թի, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների եւ գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտը (ՀՀ քր. դատ. օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մաս, 290 հոդված) որպես քրեական վարույթում անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոց կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության ինչպես 18 եւ 19 հոդվածներում, այնպես էլ 3, 14, 14.1, 16, 17 եւ անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրախրավական սկզբունքի գերակայությունն արտացոլող բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված նորմերի կենսագործումը: Այն կոչված է պաշտպանելու անձի ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենքով երաշխավորված այլ իրավունքները, ազատությունները՝ վերոհիշյալ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց անօրինական (անիրավաչափ) որոշումներից ու գործողություններից եւ իրացվում է արդարադատական առանձնահատուկ գործառույթի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով: Վերջինս դրսեւորվում է նաև քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու եւ անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի միջնորդությունները քննելու միջոցով (ՀՀ քր. դատ. օրենսգրքի 278 հոդվածի 1-ին մաս, 282 հոդված):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39-րդ գլխի նորմերի, համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների եւ գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի եւ օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում պարզել անձի (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) իրավունքների եւ ազատությունների խախտման փաստը եւ կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների եւ ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

Սույն գործով դիմող կողմի ներկայացրած փաստարկների տեսանկյունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 290 հոդ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վածի 1-ին և 5-րդ մասերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարեւորել այդ նորմերով կարգավորվող քրեադատավարական հարաբերությունների ինչպես սուբյեկտների շրջանակը, այնպես էլ՝ **օբյեկտը**, ելնելով վերոհիշյալ հոդվածի եւ օրենսգրքի այլ նորմերի համակարգային բովանդակությունից, ինչպես նաև քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս դատարանի ընդհանուր լիազորություններից (ՀՀ քր. դատ. օրենսգրքի 41 հոդված): Մասնավորապես, վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումները եւ գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները եւ այլ անձինք, որոնց իրավունքները եւ օրինական շահերը խախտվել են այդ **որոշումներով եւ գործողություններով**: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները եւ գործողությունները**, այսինքն՝ այնպիսի որոշումներ ու գործողություններ, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում: Միաժամանակ, **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը նվիրված 39-րդ գլխի 278 հոդվածը** (որը վերաբերում է դատական վերահսկողության ոլորտին) սահմանում է (մաս 2), որ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում եւ կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների **որոշումների եւ գործողությունների** օրինականության վերաբերյալ բողոքները»:

Նշվածին զուգահեռ, օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նաև հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազի դատական բողոքարկման ենթակա լրացուցիչ այլ գործողություններ ու որոշումներ: **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ բաժնի** («Քրեական գործով մինչդատական վարույթ») հոդվածների, 290 հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի իմաստով մինչդատական վարույթում դատական բողոքարկման ենթակա են իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց այն **որոշումները եւ գործողությունները**, որպիսիք կայացվել են այդ սուբյեկտների՝ օրենսգրքի 53, 55 եւ 56 հոդվածներում նախատեսված իրենց ընդհանուր լիազորությունների շրջանակնե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բում: Իսկ օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը որպես առանձնահատուկ իրավակարգավորում սահմանում է, որ «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի եւ դատախազի **հրաժարվելը**, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

Այսուհանդեռձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի համաձայն դատարանը, ի թիվս քրեական գործերով ընդհանուր այլ լիազորությունների, իրավասու «...քննել եւ լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների (**անգործության**) դեմ բողոքները»: Այսպիսով, մինչդատական վարույթում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների եւ գործողությունների օրինականության, այլեւ՝ **անգործության** վերաբերյալ բողոքները, իսկ «...եւ եթե նրանց բողոքները չեն բավարպել դատախազի կողմից» պայմանը բացառապես վերաբերում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների **որոշումներին ու գործողություններին**, հետեւաբար՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման շրջանակներում չեր կարող վերագրվել նաև հիշյալ մարմինների անգործությանը:

6. Դիմողներն իրենց փաստարկներում առաջ են քաշում իրավակիրառական պրակտիկայում ձեւավորված այն մոտեցումը, համաձայն որի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի դրույթները դատարանների կողմից ընկալվում են որպես նաև քրեական վարույթ իրականացնող մարմինների **անգործության** դեմ դատական բողոքարկման կարգ, ի հաստատումն որի սահմանադրական դատարան են ներկայացրել ՀՀ ոստիկանության անգործության դեմ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում քննված բողոքի վերաբերյալ կայացված որոշումը եւ այն ՀՀ վերաբերնիշ քրեական դատարանում, ՀՀ վճռաբեկ դատարանում բողոքարկվելու արդյունքում կայացված որոշումները:

Դատական այդ ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ ոստիկանության անգործության դեմ բողոքը քննության է առնվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի հիմքով եւ մերժվել այդ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նորմում նախատեսված դատախազական բողոքարկման կարգը դիմողի կողմից չպահպանվելու պատճառաբանությամբ։ Գործում առկա դատական նման այլ ակտերի ուսումնասիրությունը նույնապես վկայում է, որ դատարանները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմի դրույթները մեկնարանել են նույնակերպ՝ մերժելով անձանց բողոքներն այն դեպքերում, երբ չի պահպանվել քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները եւ անգործությունները նախօրոք դատախազին բողոքարկելու պահանջը։ Գործնականում դատական պրակտիկան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առնչությամբ «գործողություն» եղբույթը հավասարապես վերագրել է նաև անգործությանը։

7. Ելնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այդ նորմի իրավական բովանդակությունը բացահայտել նաև ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին մասում, 18 եւ 19 հոդվածներում, 91 հոդվածի 1-ին մասում եւ 103 հոդվածում ամրագրված նորմատիվ պահանջներին համապատասխանության ու դրանց կատարման համար բավարար երաշխիքներ պարունակելու տեսանկյունից՝ այնքանով, որքանով ըստ վիճարկվող նորմի տառացի բովանդակության՝ հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները եւ գործողությունները ենթակա են ինչպես դատախազական հսկողության, այնպես էլ դատական վերահսկողության։ Այս առումով վիճարկվող նորմի իրավակարգավորումից դուրս է հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց եւ դատախազի անգործության վերաբերյալ բողոքների քննությունը։ Դատարանն իրավասու է այդպիսի բողոքները քննել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթում բողոքարկման (դատախազական եւ դատական) ինստիտուտի իրավակիրառման շրջանակներում «գործողություն» եւ «անգործություն» եզրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական վարույթի իրավակարգավորման շրջանակներում նույնաբովանդակ մեկնարանվել չեն կարող։ Պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք (այդ թվում՝ քրեական վարույթ իրականացնող մարմիններն ու պաշտոնատար անձինք) ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասի նորմատիվ պահանջի համաձայն իրավասու են կատարելու միայն գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով։ Սահմանադրա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՒՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կան դատարանը գտնում է, որ «անգործություն» եզրույթի իրավակիրառական պրակտիկայում, սույն գործի առարկայի շրջանակներում, պետք է ընկալվի դրաբես հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց եւ դատախազի՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում։ Վերջինս նույնպես կարող է առաջացնել իրավական հետեւանքներ, պատճառ դառնալ մարդկանց սահմանադրական իրավունքների խախտման։ Հետեւարար, նման անգործության դատական բողոքարկման նպատակը եւ ոչ իրավաչափ գործողության դատական բողոքարկման նպատակը նույնական են՝ հետապնդում են իրավունքների պաշտպանության համանման խնդիր։ Այլ բան է, որ օրենսդիրը կարող է սահմանել դրանց բողոքարկման տարրեր ընթացակարգեր, սակայն մեկը մյուսով կլանելու եւ նման իրավակիրառական պրակտիկա ձեւափորելու հանգամանքը վկայությունն է այն բանի, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առկա խմբագրությունն իր մեջ անորոշություն է պարունակում եւ կիրառվում է իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության շրջանակներում։

8. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նախատեսված դատական բողոքարկման կարգին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները եւ գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների եւ այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետեւյալ նախապայմանների դեպքում։

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները եւ օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից։

Վերջինիս դեպքում հետեւում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պետք է դիմի նաև վերադաս դատախազին։ Խսկ իրավունքների եւ օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդոտ չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ էության քննելու համար։

Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջեւ հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մատչելի-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ուրյան իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665 և ՍԴՈ-690, բազմից անդրադառնալով արդարադատության մատչելիության եւ արդյունավետության խնդիրներին, կարեւորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարեւորել է միջազգային պարտավորություններից բխող ներաբետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության եւ, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ճեւական), կարող է իրավաչափորեն ներառել նաեւ օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնարանության շրջանակներում այդպիսի պարտադիր պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի **անգործությամբ** խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, եւ նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրափրավական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է:

ՀՀ Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան ՀՀ-ում դատական իշխանությունն ու դատախազությունը սահմանադրափրավական ինստիտուցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, եւ գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

ՀՀ դատական իշխանության սահմանադրափրավական դերի եւ բովանդակության բացահայտման ու գնահատման խնդիրներին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱԾՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով հակողություն է իրականացնում հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ։ Չըեական գործերով մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի ապահովումն սահմանադրական վերոհիշյալ պարտականության կատարման, մինչդատական վարույթում հակողություն իրականացնելիս դատախազը պատասխանատու է հետաքննության եւ նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության եւ արդյունավետության համար («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են դեկավարելու (ուղղորդելու) հետաքննության մարմնի, քննիչի դատավարական գործունեությունը, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների եւ գործողությունների դեմ բերված բողոքները, «բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին» (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ)։ Վերոբարկյալ գործառույթները դատախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախատեսված իր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինախախտումները վերացնելու նպատակով դեկավար ցուցումներ եւ այլ հանձնարարություններ տալով հետաքննության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում վերացնելով նաև վերջիններիս որոշումները։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի եւ 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինչպես դատախազը, այնպես էլ դատարանն իրավասու են քննելու վերոհիշյալ մարմինների, այդ բվում՝ նաև դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված որոշումների եւ գործողությունների օրինական եւ հիմնավոր լինելու դեմ բերված բողոքները։ Սակայն տարբեր են այդ բողոքների քննության արդյունքում խախտված իրավունքի վերականգնման եղանակները, ձեւերը եւ իրավական հետեւանքները, մասնավորապես, դատական վերահսկողությունն իրականացվում է անձի իրավունքների եւ ազատությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականության մասին որոշման կայացմամբ։ Հետեւարար, դրանով է պայմանավորված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասի նորմատիվ պահանջը, որին համապատասխան բողոք քննելու արդյունքում դատա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բանն անձի խախտված իրավունքը եւ ազատությունը վերականգնում է ոչ թե հետաքննության մարմնին, քննիչին եւ օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես տեղի ունի դատախազական հսկողության դեպքում, այլ այդ մարմինների ու պաշտոնատար անձի կողմից թույլ տրված օրինախախտումը վերացնելը եւ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը **պարտավորեցնելով**, որը բխում է դատական իշխանության սահմանադրավական բովանդակությունից եւ դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից։ Սույն գործում առկա ԵԿԴ/007/11/09 գործով, վերոհիշյալ նորմի իրավական բովանդակությանն այդպիսի մեկնարանում է տվել նաև ՀՀ վերջինից քրեական դատարանն իր՝ 08.05.2009թ. որոշմամբ։ Այսպիսով, սահմանադրական դատարանը ոչ թե ժխտում է հանրային իշխանության մարմինների, պաշտոնատար անձանց որոշումների ու գործողությունների օրինականությունը վիճարկելու արտադատարանական (տվյալ դեպքում՝ դատախազին բողոքարկելու) կարգը՝ որպես ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, այլ կարեւորում է վերջինիս եւ վիճարկման դատական միջոցի՝ իրավական բովանդակության, դրանց կիրառման հիմքերի (դեպքերի), օրենքով այնպիսի հստակեցումը, որը սույն գործի առարկայի շրջանակներում լինի միակերպ ընկալելի ինչպես դիմող, այնպես էլ իրավակիրառող սուբյեկտների համար, ընդգրկելով նաև սույն որոշմամբ կարեւորված այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են դատախազական հսկողությանն ու դատական վերահսկողությանը։ Իրավակարգավորման այսպիսի եղանակը կողմնորոշի քրեական դատավարության մասնակիցներին եւ շահագրգիռ այլ անձանց առավել արդյունավետ ձեւով իրականացնել Սահմանադրության 18 հոդվածում երաշխավորված իրենց իրավունքը։

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ օրենսդրական զարգացումների ընդհանուր տրամաբանությունը (մասնավորապես՝ արտահայտված ՀՀ սահմանադրական դատարանի 16 հունվարի 2007թ. ՍԴՈ-673 որոշման մեջ, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասում), գտնում է, որ այն դեպքում, եթե պետական մարմինը (տվյալ դեպքում քրեական վարույթ իրականացնող) կամ պաշտոնատար անձն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դատարանը ստուգում է, թե արդյո՞ք տվյալ մարմնի կողմից ակտն ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողությունը կատարելը կամ անգործություն դրսեւորելն իրականացվել են օրենսդրությանը համապատասխան։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Այսպիսով, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության եւ դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների ընդհանուր նպատակի (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարրեր առանձնահատկությունների մասին, հետեւաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «...եւ դատախազական հսկողությունը, եւ դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից եւ այդ գործառույթների սահմանադրախրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրախրավական բովանդակությամբ եւ երաշխիք է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի «...եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**7 դեկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 844**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱՄԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

48 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԿՆՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

8 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփոլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,

մասնակցությամբ՝

դիմովի ներկայացուցիչ Ա. Սահակյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրույթ նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացի Նարին Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ն. Սահակյանի՝ 09.07.2009թ. դիմումն է՝ ՀՀ սահմանադրական դատարան:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր քացարությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

Օրենսգրքի վիճարկվող 48 հոդվածը փոփոխվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

Օրենսգրքի 48 հոդվածը վերնագրված է «Ապացուցման պարտականությունը եւ ապացուցման առարկան», որի 2-րդ մասը 2007 թվականի նոյեմբերի 28-ի խմբագրությամբ սահմանում է.

«Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Դիմելով ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարան՝ դիմողը խնդրել է համապատասխանողներ Գ. Պապոյանից եւ Ա. Շահվերդյանից համապարտության կարգով բռնագանձել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը՝ հագուստը, անձնական օգտագործման իրերը եւ ոսկյա զարդերը: Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի՝ 25.04.2007թ. վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ մերժելով ոսկյա զարդերի մասով պահանջը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանի կողմից 31.07.2007թ. կայացված վճռով հայցը բավարարվել է ամբողջությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 25.12.2007թ. որոշմամբ ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանի վճիռը բեկանվել է եւ ուղարկվել նույն դատարան՝ գործն այլ կազմով նոր քննության համար:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի՝ 12.05.2008թ. վճռով հայցն ամբողջությամբ մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանի կողմից 29.09.2008թ. կայացված որոշմամբ հայցը բավարարվել է մասնակի՝ հագուստեղենի եւ անձնական օգտագործման իրերի պահանջի մասով բե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կանվել է եւ գործն այդ մասերով քննության է ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի 05.02.2009թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Դիմողը սահմանադրական դատարանում վիճարկում է օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը եւ գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 1, 3, 6, 14, 19, 42, 91 եւ 98 հոդվածներին, 18 հոդվածի 1-ին, 4-րդ մասերին, ուստի խնդրում է այն անվավեր ճանաչել:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված մրցակցության սկզբունքին:

Շարունակելով հիմնավորել օրենսգրքի վերոնշյալ դրույթի հակասահմանադրականությունը՝ դիմողն այնուհետև ներկայացնում է վերջինիս անհամապատասխանության հիմնավորումները ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 2-րդ մասին եւ 83.5 հոդվածին հակասելու տեսանկյունից: Վերոգրյալի կապակցությամբ դիմողը նշում է, որ ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասի ուժով կողմը կրում է այն փաստի ապացուցման պարտականությունը, որն իր կողմից է առանձնացվել, գիտակցվել, ընկալվել ու ներկայացվել որպես գործի ելքի համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստ: Հակառակ դեպքում, օրենսգրքի 48 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կրելու է այդ փաստը չապացուցելու բացասական հետեւանքները:

Դրան հակառակ, ապացուցման գործընթացի առաջին փուլում օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով դատարանն է որոշում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը: Հետեւաբար, ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան ենթադրվում է, որ կամ դատարանն ինքն է ստանձնելու իր կողմից կարեւորած փաստի ապացուցման պարտականությունը եւ այն չապացուցելու դեպքում կրելու դրա բացասական հետեւանքները, կամ ել կամայականորեն դրա ապացուցման պարտականությունը դնելու է կողմերից որեւէ մեկի վրա, անկախ այն հանգամանքից, թե վերջինիս կողմից տվյալ փաստը կարեւորվում է որպես գործի ելքի համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստ, եւ որ ավելի փատ՝ չապացուցելու դեպքում կողմը կրելու է դրա բացասական հետեւանքները:

ՀՀ Սահմանադրության 91 եւ 98 հոդվածներին հակասելու տեսանկյունից դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածը դատարանին իրավունք է տալիս միջամտել գործի ելքի համար էական նշանակություն

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելու հարցին, որով դատարանին վերագրվում է կողմերին վերապահված գործառույթ:

Դիմողը նաև գտնում է, որ դատարանը հենվելով օրենսդրական բարեփոխումների արդյունքում արդեն իսկ վերաշարադրված օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով ապացուցման առարկայի նկատմամբ իրեն վերապահված իրավունքի վրա՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա այնպիսի փաստ է առաջ քաշել, որը կողմերը որպես այդպիսին չեն կարեւորել:

4. Պատասխանողն՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու հիմքեր չկան:

Պատասխանողն անհրաժեշտ է համարում նշել, որ մրցակցային իրավունքն արդար դատաքննություն իրականացնելու միակ կամ բացարձակ նախապայմանը չէ եւ տարբեր ոլորտներում մրցակցային դատավարությունն ունի իր ուրույն դրսեւորումը: Մրցակցային դատաքննության սկզբունքի իրացումն ամենեւին չի նշանակում, որ յուրաքանչյուր կողմ ինքը պետք է կրի իր վկայակոչած հանգամանքների ապացուցման պարտականությունը, իսկ դատարանը պետք է հանդես գա սոսկ դիտողի դերում: Ընդհակառակը, դատարանի՝ ապացուցման հանգամանքների շրջանակը որոշելու իրավասությունը մեծացնում է հենց կողմի արդար դատաքննության իրավունքի իրացման հնարավորությունը:

Պատասխանողը գտնում է, որ դիմողի այն պնդումը, թե վիճարկվող դրույթով կարող են նախատեսվել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, հիմնազորկ է, քանի որ նույն տրամաբանությամբ կարելի է պնդել, որ դատական բոլոր ակտերը նույնապես հակասում են Սահմանադրության 42 և 83.5 հոդվածներին: Այլապես կստացվեր, որ դատարանի վճիռը ծնելով անձի համար որոշակի իրավունքներ ու պարտականություններ՝ պետք է ընդունվեր օրենքի ձեւով: Բացի դրանից, ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակի որոշման իրավասությունը դատարանին տրամադրված է օրենքով, հետեւաբար՝ որեւէ խախտման մասին խոսք չի կարող լինել:

Պատասխանողը նաև կարծում է, որ դիմողի այն պնդումը, թե վիճարկվող դրույթը խեղաքյուրում է դատարանի արդարադատական գործառույթի բովանդակությունը, անընդունելի է, քանի որ վիճարկվող դրույթով դատարանն ըստ էության ստանձնում է ոչ թե փաստարանի կամ դատավարության կողմի դեր, այլ իրեն վերապահված արդարադատություն իրականացնելու իրավասության շրջանակում պարզում գործի նշանակության համար կարեւորություն ունեցող էական հանգամանքները:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Պատասխանողը նաեւ գտնում է, որ դիմողի այն պնդումը, թե վիճարկվող դրույթն իր էությամբ իմացերատիվ բնույթ է կրում՝ ամրագրելով գործի ելքի համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշման հարցում դատարանի բացառիկ մենաշնորհը, հիմնազուրկ է, քանի որ օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի դրույթները ոչ միայն չեն հակասում, այլև լիովին համապատասխանում են Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջներին:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն ըստ էության վիճարկում է ոչ թե օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի դրույթն ամբողջությամբ, այլ խնդրո առարկա դրույթում տեղ գտած՝ «գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը» բառակապակցությունը:

Օրենսգրքն ապացուցման պարտականությանը եւ ապացուցման առարկային անդրադարձել է 48 հոդվածում, ըստ որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ինքն ապացուցի իր վկայակոչած փաստերը եւ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա:

Սակայն գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված ապացույցներն ինքնին չեն կազմում ապացուցման առարկա: Ապացուցման առարկա են կազմում միայն գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված այն ապացույցները, որոնք գործի լուծման համար էական նշանակություն ունեն:

Օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով ըստ էության նախատեսվում է ապացուցման առարկայի շրջանակներն ուրվագծելով՝ դատարանի իրավասությունը: Ապացուցման առարկան այն իրավաբանական (հիմնականում նյութափրավական բնույթի) փաստերի համակցությունն է, որոնք էական նշանակություն ունեն գործն ըստ էության լուծելու համար, եւ ենթակա են պարզելու դատական քննության ընթացքում: Յուրաքանչյուր գործով ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերի կազմը տարբեր է, այն կախված է կողմերի ներկայացրած պահանջներից ու առարկություններից:

Ապացուցման առարկայի մեջ մտնող նյութափրավական փաստերը հանգամանքներ են, որոնց առկայության կամ բացակայության հետ նյութական իրավունքի նորմերը կապում են քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների ծագումը, փոփոխումը, դադարումը, կամ որոնք արգելակում են իրավունքների եւ պարտականությունների առաջացմանը: Գործով այս փաստերը պարզելն անհրաժեշտ է տվյալ իրավա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման եւ գործն ըստ էության ճիշտ լուծելու համար: Դա էլ հաշվի առնելով որոշվում է ապացուցման առարկան, որն ապացուցողական գործունեության առաջին եւ ամենակարեւոր դատավարական գործողությունն է: Դատարանի վճիռը չի բխի գործի փաստական հանգամանքներից, հետեւարար՝ օրինական ու հիմնավորված լինել չի կարող, եթե գործին մասնակցող անձինք եւ դատարանը ճիշտ չորշեն ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքների շրջանակը եւ լրիվ չպարզեն դրանք:

Փաստական հանգամանքների այդ ամբողջությունը, որն անհրաժեշտ է նաև այլ իրավական հարցեր լուծելու համար, յուրաքանչյուր գործով ենթակա է պարտադիր պարզաբանման: Գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքների այդ ամբողջությունը կազմում է ապացուցման առարկայի հիմնական բովանդակությունը: Բայց դա դեռ բավարար չէ ամեն մի գործով քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օրյեկտիվությունն ապահովելու համար: Ապացուցման առարկան ավելի լայն հասկացություն է, դրա մեջ մտնում են նաև այն փաստական հանգամանքները, որոնց պարզաբանումն անհրաժեշտ է գործին ճիշտ լուծում տալու համար:

Յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքների ճիշտ սահմանումն անհրաժեշտ պայման է դատաքննության սահմանները որոշելու համար: Ապացուցման առարկայի շրջանակների անհիմն ընդարձակումը կարող է գործը ծանրաբեռնել ավելորդ նյութերով, որը պատճառ կհանդիսանա գործին չվերաբերող նյութերի կուտակմանը, դատավարության ձգձգմանը: Մյուս կողմից՝ ապացուցման առարկայի շրջանակների անհիմն սահմանափակումը կարող է պատճառ դառնալ գործի միակողմանի, ոչ լրիվ եւ ոչ օրյեկտիվ քննության համար:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապացուցման ինստիտուտը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-53 հոդվածներով: Այն ոչ միայն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու նախապայման է, այլև դատաքննության մրցակցության սկզբունքի իրականացման կարեւոր երաշխիք: Ապացույցները ներկայացնելու եւ պահանջելու կարգը նախատեսված է օրենսգրքի 49 հոդվածում, ըստ որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ինքը ներկայացնի ապացույցներ, որից հետեւում է, որ կողմերից յուրաքանչյուրն իրավասու է հայցի առարկայի շրջանակներում դատարանին ներկայացնել իր դիրքորոշման ճշմարտացիությունը հիմնավորող փաստարկներ (ապացույցներ): Ընդ որում, եթե տվյալ անձը հնարավորություն

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

շունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմուլ դատարան։ Օրենսգրքի 51 հոդվածը վերաբերում է ապացույցների բույլատրելիությանը եւ վերաբերելիությանը, իսկ 52 հոդվածը սահմանում է ապացուցելուց ազատվելու հիմքերը։

Ըստ օրենսգրքի 53 հոդվածի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օրյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ։

Այն հարցը, թե ով պետք է դատարանին ներկայացնի որոնվող փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստական տվյալները, թե դատավարության մասնակիցներից ում վրա է ընկնում ապացուցման ծանրությունը եւ հաստատման պարտականությունը՝ կարեւոր է ապացուցումը ճիշտ կազմակերպելու եւ ապացուցողական նյութի լրիվությունն ապահովելու համար։ Օրենսգրքում դա լուծվել է դատավարության մրցակցային ձևի պայմաններում կողմերի իրավահավասարության, անմիջականության եւ դատավարության ընդհանուր սկզբունքներից ելնելով, հաշվի առնելով տվյալ փաստն ապացուցելու մեջ կողմերի շահագրգության աստիճանը։

Միաժամանակ, անդրադառնալով վարչական վարույթում մրցակցության սկզբունքի դրսեւորման առանձնահատկության վերաբերյալ դիմոն եւ պատասխանող կողմերի դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սկզբունքն իր միակերպ դրսեւորումը չի կարող ունենալ արդարադատության տարբեր բնագավառներում (քաղաքացիական, քրեական, վարչական, սահմանադրական)։ Այդ առանձնահատկությունները մանրամասնված են օրենսդրության համապատասխան ակտերում եւ դրանց համեմատական վերլուծությունը դուրս է սույն գործի քննության առարկայից։ Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատաքննության մրցակցության սկզբունքի այս կամ այն դրսեւորումները պայմանավորված են վիճելի իրավահարաբերության բնույթով, սուրյեկտների կազմով, դատարանի առջեւ դրված կոնկրետ խնդիրների շրջանակով եւ այլն։

7. Օրենսգրքի վիճարկվող 48 հոդվածի համաձայն հայցային վարույթի գործով հայցվորը պետք է ապացուցի իր պահանջների հիմքում ընկած փաստերը, իսկ պատասխանողը, եթե չի ընդունում հայցը եւ հեճվում է որոշակի փաստերի վրա, պարտավոր է ապացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը, կամ եթե հայցվորն է առարկում պատասխանողի բերած փաստերի դեմ, ապա նա է պարտավոր ապացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը։ Նման իրավակարգավո-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բումը հետեւում է այն տրամաբանությանը, որ տվյալ փաստի վրա հիմնվող կողմն ավելի իրազեկ է եւ դատարանին կարող է ներկայացնել տվյալ փաստն ապացուցող հանգամանքները, եւ որ շահագրգոված կողմը կճեռնարկի բոլոր միջոցներն իր մատնանշած փաստն ապացուցելու համար:

Սահմանադրական դատարանը նաեւ փաստում է, որ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա է դատարանի կողմից որոշվում ապացուցման ենթակա հանգամանքների ծավալը: Ընդ որում, նման որոշումը կայացվում է ապացուցման գործընթացի առաջին՝ ապացույցների հավաքման փուլում եւ նպատակ է հետապնդում ապահովելու դատավարության արդյունավետությունը:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը դատարանի կողմից ամենեւին էլ չի նշանակում կողմերի իրավահավասարության կամ մրցակցության սկզբունքների խախտում, առավել եւս կողմերի միջեւ ապացուցման պարտականության անհավասար բաշխում: Ընդհակառակը, դրանով դատարանը կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կհաստատեն իրենց պահանջներն ու առարկությունները, հետեւաբար, փաստական հիմք կստեղծեն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու համար:

Վերոշարադրյալից հետեւում է, որ.

- դատարանն ապացույցներ չի հավաքում (ներկայացնում), այլ դատավարական պայմաններ (հնարավորություններ) է ստեղծում դրանք ժամանակին եւ անկաշկանդ ներկայացնելու համար,

- կողմերը (գործին մասնակցող անձինք) իրենք են ապացուցում այն, ինչ պնդում կամ առարկում են,

- ապացուցման գործընթացը, որպես քաղաքացիական գործով ըստ էության օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու առանձնահատուկ երաշխիք, որպես կանոն, տեղի է ունենում առաջին ատյանի դատարանում,

- գործով ներկայացված ապացույցների գնահատման կամ գործով արդարացի, հիմնավոր վճիռ (որոշում) կայացնելու հիմքում այս կամ այն ապացույցի նշանակությունը գնահատելու բացառիկ լիազորությունը պատկանում է դատարանին,

- ապացուցման գործընթացը (այդ ինստիտուտի իրավակարգավորումը) առանձնահատուկ է հանրային-իրավական վեճերով, պայմանավորված՝ մասնավոր-իրավական շահերի նկատմամբ հանրային շահի գերակայությամբ, հետեւաբար՝ մրցակցության սկզբունքի դրսեւորման առանձնահատկությամբ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8. Ապացույցները ներկայացվելուց հետո է միայն դատարանն անցնում դրանց գնահատմանը, որտեղ որոշվում է ձեռք բերված ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը: Օրենսգրքի 51 հոդվածը վերաբերում է ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության սկզբունքներին: Նշված երկու սկզբունքները բացառում են օրենքով սահմանված ապացույցներից դուրս այլ ապացույցներ դատարանին ներկայացնելու հնարավորությունը (թույլատրելիություն), ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերին չվերաբերող անհարկի և ավելորդ ապացույցներով դատարանին ծանրաբեռնելու հնարավորությունը (վերաբերելիություն): Միաժամանակ, նշված սկզբունքները կոչված են ապահովելու արդար դատարանության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի իրացումը:

Ապացույցների վերաբերելիությունը ներկայացված փաստերում պարունակող այն տեղեկություններն են, որոնց հիման վրա հաստատվում կամ հերքվում է գործով ապացուցման ենթակա այս կամ այն հանգամանքը: Որոշել ապացույցների վերաբերելիությունը, նշանակում է պարզել ապացույցների բովանդակության և նրանցով հաստատվող փաստերի միջև եղած օբյեկտիվ կապը:

Ապացույցների թույլատրելիությունը՝ վերաբերելիության ընդհանուր կանոնի լրացումն է, ըստ որի գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Բոլոր այն դեպքերում, երբ դատարանն իր ներքին համոզմամբ գտնում է, որ կողմերի ներկայացրած ապացույցներն անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար կամ դրանք ուղղված են այնպիսի փաստերի ապացուցմանը, որոնք շեղվում են գործից և առնչություն չունեն վերջինիս հետ, կամ ներկայացված են տվյալ գործի քննության համար օրենքով չնախատեսված ապացույցներ, օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի վիճարկող բառակապակցության ուժով դատարանին հնարավորություն է ընձեռվում դուրս թողնել դրանք ապացուցման առարկայի շրջանակներից: **Դատարանին վերապահված՝ վերը նշված իրավասությունն իրավաչափ է եւ բխում է արդար դատարանության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի էությունից:**

9. Սահմանադրական դատարանը նշում է, որ այլ խնդիր է, թե որքանով է օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասը երաշխավորում մրցակցության սկզբունքի իրացումը և այս տեսանկյունից որքանով են գործին մասնակցող անձինք

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ապահովված դատարանի հնարավոր կամայականություններից: Այս հարցը պարզելու նպատակով հարկ է օրենսգրքի վիճարկվող բառակապակցությունը դիտարկել օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի ողջ բովանդակության համատեքստում: Օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի «գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա» բառակապակցության առկայության պայմաններում դատարանը չի կարող առաջ քաշել ապացուցման ենթակա այնալիսի նոր հանգամանք կամ փաստ, որն ընկած չէ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիմքում: Օրենսգրքի վիճարկվող դրույթն իր վերոհիշյալ բառակապակցությանք կաշկանդում է դատարանին գործին մասնակցող անձանց ներկայացրած պահանջների եւ առարկությունների շրջանակով, ինչի արդյունքում երաշխավորվում է մրցակցության սկզբունքի պահպանումը եւ բացառվում այս տեսանկյունից դատարանի հնարավոր կամայականությունները:

Այդ է վկայում նաև դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերի ուսումնասիրությունը: Այս պայմաններում հիմնազուրկ է դիմողի այն պնդումը, թե նման դեպքերում ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան կամ դատարանն ինքն է ստանձնելու իր կողմից կարենորած փաստի ապացուցման պարտականությունը եւ այն չապացուցելու դեպքում կրելու դրա բացասական հետեւանքները, կամ էլ կամայականորեն դրա ապացուցման պարտականությունը դնելու է կողմերից որեւէ մեկի վրա եւ չապացուցելու դեպքում կողմը կրելու է դրա բացասական հետեւանքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ.**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**8 դեկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ- 845**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՇՄԱՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻՎՅՈՒՄ
(ԿԻՑ ԱՌԱՋՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՍՎՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

18 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարույրյոնյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփոլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի դեկտեմբերի 13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կրնվենցիայում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված 2009 թվականի նոյեմբերի 19-ին:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Զ. Բաղդասարյանի բա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ցատրությունները, հետազոտելով կոնվենցիան և գրծում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրվել է 2006 թվականի դեկտեմբերի 13-ին՝ Նյու Յորքում: Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիան (կից առարկությամբ) ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 30-ին: Առարկությունը վերաբերում է Աղյուսականի Հանրապետության կողմից սույն կոնվենցիայի վավերացման ընթացքում կատարված վերապահմանը:

Կոնվենցիայի նպատակն է աջակցել, պաշտպանել եւ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն եւ հավասարապես օգուզել մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց նկատմամբ:

2. Կոնվենցիայով սահմանվում են լճղիանուր սկզբունքներն ու պարտավորությունները, հավասարությունը եւ հաշմանդամության վրա հիմնված ցանկացած խորականության կանխարգելման մեջանիզմները, շեշտվում է այդ բնագավառում համագործակցության կարեւորությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հաշմանդամ երեխաների եւ կանանց պաշտպանության խնդիրներին:

3. Կոնվենցիան երաշխավորում է հաշմանդամ անձանց՝ կյանքի, օրենքի առաջ հավասարության, ազատության և անվտանգության, խոշտանգումների, շահագործման, բռնության և դաժան վերաբերմունքի բացառման, ազատ տեղաշարժի, խոսքի և կարծիքի ազատության, տեղեկատվության մատչելիության, անձնական և ընտանեկան անձեռնմխելիության, կրթության, առողջության, աշխատանքի ու զբաղվածության, սոցիալական, մշակութային, քաղաքական ու քաղաքացիական և այլ հանրահայտ իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

4. Կոնվենցիայի 34 հոդվածի համաձայն կիմնվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե /այսուհետ՝ ‘Կոմիտե/՝, որի 18 անդամներն ընտրվում են 4 տարի ժամկետով՝ մեկ անգամ վերընտրման իրավունքով: ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարը Կոմիտեի աշխատանքների արդյունավետ իրականացման համար տրամադրում է համապատասխան անձնակազմ եւ նյութական միջոցներ: Կոմիտեի անդամներին տրվում են այնպիսի արտոնություններ եւ անձեռնմխելիություն, որոնք սահմանված են ՍԱԿ-ի հարցերով առաքելություններ իրականացնող փորձագետների համար:

5. Կոնվենցիան սահմանում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն իր համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում, ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարի միջոցով Կոմիտեին ներկայաց-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նում է համապարփակ հաշվետվություն սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման ուղղված միջոցառումների եւ արձանագրված առաջընթացի մասին: Դրանից հետո մասնակից պետությունները ներկայացնում են հաշվետվություններ՝ առնվազն 4 տարին մեկ անգամ, կամ Կոմիտեի պահանջով՝ ցանկացած պահի:

6. Կոնվենցիայի համաձայն մասնակից պետությունները պարբերաբար հանդիպում են մասնակից պետությունների համաժողովում՝ քննարկելու համար կոնվենցիայի կիրարկման առնչողությունը հարցերը: Համաժողովը հրավիրվում է ՍԱՎ-ի գլխավոր քարտուղարի կողմից ոչ ուշ, քան կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո: Հետագա նիստերը հրավիրվում են ՍԱՎ-ի գլխավոր քարտուղարի կողմից՝ 2 տարին մեկ անգամ կամ համաժողովում կայացված որոշմամբ:

7. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ապահովել եւ օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների եւ իմնարար ազատությունների լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության վրա հիմնված ցանկացած խորականության,

- տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների առումով քայլեր ձեռնարկել իր առկա միջոցների առավելագույն չափով, ինչպես նաև միջազգային համագործակցության շրջանակներում, նպատակ ունենալով աստիճանաբար հասնել այդ իրավունքների լիակատար իրականացմանը,

- ձեռնարկել անիրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու հաշմանդամ երեխաների եւ կանանց զարգացումը, առաջխաղացումը եւ պաշտպանությունը,

- ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունն ու ապահովությունը վտանգավոր իրավիճակներում, այդ թվում՝ զինված հակամարտությունների, արտակարգ հումանիտար իրավիճակների եւ բնական աղետների դեպքում,

- ձեռնարկել անիրաժեշտ ու արդյունավետ միջոցներ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքն իրենց սեփականությունը տնօրինելու կամ ժառանգելու, սեփական ֆինանսական գործարքները վերահսկելու եւ բանկային վարկերից, հիպոքեկից եւ ֆինանսական վարկավորման այլ միջոցներից օգտվելու համար, ինչպես նաև երաշխավորել նրանց սեփականության անձեռնմխելիությունը,

- ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք չպահվեն ստրկության կամ ծառայության մեջ եւ մյուսների հետ հավասար իիմունքներով պաշտպանված լինեն հարկադիր կամ պարտադիր աշխատանքից,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ձեռնարկել արդյունավետ միջոցներ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորինս ինքնուրույն շարժունակությունը,

- ձեռնարկել օրենսդրական, վարչական, սոցիալական, կրթական եւ այլ համապատասխան միջոցներ՝ շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի բոլոր ձեւերից հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանելու համար ինչպես տանը, այնպես էլ դրսում՝ հաշվի առնելով նաև հարցի գենդերային կողմները,

- ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց եւ նրանց ընտանիքների՝ կենսապահովման բավարար մակարդակ ունենալու եւ սոցիալական պաշտպանության, մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը եւ այլն:

8. Կոնվենցիայում նախատեսված են առանձին դրույթներ՝ կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, դրանում վերապահումներ կամ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև մասնակից պետության կողմից այն չեղյալ հայտարարելու վերաբերյալ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2006 թվականի դեկտեմբերի 13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՍԱԿ-ի կոնվենցիայում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանդրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ-846**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ
ՈՒԺԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱ ԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

18 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 14-ին Մոսկվայում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարան 24.11.2009թ. նույ�ագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի մասին համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2009 թվականի հունիսի 14-ին:

2. Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող երկու հավելված՝ Հավելված 1. «Կանոնադրություն» եւ Հավելված 2. «ՕՍՀՈՒ-ի ուժի կիրառման կանոնները»:

3. Նշված համաձայնագրի նպատակն է զինված հարձակման, այդ թվում՝ ազրեսիային դիմագրավման եւ Կողմերի հավաքական անվտանգության հետ կապված այլ սպառնալիքների եւ մարտահրավերների հակագրման համար Կողմերի ջանքերը միավորելը, ինչպես նաև հաստատել Կողմերի ձգուումը՝ հավաքական հիմունքով ապահովել Կողմերի անվտանգությունը եւ կայունությունը:

4. Համաձայնագիրը հղում է կատարել մի շարք միջազգային համաձայնագրերի, մասնավորապես.

- 2000 թվականի հոկտեմբերի 11-ի «Հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորումների կարգավիճակի մասին» համաձայնագրին (ՀՀ կողմից վավերացվել է 2001թ. ապրիլի 4-ին՝ Ազգային ժողովի Ն-165-2 որոշմամբ (ՍԴՈ- 294)),
- 2001 թվականի մայիսի 25-ի «Հավաքական անվտանգության մասին 1992 թվականի մայիսի 15-ի պայմանագրի անդամ պետությունների հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմավորման ու գործունեության կարգի մասին» արձանագրությանը (ՀՀ կողմից վավերացվել է 2002թ. ապրիլի 3-ին՝ Ազգային ժողովի Ն-272-2 որոշմամբ (ՍԴՈ- 243)),
- 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Ազրեսիայի առաջացման կամ ագրեսիայի գործողության դեպքերում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետություններին ուազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու մեխանիզմի մասին» արձանագրությանը (ՀՀ կողմից վավերացվել է 2008 թ. դեկտեմբերի 3-ին՝ Ազգային ժողովի Ն-110-4 որոշմամբ (ՍԴՈ-775)):

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- կողայիցին հիմքի վրա ստեղծել Օպերատիվ արձագանքման հավաքական ուժեր (ՕՍՀՈՒ), որոնք Կազմակերպության հավաքական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների մշտական պատրաստականության բաղադրիչն են, եւ որոնք նախատեսված են անդամ պետությունների անվտանգությանն ուղղված մարտահրավերներին եւ սպառնալիքներին օպերատիվ կերպով արձագանքելու համար (հոդված 2, կետ 1 եւ կետ 2, մաս 1),

- ՕՀՀՈՒ-ի համարման համար՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, տրամադրել զինվորական համակազմեր եւ հատուկ նշանակության ուժերի կազմավորումներ՝ զինված ժամանակակից եւ համատեղելի սպառազինությամբ, ռազմական (հատուկ) տեխնիկայով, ինչպես նաև իրականացնել նրանց համալրումը, նյութատեխնիկական եւ ֆինանսական ապահովումը (հոդված 3, կետեր 2, 3),
- ընդունել ՕՀՀՈՒ-ի ուժի կիրառման կանոնները (հոդված 8),
- ինքնուրույն իրականացնել անձնակազմի նախապատրաստումը եւ ուսուցումը, ինչպես նաև օպերատիվ, մարտական եւ հատուկ պատրաստության համատեղ միջոցառումների ընթացքում, որոնք անցկացվում են ՀԱՊԿ պաշտպանության նախարարների խորհրդի եւ անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի կողմից հաստատվող ամենամյա ծրագրերին համապատասխան (հոդված 10, մաս 1),
- ապահովել, որպեսզի առաջադրված խնդիրների կատարման համար զինվորական համակազմերի պատրաստականությունն ապահովեն ռազմական կառավարման ՀՀ մարմինները՝ Կողմերի կողմից համաձայնեցված այն պահանջներին համապատասխան, որոնք ներկայացվում են այդ ստորաբաժանումների պատրաստականության հետ կապված (հոդված 10, մաս 2),
- իրականացնել ՕՀՀՈՒ-ի կազմի համար տրամադրած զինվորական համակազմերի եւ հատուկ նշանակության ուժերի կազմավորումների նյութատեխնիկական ապահովումը եւ ֆինանսավորումը (հոդված 11, մաս 1),
- ՕՀՀՈՒ-ի զինումը ժամանակակից եւ համատեղելի սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայի մատակարարման այն պահանջներին եւ պայմաններին համապատասխան, որոնք համաձայնեցվել են Կողմերի կողմից (հոդված 11, մաս 2),
- համաձայնագրի իրականացման ընթացքում ստացված՝ գաղտնի տեղեկատվություն պարունակող տեղեկությունների պաշտպանությունն իրականացնել ՀՀ օրենսդրությանը եւ ՀԱՊԿ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան (հոդված 12, կետ 1),
- ապահովել Կողմերի անվտանգության մարմինների (հատուկ ծառայության) եւ ներքին գործերի մարմինների (ոստիկանության) հատուկ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նշանակության ստորաբաժանումների (մասնագետների խմբերի) մասնակցությամբ գործողությունների նախապատրաստման եւ իրականացման ընթացքում դրանց կազմի, գործողությունների անցկացման հատուկ տեխնիկական հնարքների եւ տակտիկայի, սպառագինության, հատուկ միջոցների եւ հատուկ տեխնիկայի բնութագրությունների վերաբերյալ տեղեկատվության չտարածումը, ներառյալ այնպիսի տեղեկատվություն, որը բացահայտում է այլ տվյալներ, որոնց տարածումն արգելված է ուղարկող Կողմերի ազգային օրենսդրությամբ (հոդված 12, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հունիսի 14-ին Մոսկվայում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության օվերատիվ արձագանքման հավաքական ուժերի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴ.Ո.-847**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՆԵՐՈՒՄ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ

ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆԱԾՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

18 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող).

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 23-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջև մշակույթի, կրթության, երիտասարդության և գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնավիճելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանի բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջեւ մշակույթի, կրթության, երիտասարդության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 23-ին՝ Լյուքսեմբուրգ քաղաքում:

Համաձայնագրի նպատակն է զարգացնել երկու պետությունների միջեւ համագործակցությունը մշակույթի, կրթության, երիտասարդության եւ գիտության բնագավառներում, ինչպես նաև նպաստել Հայաստանի Հանրապետության եւ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության միջեւ բարեկամական հարաբերությունների հետագա զարգացմանն ու ամրապնդմանը, երկու ժողովուրդների առավել լայն ճանաչմանն ու փոխանունմանը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- համաձայնագրի շրջանակներում իրականացնել երկու երկրների միջեւ մշակույթի, կրթության, գիտության եւ երիտասարդության առնչողություններում փոխանակումներ, համատեղ կոնֆերանսներ եւ սիմպոզիումներ, կրթարոշակների փոխադարձ տրամադրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու համար, գրադարաննավարների ու բանգարանագետների փոխադարձ այցելություններ, համալսարանների, ինստիտուտների եւ դպրոցական հաստատությունների կողմից իրատարկված գիտական իրապարակումների, գրքերի, կրթական ձեռնարկների, ինչպես նաև հետազոտական, վիճակագրական եւ տեղեկատվական այլ նյութերի փոխանակում,

- հավասար թվով լիազոր ներկայացուցիչներից ստեղծել համատեղ հանձնաժողով, որի նիստերն առնվազն երեք տարին մեկ անգամ՝ այդ մարմինների միջեւ դիվանագիտական ուղիներով նախապես համաձայնեցված ժամկետներում, կգումարվեն հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում եւ Լյուքսեմբուրգում,

- սեփական միջոցների հաշվին ֆինանսավորել կրթարոշակի տրամադրումը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու համար:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքներից եւ երաշխիք են մարդու եւ քաղաքացու սոցիալ-մշակութային բնագավառի հիմնական իրավունքների ու ազատությունների իրացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Յ.

1. 2009 թվականի հունիսի 23-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջև մշակույթի, կրթության, երիտասարդության և գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 դեկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ-848



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 404 ՀՈԴՎԱԾԻ
2-ՐԴ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

22 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դամիելյանի (գեկուցող), Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,

մասնակցությամբ՝ դիմողի ներկայացուցիչ Հ. Բաղդասարյանի, գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրներաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացի Ալիկ Մարենոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Մարենոսյանի՝ 25.08.2009թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի վիճարկվող 404 հոդվածի 2-րդ մասը փոփոխվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն օրենքով:

Օրենսգրքի 404 հոդվածը վերնագրված է. «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք», որի 2-րդ մասը 2007 թվականի նոյեմբերի 28-ի խմբագրությամբ սահմանում է. «2. Վերաբննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաբննիչ դատարանում»:

Նույնաբնույթ նորմ է բովանդակում նաև ՀՀ դատական օրենսգրքի 58 հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ «Վերաբննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ եռթյան լուծող դատական ակտերը անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաբննիչ դատարանում։ Բացառություն են կազմում այն ակտերը, որոնք վերաբննության կարգով բողոքարկման ենթակա չեն»։

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին։ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 29.08.2007թ. դատավճռով Ա. Մարենոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104 հոդվածի 1-ին մասով եւ դատապարտվել ազատազրկման 9 տարի 6 ամիս ժամկետով։

ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի՝ 03.12.2007թ. դատավճռով առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողնվել է անփոփոխ, իսկ վերաբննիչ բողոքը՝ առանց բավարարման։

25.07.2008թ. ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել է ՀՀ զինվորական դատախազի բողոքը եւ բեկանելով ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի՝ 03.12.2007թ. դատավճիռը՝ գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության։

12.11.2008թ. ՀՀ վերաբննիչ քրեական դատարանը բեկանելով եւ փոփոխելով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 29.08.2007թ.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատավճիռը՝ Ա. Մարենոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով եւ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 15 տարի ժամկետով:

25.02.2009թ. ՀՀ վճռաբեկ դատարանն Ա. Մարենոսյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

30.04.2009թ. ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է նաև Ա. Մարենոսյանի բողոքը:

3. Դիմողը սահմանադրական դատարանում վիճարկում է օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասը եւ գտնում է, որ դրա դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին, ուստի խնդրում է այն անվագեր ճանաչել:

Դիմողը գտնում է, որ նշված քրեադատավարական նորմն իր էությամբ չի համապատասխանում ինչպես ՀՀ Սահմանադրության ոգուն, այնպես էլ առողջ տրամաբանությանը: Սահմանադրությունը մարդուն եւ քաղաքացուն իրավական հնարավորություն է տալիս արդյունավետ միջոցներով պաշտպանելու եւ վերականգնելու իր խախտված իրավունքները: Սինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասն արգելում է անձին օգտվելու իր սահմանադրական իրավունքներից:

Դիմողը նշում է, որ վերոհիշյալ նորմի վերլուծությամբ կարելի է հանգել հետեւյալ եզրակացությանը.

- պաշտպանը, ով վարույթին մասնակցել է վերաքննության փուլում, վճռաբեկ բողոք բերելու իրավունք չունի, քանի որ ինքը վերաքննիչ բողոք չի բերել,

- եթե առաջին ատյանի դատարանի դատավճիռը կողմին բավարարում է, եւ նա բողոք չի բերել, այն վերաքննիչ դատարանում բեկանվելու դեպքում կողմը զրկվում է վճռաբեկ բողոք բերելու իրավունքից,

- ստացվում է, որ անկախ բավարարման աստիճանից, միեւնույն է, կողմը պետք է բողոքարկի առաջին ատյանի դատարանի դատավճիռը, այլապես վճռաբեկ բողոք բերելու իրավունք չի ունենա,

- վերաքննիչ դատարանի կողմից բույլ տրված նյութական եւ դատավարական նորմերի խախտումների դեմ բողոքարկել չի թույլատրվում, քանի որ վերաքննիչ բողոքում դրա հիմքերը նշված չեն եղել:

Դիմողի կարծիքով, այս նորմի կիրառումը վճռաբեկ դատարանին հնարավորություն է տալիս խուսափելու արդարադատություն իրականացնելու իր սահմանադրական պարտականություններից, դրանք իրականացնել հայեցողական կարգով:

Դիմոդը գտնում է, որ անընդունելի է այն մտայնությունը, թե Սահմա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրությամբ վճռաբեկ դատարանին տրված կարգավիճակով «դասական իմաստով» այն դադարում է դատական ատյան լինելուց: Վճռաբեկ դատարանն ինքն իրեն զրկել է գործը վերանայող դատական երրորդ՝ բարձրագույն դատական ատյան լինելուց, այնինչ Սահմանադրությամբ տրված բարձրագույն դատական ատյանի լիազորություններն օրենքով չեն կարող սահմանափակվել եւ դատարանին «բույլատրել» հայեցողական մոտեցում ցուցաբերել իր «սահմանադրական առաքելությունն իրականացնելու գործում»:

4. Պատասխանողն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գտնում է, որ օրենսգրքով սահմանված հիշյալ դրույքն իր բնույթով չի սահմանափակում անձի՝ վերադաս դատարան դիմելու իրավունքը, այլ հստակ սահմանում է ՀՀ վճռաբեկ դատարան դիմելու կարգն ու պայմանները:

Պատասխանողը միաժամանակ նշում է, որ վիճարկվող հողվածում խոսքը վերաբերում է դատական ակտին, այլ ոչ թե անձին: Հետեւաբար, վիճարկվող հողվածը չի արգելում պաշտպանին վճռաբեկ բողոք բերել այն դեպքում, եթե վերաքննիչ բողոք բերել էր վերջինիս վստահորդը:

Պատասխանողի կարծիքով, դիմողի այն դիրքորոշումը, ըստ որի՝ եթե վերջինս վերաքննիչ բողոք չի բերել, ապա այն վերաքննիչ դատարանում բեկանվելու դեպքում զրկվում է վճռաբեկ բողոք բերելու իրավունքից, անընդունելի է այն հիմնավորմամբ, որ վերաքննիչ դատարանը ոչ թե գործն ըստ էության լուծող դատարան է, այլ գործը քննում է վերաքննիչ բողոքում նշված հիմքերով եւ ծավալով: Եթե վերաքննիչ դատարանը մյուս կողմի վերաքննիչ բողոքի հիման վրա բեկանել է ստորադաս դատարանի դատական ակտը, ապա դա արել է սուկ մյուս կողմի վերաքննիչ բողոքի հիմքերով եւ ծավալում: Բայց, եթե վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանել է մյուս կողմի վերաքննիչ բողոքում ամրագրված հիմքերով, ապա կողմը վճռաբեկ դատարանում բողոք ներկայացնելիս կմատնանշեր, թե մյուս կողմի վերաքննիչ բողոքում նշված հիմքերն ինչու չպետք է վերաքննիչ դատարանը հիմք ընդուներ եւ ակտը բեկանելը: Հակառակ դեպքում, եթե վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան դիմելիս կողմերն ազատ լինեն, ցանկացած հիմնավորում նշելուց, ապա եւ վերաքննիչ, եւ վճռաբեկ դատարանները կհանդիսանային գործն ըստ էության քննող դատարան չէ եւ այն քննում է վերաքն-

Պատասխանողի կարծիքով, դիմողի այն պնդումը, ըստ որի՝ անկախ բավարարման աստիճանից, միեւնույն է, կողմը պետք է բողոքարկի առաջին ատյանի դատարանի դատավճիռը, այլապես վճռաբեկ բողոք բերելու իրավունք չի ունենա, նույնապես անընդունելի է, քանի որ վերաքննիչ դատարանը գործն ըստ էության քննող դատարան չէ եւ այն քննում է վերաքն-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ահշ բողոքում նշված հիմքերով եւ ծավալով, հետեւաբար՝ առաջին ատյանի դատարանի դատավճիռը թեկանել հնարավոր է միայն վերաքննիչ բողոքում թերված հիմքերի հիմնավորվածության դեպքում:

Ինչ վերաբերում է դիմոնի այն դիրքորոշմանը, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական եւ դատավարական նորմերի խախտումների դեմ բողոքարկել չի թույլատրվում, քանի որ վերաքննիչ բողոքում դրա հիմքերը նշված չեն եղել, ապա պատասխանողը գտնում է, որ վիճարկող դրույթում նման սահմանափակման մասին խոսք չի գնում:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկող դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու հիմքերը չկան:

5. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև սույն գործին անմիջականորեն առնչվող այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են.

նախ՝ դատական իշխանության համակարգում վճռաբեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական տեղը եւ դերը,

երկրորդ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի բովանդակությունը եւ դրա իրացման երաշխավորումն օրենսգրքում եւ այլ իրավական ակտերում,

երրորդ, դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորվածությունը դատական ակտերի բողոքարկման գործող կարգում,

չորրորդ, դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում արդարադատության արդյունավետության եւ անձի իրավունքների դատական պաշտպանության երաշխավորումն օրենսդրական փոփոխություններում:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հենվում է նշված որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումների վրա եւ նշում, որ ՀՀ Սահմանադրությունը եւ օրենքները նախատեսում են դատական ակտերի օրինականությունը եւ հիմնավորվածությունն ստուգելու այնպիսի արդյունավետ միջոց, ինչպիսին է դրանց բողոքարկումը վերադաս դատական ատյան: Այսպես, վերաքննության կարգով բողոքարկման ենթակա ակտերի շրջանակը որոշված է ՀՀ դատական օրենսգրքի 58 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ ՀՀ քր. դատ.օր.-ի 376.1 հոդվածով, իսկ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա ակտերի շրջանակը որոշված է ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 2-րդ եւ 5-րդ մասերով եւ ՀՀ քր. դատ.օր.-ի 403 հոդվածով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

24 հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ քրեական գործերով դատարանի դատավճիռը եւ որոշումները կարող են վերանայել միայն համապատասխան վերաբաս դատարանները՝ օրենսգրքով սահմանված կարգով։ Օրենսգրքի 377 հոդվածի համաձայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ բերված վերաբննիշ բողոքներով գործերը քննում են քրեական վերաբննիշ դատարանը, իսկ 403 հոդվածի համաձայն վճռաբեկ դատարանը վերանայում է վերաբննիշ դատարանի դատական ակտերը։

Դատական ակտերի նման հաջորդականությամբ վերանայումն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասով սահմանված հիերարխիայով, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաբննիշ դատարանները եւ վճռաբեկ դատարանը,...»։ Այս դրույթով Սահմանադրությունն ամրագրել է ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան համակարգը։

Ըստ Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականների՝ տարբեր մոտեցում է ցուցաբերվում դատական տարրեր ատյանների իրավասությունների սահմանման ու դրանց իրականացման կարգերին, ընդ որում, երրորդ ատյանի դատարան բողոքներ պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնարանմանը։

Այս մոտեցումները բխում են նաև ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, որի շրջանակներում է, որ օրենսդիրը հնարավորություն է տվել ՀՀ վճռաբեկ դատարանին ոչ բոլոր գործերը քննության ընդունել։

Այնուհանդերձ, վճռաբեկ դատարանի հայեցողական լիազորությունների շրջանակները չեն կարող անսահմանափակ լինել, եւ օրենքն այնպիս պետք է կարգավորի հարցը, որպեսզի չխախտվեն անձի սահմանադրական իրավունքները։ Այլապես դա ոչ միայն չի նպաստի արդարադատության իրականացմանը, այլև հնարավորինս կխոչընդոտի սահմանադրական նորմերի անմիջականորեն գործելուն եւ կխարարի խախտված իրավունքները վերականգնելու ինստիտուտը՝ անձին զրկելով իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից։

6. ՀՀ սահմանադրական դատարանն օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի հետ կապված առանձին հոդվածների սահմանադրականությունը որոշելու շրջանակներում արտահայտել է իր իրավական դիրքորոշումները 11.04.2007թ. ՍԴ-691 որոշման մեջ։

Սույն գործով վիճարկվող օրենքի նորմը ներառված է օրենսգրքի 11-րդ բաժնում, որը վերնագրված է՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում»։ Դրանում նախատեսված են վճռաբեկության կարգով դատավճիռների ու որո-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

շումների վերանայման դեպքերը, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, սահմանված են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, վճռաբեկ բողոքի բովանդակությունը եւ դատավարական բոլոր այն ընթացակարգերը, որոնք կազմում են վճռաբեկ դատարանի վարույթի բովանդակությունը: Նշված բաժնում տեղ գտած նորմերը եւ դրույթները փոխկապակցված են եւ լրացնում են միմյանց:

Հաշվի առնելով այն խնդրի առանձնահատկությունը, որի լուծման համար է կոչված վճռաբեկ դատարանը, օրենսդիրը սահմանել է ինչպես այդ մարմնին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, այնպես էլ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու իիմբերը:

ՀՀ վճարեկ դատարանին բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը եւ նրանց իրավունքները նշված են օրենսգրքի 404 հոդվածում: Դրանք են՝

1) դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ դիմոնդները,

2) զիսավոր դատախազը եւ նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է բողոքարկման ընդհանուր կանոնը, նախատեսված է, որ վճռաբեկ դատարան կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող եւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները: Օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասը սահմանում է նաև բողոքարկման պարտադիր այլ պայմանները: Մասնավորապես հոդվածի 2-րդ մասի տառացի մեկնաբանությունից բխում է, որ վճռաբեկության կարգով բողոքարկումը սահմանափակվում է այն դեպքերում, եթե վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը նույն հիմքերով չի բողոքարկվել վերաքննիչ դատարանում:

Նշված իրավակարգավորման իրավաչափությունը հարկ է գնահատել ՀՀ եռաստիճան դատական համակարգում դատական ակտերի բողոքարկման, վերաքննության և վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման վարույթների առանձնահատկությունների, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված՝ «Հայատանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն օրենքով քրեադատավարական օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների համատեքստում։ Վերջիններիս համաձայն՝ ընդիանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

միայն վերաքննության կարգով, եւ վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով վերանայում է վերաքննիչ դատարանի դատական ակտը: Կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385 հոդվածի 1-ին մասում ամրագրվեց նաև դրույթ, որի համաձայն վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է **վերաքննիչ բողոքի հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում:**

Բացի դրանից, վերաքննիչ դատարանում եւ վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները համապատասխանաբար նախատեսող 385 եւ 415 հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ, պայմանավորված այդ դատարանների գործառույթով, վերաքննիչ ու վճռաբեկ վարույթների սահմաններն էապես տարբեր են:

Վերոհիշյալ դրույթները դիտարկելով համակարգային փոխկապակցության մեջ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը նպատակ է հետապնդում վերաքննության կարգով դատական ակտի բողոքարկումը՝ որպես վճռաբեկության կարգով դատական ակտը բողոքարկելու պարտադիր նախապայման, ապահովել ոչ միայն ձեւական, այլև բովանդակային առումով՝ հնարավորություն տալով վճռաբեկ դատարանին անդրադառնալու այն հանգամանքներին, որոնք վերաքննության կարգով հետազոտվել եւ գնահատվել են, որոնց վերաբերյալ վերաքննիչ դատարանն արտահայտել է իր դիրքորոշումը:

7. Օրենսգրքի վիճարկվող հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունից բխում է, որ վճռաբեկ դատարանը գործն ըստ եռթյան քննող դատարան չէ, այլ ստուգում է դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, հետեւաբար՝ անձը չի կարող վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե դատական ակտը նույն հիմքերով չի բողոքարկել վերաքննիչ դատարանում: Այսինքն՝ բողորում նշված հիմքի (հիմքերի) վերաբերյալ ստորադաս դատական ատյաններում քննություն չի կատարվել, ապացույցներ չեն հավաքվել, հետազոտվել ու գնահատվել, որը վճռաբեկ դատարանին հնարավորություն կտար ստուգելու տվյալ դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Որքան էլ ընդունելի է նման նոտեցումը, այնուամենայնիվ, օրենքով հստակ չի նախատեսվել իրավակարգավորումն այնպիսի դեպքում, եթե դատապարտյալը, համաձայն լինելով առաջին ատյանի դատարանի դատավճռին՝ այն չի բողոքարկել վերաքննության կարգով, մինչդեռ մեղադրանքի կողմի (դատախազի, տուժողի) բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը կայացրել է նոր դատական ակտ, որով բեկանել է առաջին ատ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

յանի դատարանի արդարացման դատավճիռը եւ կայացրել է մեղադրական դատավճիռ կամ առաջադրված մեղադրանքի սահմաններում կիրառել է ավելի ծանր հանցագործության համար օրենք կամ նշանակել է ավելի խիստ պատիժ: Օրենսգրքի 394, 395, 397-400 հոդվածներով նախատեսված վերոհիշյալ լիազորություններն իրականացնելով՝ վերաքննիչ դատարանը կայացնում է դատավճիռ, որն ըստ էության դառնում է նոր, առաջին անգամ ընդունված դատական ակտ եւ որն օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասի համաձայն չի կարող բողոքարկվել վճռաբեկ դատարանում:

Արդարացման դատավճիռը բեկանելու և մեղադրական դատավճիռ կայացնելու, առաջադրված մեղադրանքի սահմաններում ավելի ծանր հանցագործության համար դատապարտելու կամ առաջին ատյանի դատարանի նշանակած պատժից ավելի խիստ պատիժ նշանակելու, ինչպես նաև հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով փոխելու, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թերեւ հանցագործության համար, առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու՝ գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաքննիչ դատարանի լիազորությունների պայմաններում օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասում նախատեսված պայմանի տառացի մեկնաբանությունը փաստորեն վճռաբեկ բողոք բերելու իրավունքից կարող է գրկել դատավարության բոլոր մասնակիցներին (դատապարտյալ, պաշտպան, մեղադրող, տուժող եւ այլն):

Վիճարկվող հոդվածի 2-րդ մասի նման կիրառումն ուղղակի հակասության մեջ կմտնի ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճոի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք»:

Բացի դրանից, նման մեկնաբանումը չի նպաստի արդարադատության լիարժեք իրականացնանը, դատական սխալները շտկելու և միասնական դատական պրակտիկա ձեւավորելու գործին: **Վերաքննիչ դատարանի ըստ էության նոր դատավճությունը բողոքարկումը վճռաբեկ դատարան պետք է մատչելի լինի դատավարության մասնակիցների համար:** Նորմի առկա ձեւակերպումը ենթադրում է, որ դատավարության մասնակիցը չի կարող առանց վերաքննիչ բողոքի շրջանակներում առաջին ատյանի դատարանի ակտը բողոքարկելու այն բողոքարկել վճռաբեկ դատարան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի պահանջը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի գործառույթները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի վիճելի նորմի մեկնաբանությունը եւ կիրառումը

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պետք է ապահովի վճռաբեկ բողոքի պարտադիր ընդունումն ու քննությունը բոլոր այն դեպքերում, երբ վերաբննիչ բողոքի շրջանակներում վերաբննիչ դատարանը շահագրգիռ կողմի բողոքի քննության արդյունքներով կայացրել է առաջին ատյանի դատարանի դատական ակտից տարբերվող՝ ըստ էության նոր, դատական ակտ: Նման մոտեցումը ոչ միայն կնպաստի դատական տվյալ ատյանի կողմից առավել ամբողջական նախադեպի ձեւավորմանը, այլև էապես կրարձրացնի արդարադատության արդյունավետությունը:

Ելնելով զործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63,64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**22 դեկտեմբերի 2009 թվականի
ՍՊԸ-849**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՑՅՈՒՐԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄՎՄԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՎՄԻՆ»
ԱՐՁԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

12 Խունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թողյանի, Մ. Թոփոլյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավիրությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 17 նոյեմբերի 2009թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացարությունը, հետազոտելով արձանագրությունները եւ գործում առկա մյուս փաստաբերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ դիմանագիտական հարաբերությունների հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններն ստորագրել են Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարները 2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում:

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում ցանկացած գրավոր համաձայնություն, «...որ ձեւակերպվել է պայմանագրի, համաձայնագրի, կոնվենցիայի, հուշագրի, **արձանագրության** տեսքով կամ որեւէ այլ անվանումով փաստաբերի տեսքով, կամ որն արտահայտվել է նոտաների կամ նամակների փոխանակումով»:

Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն **միջազգային պայմանագրերը** ենթակա են վավերացման ՀՀ Ազգային ժողովի կողմից: Ընդ որում, օրենքի 7-րդ հոդվածի համաձայն **միջազգային պայմանագրով** կարգավորվող հարաբերություններ են, մասնավորապես, որեւէ երկրի հետ քաղաքական, համագործակցության կամ հյուպատոսական հարաբերությունները:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայով (հոդվածներ 2, 14), ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ կետի ե) ենթակետով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով (հոդվ. 24) սահմանված է նաև, որ վավերացման են ենթակա բոլոր այն միջազգային պայմանագրերը, որոնցով նախատեսվում է վավերացում:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված նախնական վերահսկողության կարգով որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

2. Ըստ գործի նյութերի՝ Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո երկու հարեւան երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունները չեն հաստատվել, իսկ դրանց բացակայության պայմաններում եւ պատճառով կուտակվել են բազմաթիվ իրավապայմանագրային խնդիրներ, որոնք մեկ ակտով՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ, լուծվել չեն կարող: Այդ նկատառումով, բացի դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրությունից, ստորագրվել է երկու պետությունների միջեւ հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունը: Ու թեեւ երկու արձանագրությունները ձեւական տեսակետից առանձին փաստաթղթեր են, սակայն դրանց իրավակարգավորման առարկաները փոխապայմանավորված են ու փոխլրացնող, ստորագրվել են միեւնույն օրը, կապված են միմյանց կատարվող հղումներով, դրանցով ստանձնվող փոխադարձ պարտավորությունները նույնպես փոխակապակցված են: Նշված հանգամանքներից ելեկով դրանց վավերագրերը փոխանակվելու են միաժամանակ և դրանք ուժի մեջ են մտնելու միեւնույն օրը: Ընդ որում, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված է, որ «պայմանագիր» նշանակում է պետությունների միջև գրավոր ձևով կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն, **անկախ նրանից, այդ համաձայնությունը պարունակվում է մեկ կամ երկու, կամ միմյանց հետ կապված մի քանի փաստաթղթերում**, ինչպես նաև անկախ դրա կոնկրետ անվանումից:

Հիշյալ երկու արձանագրությունները միասին առաջին քայլն են, որոնք իրավական հիմք են հանդիսանում երկու պետությունների իրավագործության շրջանակներում միջակայծական հարաբերությունների կարգավորմանն ուղղված հետագա գործողությունների համար:

3. Քննության առարկայի շրջանակներում ներկայացված արձանագրությունների ուսումնասիրությունը վկայում է, որ երկու երկրները, հիմք ընդունելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, վկայակոչելով միջազգային բազմակողմ համաձայնագրերով ստանձնած իրենց պարտավորությունները, առաջնորդվելով, մասնավորապես, ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված՝ միջազգային խաղաղության ու ան-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վտանգությանը նպաստելու, անդամ պետությունների ինքնիշխան հավասարությունը ճանաչելու հանձնառությամբ, նպատակ ունենալով պետական մակարդակով երկխոսության ժավալման միջոցով հասնել տարրեր ոլորտներում միջազետական բնականոն հարաբերությունների հաստատման ու զարգացման՝ փոխադարձության հիման վրա **համաձայնել են.**

- հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961 թվականի կոնվենցիային համապատասխան եւ փոխանակել դիվանագիտական ներկայացնություններ,

- բացել ընդհանուր սահմանը «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում,

- երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջեւ կանոնավոր կերպով անցկացնել քաղաքական խորհրդակցություններ,

- իրականացնել երկու ժողովուրդների միջեւ փոխվաստահության վերականգնմանն ուղղված պատմական հարբության երկխոսություն, այդ թվում պատմական փաստաթղթերի եւ արխիվների անկողմնակալ գիտական ուսումնաժողություն՝ առկա խնդիրների սահմանման ու առաջարկների ձեւակերպման համար,

- առավելագույնս օգտագործել երկու երկրների միջեւ գոյություն ունեցող՝ տրանսպորտային, հաղորդակցության եւ էներգետիկ ենթակառուցվածքներն ու ցանցերը եւ միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ,

- ստեղծել երկկողմ իրավական դաշտ՝ երկու երկրների միջեւ համագործակցությունը խթանելու նպատակով,

- համագործակցել գիտության եւ կրթության ոլորտներում համապատասխան հաստատությունների միջեւ հարաբերությունները խրախուսելու, ինչպես նաև մասնագետների եւ ուսանողների փոխանակումը խթանելու միջոցով եւ աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման եւ համատեղ մշակութային ծրագրեր սկսելու նպատակով,

- համագործակցություն հաստատել հյուպատոսական բնագավառում՝ Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի 1963 թվականի կոնվենցիայի համաձայն, երկու երկրների քաղաքացիներին անհրաժեշտ աջակցություն եւ պաշտպանություն ցուցաբերելու նպատակով,

- ձեռնարկել կոնկրետ միջոցներ երկու երկրների միջեւ առեւտուրը, գրոսաշրջությունը եւ տնտեսական համագործակցությունը զարգացնելու նպատակով,

- սկսել երկխոսություն եւ ամրապնդել համագործակցությունը բնապահպանական հարցերով:

«ԱՎՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Կողմերը նաեւ համաձայնել են ստեղծել միջկառավարական երկկողմ հանձնաժողով, որը բաղկացած կլինի առանձին ենթահանձնաժողովներից: Միջկառավարական հանձնաժողովի եւ նրա ենթահանձնաժողովների աշխատաձերի մշակման նպատակով սահմանված ժամկետում կստեղծվի աշխատանքային խումբ՝ կողմերի արտգործնախարարների դեկավարությամբ: Համաձայնեցված են աշխատաձերի հաստատման կարգը, Միջկառավարական հանձնաժողովի եւ ենթահանձնաժողովների աշխատանքներն սկսելու ժամանակացույցը: «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության իրազործման համար երկու կողմերի համաձայնեցրած ժամանակացույցը եւ տարրերը ներկայացված են Արձանագրության անբաժանելի մասը կազմող հավելվածում:

Կողմերի փոխհամաձայնությամբ ստանձնվող վերոհիշյալ պարտավորությունները, ինչպես նշվեց, փոխպայմանագրված են, որից ելնելով «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններն ուժի մեջ են մտնում նույն օրը՝ վավերագրերի փոխանակմանը հաջորդող առաջին ամսվա առաջին օրը: Դա նաեւ ենթադրում է, որ այդ արձանագրություններից մեկն առանց մյուսի իրավաբանական ուժ ստանալ ու գործել չի կարող:

Արձանագրությունները կազմված են հայերեն, բուրքերեն եւ անգլերեն՝ հավասարազոր երկու բնօրինակներով: Մեկնարանության տարրերության դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տեքստին, որը նույնպես ուսումնասիրվել է սահմանադրական դատարանի կողմից:

4. Սահմանադրական դատարանն իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունների, արձանագրությունների համատեքստի, առարկայի ու նպատակների սահմանադրաբանական բովանդակության համալիր վերլուծության հիման վրա արտահայտում է հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններով ստանձնվող փոխադարձ պարտավորությունները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան, ունեն բացառապես երկկողմանի միջպետական բնույթ եւ չեն կարող վերաբերել ու տարաբնույթ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հղումներով վերագրվել որեւէ երրորդ կողմի կամ վերջինիս հետ սույն արձանագրություններն ստորագրած կողմերի փոխհարաբերություններին.

բ) միջազգային պայմանագրերի նախարաններում համընդիանուր ճանաչում ու լայն կիրառում գտած՝ «հաշվի առնելով», «նկատի ունենալով», «ճանաչելով», «նշելով», «ղեկավարվելով», «ձգտելով», «գիտակցելով», «կարեւորելով», «հաստատելով», «վերահաստատելով», «հավաստելով», «վկայակոչելով», «հիշեցնելով», «ընդունելով», «համոզված լինելով» եւ այլ եզրույթներն արձանագրում են գոյություն ունեցող, փաստացի իրողություններ, ցանկություններ, նպատակներ, ձգտումներ, որոշակի ընդհանուր սկզբունքներ եւ այլն, որոնք նկատի ունենալով՝ պայմանագրի կողմերը փոխադարձության սկզբունքով համաձայնում են ստանձնել որոշակի միջազգային իրավական պարտավորություններ: Հիշյալ արձանագրություններով ստանձնվող երկու կոնկրետ պարտավորությունները՝ «...հաստատել դիվանագիտական հարաբերություններ» եւ «...բացել ընդհանուր սահմանը», ունեն փոխադայմանավորված ելակետային նշանակություն: Հետեւաքար, այդ արձանագրություններում ամրագրված մյուս բոլոր պարտավորությունները միջազգային իրավական ուժ կարող են ունենալ Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջև փաստացի սահմանի բաց լինելու եւ կոնկրետ դիվանագիտական հարաբերությունների առկայության դեպքում, **որը ենթադրում է անհրաժեշտ նախադրյալների ապահովում կողմերի ստանձնած պայմանագրային պարտավորությունները կատարելու համար.**

գ) նշված արձանագրությունները չեն նախատեսում վիճելի հարցերի լուծման, պայմանագրային պարտավորությունների կասեցման կամ դադարեցման ընթացակարգեր ու պայմաններ: Առավելապես շեշտադրումը կատարվում է ցանկությունների, նպատակների, հարաբերությունների հետագա զարգացման նախադրյալների ստեղծման մտադրությունների վրա: Ուստի սահմանադրական դատարանը նկատի է առնում, որ երկու երկրների միջեւ տարրեր ոլորտներում հարաբերությունների հետագա հաստատումն ու զարգացումը խարսխված կլինի երկու պետությունների միջև գրավոր ձևով կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող կոնկրետ համաձայնությունների վրա (համաձայն Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի), որոնցով ստանձնվող պարտավորությունների սահմանադրականության գնահատման հարցը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն կդառնա ինքնուրույն քննության առարկա.

դ) «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյամբ նախատեսված՝ ընդհանուր սահմանը բացելու վերաբերյալ կողմերի հանձնառության շրջանակներում Հայաստանի Հանրապետության հանձնառությունը վերաբերելի է սահմանային անցակետերի բնականոն գործունեությունն իր կողմից ապահովելու հետ կապված իրավակազմակերպչական ու կառուցակարգային խնդիրները լուծելու պատրաստակամությանը.

Ե) միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության համար իրավաբանական ուժ կարող են ունենալ միայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորման շրջանակներում՝ նկատի ունենալով միջազգային իրավունքի տեսանկյունից դրանց վավերականության ու ՀՀ Սահմանադրությամբ սահմանված ընթացակարգով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս լինելու հանգամանքները:

5. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինատեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջապետական հարաբերություններում չեն կարող մեկնարանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի ՀՀ Սահմանադրության նախարանի դրույթներին եւ Հայաստանի անկախության մասին հոչակագրի 11-րդ կետի պահանջներին:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, որպեսզի Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվող քայլերը՝ նախատեսվող պարտավորությունների ստանձնման եւ դրանց կատարումն անհրաժեշտ օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքներով ապահովելու ուղղությամբ, ներդաշնակ լինեն սույն որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումներին եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից, հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**12 հունվարի 2010 թվականի
ՍՊԸ - 850**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐքԻ 343 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.**

Քաղ. Երեւան

14 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Ս. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի և 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դրսքաց նիստում բանակոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343 հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 08.06.2009թ. նուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 10 նոյեմբերի 2009թ. թիվ ՍԴԱՌ-98

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը հետաձգվել էր մինչեւ 2009թ. դեկտեմբերի 1-ը՝ նախատեսելով վերսկսված գործի դատաքննությունը շարունակել բանավոր ընթացակարգով:

Լսելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսեւրվել է վկայի կամ տուժողի կամ պաշտպանի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ այլ գործողություն կատարելով եւ վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝ պատճում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամսի ժամկետով»:

2. Դիմող կողմը նշում է, որ վիճարկվող նորմը որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւրող սուրբեկտ է դիտարկում միայն վկային, տուժողին եւ պաշտպանին: Քրեական դատավարության մյուս մասնակիցները եւ մասնակցող անձինք նշված հանցակազմի սուրբեկտներ չեն: Նման մոտեցման արդյունքում վիճարկվող նորմն անհավասար դրության մեջ է դնում, մասնավորապես, պաշտպանին՝ դատավարության մյուս մասնակիցների համեմատ, քանի որ նույնպիս արարքի համար պաշտպանը կարող է ենթարկվել քրեական հետապնդման, իսկ մեղադրողը եւ մյուսները՝ ոչ: Հետեւարար, «Վիճարկվող նորմը, օբյեկտիվ եւ պատճառարանված արդարացման բացակայության պայմաններում, անհավասար դրության մեջ է դնում դատավարության կողմերին՝ մեղադրանքի եւ պաշտպանության, խորականություն սահմանելով նրանց նկատմամբ իրավական վերաբերմունքի մեջ, եւ այդ հիմքով, ի թիվս այլոց, հակասում է ՀՀ Սահմանադրության 14.1, 18 (1-ին եւ 2-րդ մասեր), 19 (1-ին մաս), 20 (1-ին եւ 2-րդ մասեր) հոդվածներին»:

Դիմոդ կողմը փաստարկում է նաեւ, որ վիճարկվող նորմը չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող՝ որոշակիության, հստակության եւ կանխատեսելիության պահանջները: Վիճարկվող նորմի անորոշությունն ու անհստակությունը, ըստ դիմողի, դրսեւրվում է նրանում, որ դրա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նում օգտագործված հասկացությունների անորոշությունը (շեշտվում են «դատավորի կարգադրությանը չենքարկվել», «այլ գործողություններ», «դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանք» բառակապակցությունները) պայմաններ է ստեղծել վիճարկող նորմի կամայական մեկնաբանման եւ կիրառման համար, ինչպես նաև վիճարկող նորմը հնարավորություն չի ընձեռում հստակորեն սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված եւ իրավական այլ հետեւանքներ առաջացնող գործողություններից:

3. Պատասխանող կողմը նշում է, որ վիճարկող նորմում չմատնանշված՝ դատավարության մասնակիցների նկատմամբ պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են ՀՀ դատական օրենսգրքով եւ «Դատախազության մասին» ՀՀ օրենքով: Ըստ պատասխանողի՝ ՀՀ դատական օրենսգրքի համապատասխան նորմերի և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 46 եւ 47-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից չի բխում, որ վիճարկող հոդվածն անհավասար պայմաններ է ստեղծում դատավարության մասնակիցների համար: Դիմողի այն փաստարկների առնչությամբ, որ վիճարկող նորմի առանձին արտահայտություններ առաջացնում են իրավական անորոշություն, պատասխանողը նշում է, որ իրավական որոշակիության սկզբունքը չի նշանակում, որ օրենքները պետք է լինեն բացարձակ կողմնարոշիչ այս կամ այն վարքագիծը դրսեւորելու համար: Եթե որեւէ նորմ ձեւակերպված չէ բացարձակ որոշակիությամբ, դա չի կարող բավարար պայման հանդիսանալ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված իրավական պետության սկզբունքին հակասելու համար:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկող նորմի «...իրավական անորոշությունը հնարավոր չէ օրենքով միանշանակ վերացնել, քանի որ չեն կարող նախատեսվել բոլոր այն իրավիճակները՝ գործողությունները եւ անգործությունները, որոնք կդիտարկվեն՝ որպես «դատարանի նկատմամբ ակնհայտ անհարգաից վերաբերմունք»»:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ վիճարկող նորմը կատարելագործման անհրաժեշտություն ունի:

4. Վիճարկող նորմով օրենսդիրը որպես հանցագործություն է որակել դատարանի նկատմամբ անհարգաից վերաբերմունք՝ դրանում նշված դրսեւորումներով, նկատի ունենալով արդարադատության անկախ, անկողմնակալ (անկաշկանդ) իրականացման սահմանադրափական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պահանջն ու այն օրենքով (այդ թվում՝ քրեափակական) երաշխավորելու կարեւորությունը: Օրենսդիրը նշված արարքը՝ դրա հանրորեն վտանգավորության ուժով, դիտարկելով որպես հակափակական՝ քրեական օրենքով նախատեսվող եւ քրեորեն պատճելի արարք, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում այդ հանցագործության սուբյեկտ է համարել միայն վկային, տուժողին եւ պաշտպանին, իսկ 2-րդ եւ 3-րդ մասերի շրջանակներում՝ ցանկացած անձի, որը դրսեւորվել է դատաքննության մասնակիցներին կամ դատավորին վիրավորելով:

Հաշվի առնելով, որ վիճարկվող նորմի (ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի) դիսպոզիցիայում նախատեսված արարքը կարող է կատարվել ոչ միայն դրանում նշված անձանց, այլ նաև քրեական դատավարության այլ մասնակիցների կողմից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ վերջիններս կատարելով քրեական օրենսգրքով նախատեսված արարք՝ չեն ենթարկվում քրեափակական համարժեք ներգործության:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորմամբ ըստ էության ոչ համաչափ վերաբերմունք է դրսեւորվում դատավարության մասնակիցների նկատմամբ:

Սահմանադրական դատարանն ընդունում է, որ, ինչպես նշվեց, օրենսդրի հայեցողության շրջանակներում է այս կամ այն արարքի քրեականացումը: Այդուամենայնիվ, եթե օրենսդիրն այս կամ այն արարքը՝ դրա հանրորեն վտանգավորության ուժով, նախատեսել է քրեական օրենսգրքում որպես քրեորեն դատապարտելի արարք, ապա այդ արարքը կատարելու արգելվը պեսք է սահմանվի բոլոր այն հնարավոր սուբյեկտների համար, ովքեր գործնականում կարող են կատարել տվյալ հանցագործությունը: Հակառակ դեպքում, միեւնույն օրյեկտի նկատմամբ ուսնական կողմից կողմից կողմից ոչ հիմնավոր տարրերակված վերաբերմունք՝ ի խախտումն օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ հանցագործության սուբյեկտների կազմի չհիմնավորված սահմանափակումը բույլ չի տալիս նաև լուծել ՀՀ քրեական օրենսգրքի, մասնավորապես՝ վերջինիս 2-րդ հոդվածում ամրագրված, խնդիրները: Բացառելով վիճարկվող նորմում նշված արարքը բույլ տված առանձին անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ չի ապահովում այդ արարքով ուսնական արժեքները լիարժեք պաշտպանելու եւ այդ արարքը կանխելու՝ քրեական օրենսգրքով սահմանված խնդիրի լուծումը: Մյուս կողմից՝ խախտվում են դատավարության մասնակիցների, մասնավորապես՝ կողմերի, իրավահակավասարության, դատավարության մրցակցության, հետեւապես՝ նաև Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատաքննության սկզբունքները, քանի որ կողմերի համար դատավարական գործընթացին մասնակցելու հավասար պայմաններ ու հնարավորություններ չեն երաշխավորվում: Դրանից չի բխում, որ վիճարկվող ողույթում նշված սուբյեկտների առնչությամբ դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի դրսեւորումը քրեորեն պատժելի արարք դիտելն իմքնին իրավաչափ ու սահմանադրական չէ: Խնդրահարույցը դատավարության այլ մասնակիցների համարժեք գործողություններն այդպիսին չդիտարկելն է:

5. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում վեճի առարկան դիտարկել նաև հանցագործության հատուկ սուբյեկտի հասկացության, հատուկ սուբյեկտի որոշման հիմքում ընկած չափանիշների տեսանկյունից: ՀՀ քրեական օրենսգրքի ուսումնափրությունը վկայում է, որ հատուկ սուբյեկտի որոշումն արտահայտում է կոնկրետ տեսակի հանցագործությունների առանձնահատկությունները, դրանց հանրուեն վտանգավորության աստիճանը: Այս կամ այն անձին որպես տվյալ հանցագործության հատուկ սուբյեկտ ճանաչելը պայմանավորվում է նրանով, որ իրենց պաշտոնական կամ այլ դրության հիմքով նրանք կարող են կատարել հանցագործություններ, որոնք այլ անձինք կատարել չեն կարող: Այսինքն՝ տվյալ հանցագործության բնույթը եւ այն կատարելու հնարավորությունն են այն չափանիշները, որոնք օբյեկտիվորեն, անկախ օրենսդրի կամքից, կանխորշումն են հատուկ սուբյեկտի շրջանակը: Այս չափանիշները ենթադրում են, որ տվյալ հանցակազմի հատուկ սուբյեկտի շրջանակն անխուսափելիորեն պետք է համրնենի բոլոր այն անձանց շրջանակի հետ, ովքեր իրենց պաշտոնական կամ այլ դրության ուժով ունակ են կատարել տվյալ արարքը: Մասնավորապես, առանձնացվում են հատուկ սուբյեկտի որոշման հետեւյալ հատկանիշները. իրավական կարգավիճակը, ժողովրդագրական հատկանիշը, մասնագիտական պարտականությունները, կատարած աշխատանքի բնույթը, արդարադատության բնագավառում պետության եւ քաղաքացիների միջեւ հարաբերությունները եւ այլն: ՀՀ քրեական օրենսգրքի՝ վիճարկվող նորմը ներառող՝ «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 31-րդ գլխում ներառված մյուս բոլոր հանցակազմերի ուսումնափրությունը վկայում է, որ օրենսդիրն առաջնորդվել է հանցագործության հատուկ սուբյեկտի որոշման վերոհիշյալ օբյեկտիվ չափանիշներով՝ յուրաքանչյուր հանցակազմի դեպքում հատուկ սուբյեկտի կազմում ներառելով բոլոր այն անձանց, ովքեր հատուկ սուբյեկտին բնորոշ լրացույթի հատկանիշների ուժով կարող են կատարել տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքը: Մինչդեռ վիճարկվող նորմում օրենսդիրը, ի տարրերություն արդարադատության դեմ ուղղված մյուս հանցագործությունների, շեղվել է նշված տրամաբանությունից՝ սահմանափակելով հատուկ սուբյեկտի շրջանակը, եւ այդ շրջանակից բացառելով նույն արար-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քը կատարելու ունակ ու միեւնույն գործընթացին մասնակից (դատավարական որոշակի կարգավիճակ ունեցող) այլ անձանց:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը բննարկել նաև ՀՀ քրեական օրենսգրքում եւ Վարչական իրավախսախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարված փոփոխությունների համատեքստում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ ընդգծել, որ մինչեւ վիճարկվող նորմի գործող խմբագրությամբ տեքստում «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-33-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի՝ 2003թ. ապրիլի 18-ի խմբագրությամբ տեքստը սահմանում էր. «Հոդված 343. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը».

1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսեւորվել է դատաքննության մասնակիցներին վիրավորելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որը դրսեւորվել է պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղից աշխատանքներով՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով»:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-33-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով օրենսգրքի 343-րդ հոդվածը շարադրվեց գործող խմբագրությամբ: Հոդվածի նախորդ խմբագրությամբ տեքստի առաջին եւ երկրորդ մասերը վերաշարադրվեցին որպես 2-րդ եւ 3-րդ մասեր, իսկ վիճարկվող նորմն ամրագրվեց որպես հոդվածի 1-ին մաս: Օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ վիճարկվող նորմի եւ հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերի ուսումնասիրությունը վկայում է, որ, ի տարրերություն վիճարկվող նորմի, այդ մասերում ամրագրված հանցակազմերում որեւէ հատուկ սուբյեկտ չի շեշտադրվում՝ ապահովելով բոլոր այն անձանց քրեական պատասխանատվությունը, որոնց կողմից՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը դրսեւորվում է դատավարության մասնակիցներին կամ դատավորին վիրավորելու ձեւով: Փաստորեն տարրերակված մոտեցում է ցուցաբերվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի տարրեր դրսեւորումների առնչությամբ՝ մի դրսեւորման դեպքում սահմանափակելով հատուկ սուբյեկտի շրջանակը, մյուսների դեպքում որեւէ կերպ չսահմանափակելով այն:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական դատարանն այս առնչությամբ հարկ է համարում նաև արձանագրել, որ միջազգային փորձի ուսումնախրությունը վկայում է, որ, որպես կանոն, այն երկրներում, որտեղ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքն առաջացնում է քրեախրավական ներգործություն, քրեորեն դատապարտելի են համարվում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի միայն այն դրսեւորումները, որոնք համադրելի են ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նախատեսված արարքների հատկանիշների հետ: Ինչ վերաբերում է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի այն դրսեւորմանը, որը սահմանված է վիճարկվող նորմի դիսպոզիցիայում, ապա այն, որպես կանոն, միջազգային պրակտիկայում քրեականացված չէ:

Մինչեւ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-33-Ն ՀՀ օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքի քրեականացումը, այդ արարքը, որպես վարչական իրավախախում, նախատեսված էր Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածում: Վերջինիս (02.09.93թ. խմբագրությամբ) դիսպոզիցիան նախատեսում էր. «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որն արտահայտվել է վկայի, տուժողի, հայցվորի, պատասխանողի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու մեջ կամ էլ նախագահողի կարգադրությանը նշված անձանց եւ այլ բաղաքացիների չենթարկվելու կամ դատական նիստի կարգը խախտելու մեջ, հավասարապես նաև որեւէ մեկի կողմից այնպիսի գործողություններ ձեռնարկելը, որոնք վկայում են բացահայտ արհամարհանքը դատարանի կամ էլ դատարանում սահմանված կանոնների նկատմամբ՝ առաջացնում են...»: ՀՀ վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածն ուժը կրոցրել է «Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-32-Ն ՀՀ օրենքով, ինչը պայմանավորված է եղել այն փաստով, որ նույն օրն ընդունված՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. վերոհիշյալ ՀՕ-33-Ն ՀՀ օրենքով նշված արարքը քրեականացվել է: Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածի եւ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթի համեմատական վերլուծությունը վկայում է, որ, ի տարբերություն վիճարկվող նորմի, նույն արարքի համար նախկինում վարչական պատասխանատվություն սահմանած նորմը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի այնպիսի դրսեւորումների դեպքում, ինչպիսիք են դատավորի կարգադրությանը չենթարկվելը, դատական նիստի կարգը խախտելը կամ դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին վկայող այլ գործողություն կատարելը, սուրյեկտների կազմի որեւէ սահմանափակում չեր նախատեսում: Ինչ վերաբերում է

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսեւորմանը՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու ձեւով, ապա այդ արարքի համար վարչական պատասխանատվություն սահմանվում էր **վկայի, տուժողի, հայցվորի, պատասխանողի** համար: Իսկ վիճարկվող նորմով էապես փոխվել է այդ կազմը եւ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու համար պատասխանատվություն սահմանված է **վկայի, տուժողի, պաշտպանի** նկատմամբ:

Վերոհիշյալ համեմատական վերլուծությունը վկայում է, որ խնդրո առարկա վարչական իրավախախումը քրեականացնելու գործընթացում չի ապահովվել համարժեք վերաբերմունք իրավախախուման բոլոր իրավահավասար սուբյեկտների նկատմամբ: Վարչական իրավախախումը քրեականացվել է միայն այդ իրավախախուման սահմանափակ թվով սուբյեկտների նկատմամբ՝ փոփոխելով նրանց կազմը: Ավելին, հաշվի չի առնվել վարչական այդպիսի իրավախախուման կրկնակի (կամ բազմակի, առավել հանրավտանգ եղանակով) կատարումը՝ որպես արարքը քրեորեն պատժելի համարելու օբյեկտիվ անհրաժեշտություն:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար պատասխանատվություն սահմանող նախկին եւ գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է նաև, որ Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածի ուժը կորցնելու եւ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասում վիճարկվող դրույթի ամրագրման արդյունքում վերջինուն նշված սահմանափակ թվով սուբյեկտների շրջանակից դուրս գտնվող սուբյեկտների նկատմամբ տեսական ժամանակ պատասխանատվության որեւէ միջոց ընդհանրապես նախատեսված չի եղել: Այսպես, Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1-րդ հոդվածն ուժը կորցրել է 2006թ. փետրվարի 4-ին, նույն օրն ընդունված քրեական օրենսգրքի հոդվածով՝ նախատեսված արարքի դեպքում կիրառելի է համարվել քրեական պատասխանատվություն միայն վկայի, տուժողի եւ պաշտպանի նկատմամբ: Ակսած 2007թ. մարտի 7-ից, ՀՀ քրեական դատավարության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում (համապատասխանարար՝ 314.1 եւ 115-րդ հոդվածներ) կատարված փոփոխությունների արդյունքում ամրագրվել է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորող անձանց պատասխանատվության ենթարկելու դատարանի լիազորությունը: Իսկ ՀՀ դատական օրենսգիրքը, որի 63-րդ հոդվածով սահմանվեցին դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար դատական սանկցիաները՝ գրեթե բառացիորեն կրկնելով քրեական դատավարության օրենսգրքի դրույթները, ուժի մեջ է մտել 2007թ. մայիսի 18-ին: Բացի դրանից, եթե ՀՀ քրեական դատավարության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխությունների արդյունքում

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հետագայում նախատեսվեց պատասխանատվություն քաղաքացիական եւ քրեական դատավարության շրջանակներում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար, ապա նույն արարքը, որը դրսեւորփում է սահմանադրական դատավարության շրջանակներում, օրենքով պատասխանատվության որեւէ միջոց նախատեսված չէ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստում կարգը խախտելու դեպքում սահմանադրական դատարանն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում նշանակելու տուգանք՝ օրենքով սահմանված կարգով եւ չափով, ինչը, սակայն, որեւէ օրենքով նախատեսված չէ:

Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-33-Ն ՀՀ օրենքի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-32-Ն ՀՀ օրենքի ընդունման գործընթացին: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներից ենթելով օրենսդրական փոփոխության ընթացակարգի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ Ազգային ժողովում նման փոփոխության հիմնավորումն ու փաստացի փոփոխությունը համաշափելի չեն, չկա սուրյեկտների կազմի փոփոխության որեւէ հիմնավորում, չի ապահովվել միեւնույն հոդվածի (343-րդ հոդված) տարբեր մասերի համակարգային առումով փոփոխականացվածությունը: Այդ օրենքների նախագծերի քննարկումների եւ ընդունման անհրաժեշտության հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ օրենքներով կատարված փոփոխությունները հիմնավորվել են քացառապես վարչական կալանքի ինստիտուտի վերացման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 16, 32-րդ հոդվածների պահանջները: Սակայն այդ եւ հետագայում կատարված փոփոխությունների հետեւում է, որ վերոհիշյալ օրենսդրական լրճումները պարունակում են ներքին հակասություններ, քանի որ դրանց ընդունման արդյունքում՝ մի կողմից արարքը քրեականացվել է որոշակի սուրյեկտների նկատմամբ, մյուս կողմից՝ դադարել է, քեկուզ որոշ ժամանակահատվածում, հանրուեն վտանգավոր համարվել այլ սուրյեկտների առնչությամբ: Չի դրսեւորվել նաև համակարգված մոտեցում, մասնավորապես՝ հաշվի առնելու, օրինակ, դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու դեպքում հարկադրանքի կիրառման հնարավորությունը, միեւնույն արարքը կրկնվելու դեպքում այլ սանկցիա կիրառելու անհրաժեշտությունը եւ այլն:

7. Ինչպես նշվեց, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար պատասխանատվության միջոցներ են սահմանված նաև ՀՀ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածում, ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածում: Վերջիններիս համաձայն՝ դատարանն իրավասու է պատասխանատվության ենթարկելու դատավարության մասնակիցներին, զործին մասնակցող անձանց եւ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխսդորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում: Այդպիսիք են՝ նախազգուշացումը, նիստերի դահլիճից հեռացնելը, դատական տուգանքը, դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար՝ զիսավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, իր հերթին, որպես փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր է նախատեսում այդ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի եւ Փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների խախտումը, մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը որպես դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է սահմանում ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը, իր լիազորություններն իրականացնելիս օրենքը կոպիտ կամ պարբերաբար խախտելը, «Դատախազի վարքագծի կանոնագրքի» պահանջների էական խախտումները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված վերոհիշյալ գործողությունները, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող նորմում նշված գործողություններն ըստ էության համարժեք գործողություններ են, դրանք կարող են կատարվել ուղղակի դիտավորությամբ, եւ վիճարկվող նորմում բացակայում է հանցակազմի որեւէ հատկանիշ, որը հնարավորություն կտա դրանով նախատեսված հակաֆրավական արարքը տարանջատել ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված համարժեք իրավախսախումներից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախսախումների եւ վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջեւ էական տարբերությունների բացակայության պայմաններում անձը զրկվում է իր վարքագծի իրավական հետեւանքները կանխատեսելու հնարավորությունից, ինչը չի բխում օրենքի կանխատեսելիության եւ որոշակիության սկզբունքներից:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ավելին, նման պայմաններում իրավակիրառողի կողմից դատական սանկցիաների եւ քրեակրավական ներգործության միջոցի միջեւ ընտրության հարցում կամայական մոտեցման նախադրյալներ են ստեղծվում: Վերլուծությունը վկայում է, որ, մի կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 եւ 153-րդ (բերման ենթարկելը), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ (ինչպես նաև, օրինակ, 44-րդ հոդվածի 5-րդ մաս), ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածների, մյուս կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի առկայությունն իրավական առումով առնվազն խնդրահարույց են դարձնում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ներկայիս ձեւակերպման գոյությունն ընդհանրապես:

Ընդհանրապես տվյալ իիմնախնդրի իրավակարգավորման հարցում չկա հստակ համակարգային մոտեցում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի, ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի, ինչպես նաև տվյալ հարցով վարչական ու սահմանադրական դատավարության իրավակարգավորումների միջեւ:

Անդրադարձալով դիմողի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձեւակերպման անորոշության վերաբերյալ փաստարկին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ՝ անհրաժեշտ է պարզաբանել վիճարկվող նորմում նշված կարգադրության բնույթը՝ քրեադատավարական մյուս նորմերի համադրությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը որպես պաշտպանի դատավարական պարտականություն է նախատեսում ոչ թե պարզապես դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի կարգադրություններին, այլ օրինական կարգադրություններին ենթարկվելով:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը որպես անձին ազատությունից զրկելու հիմք է դիտարկում ոչ թե պարզապես դատարանի կարգադրությանը, այլ դատարանի **օրինական կարգադրությանը** չենթարկվելով կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակը:

Ներպետական եւ միջազգային իրավական վերոհիշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձեւակերպման մեջ «կարգադրություն» եզրույթի ներքո ընկալվում է դատավորի օրինական կարգադրությունը, այսինքն՝ դատավորի այնպիսի կարգադրություն, որն ուղղված է դատավարության մասնակցի կողմից՝ վերջինիս համար օրենքով սահմանված իր պարտականության կատարման ապահովմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառողը պետք է ելնի վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձեւակերպման նշված ընկալումից:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Այսինքն՝ դատավորի կարգադրությանը չենթարկվելու հիմքով վիճարկվող նորմում նշված սուբյեկտները կարող են պատասխանատվության ենթարկվել, եթե չեն կատարում դատավորի այն կարգադրությունը, որն օրինական է եւ ուղղված այդ սուբյեկտների կողմից՝ օրենքով սահմանված իրենց դատավարական պարտականությունները կատարելու ապահովմանը։ Այսուհանդեռձ, «օրինական կարգադրություն» եզրույթն առավել հստակ է եւ խնդիր չի առաջացնում նաև կարգադրության օրինականությունը սահմանված կարգով վիճարկելու հնարավորության առումով։

Անդրադառնալով դիմոնի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «այլ գործողություն կատարելով» ծեւակերպման անորոշությանը՝ սահմանադրական դատարանը կարեւորում է այդ գործողությունների բնույթի պարզաբանման հարցը։ Այդ նպատակով սահմանադրական դատարանը հարկ է համարում խնդրո առարկա ծեւակերպումը դիտարկել վիճարկվող նորմում «վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին» ծեւակերպման համատեքստում։ Նման մոտեցման պարագայում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

1) ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի խնդիրը չէ «այլ գործողություն» հասկացության բովանդակության մեջ ներառվող բոլոր հնարավոր դեպքերի թվարկումը։ Այդ հոդվածի առարկան է քրեական պատասխանատվություն սահմանելը բացառապես այնպիսի գործողությունների համար, որոնք վկայում են դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին,

2) որպես իրավակիրառողի կամայական մոտեցումը բացառող երաշխիք է հանդիսանում այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սահմանազատված են տարբեր բնույթի գործողություններն այն գործողություններից, որոնք պարունակում են բացահայտ արհամարհանք դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ,

3) «դատական նիստի կարգ» հասկացության բովանդակությունը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում։ Վիճարկվող նորմի կիրառման գործընթացում «դատական նիստի կարգ» հասկացության ներքո պետք է ընկալել բացառապես այն կարգը, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում։ Ինչ վերաբերում է «արհամարհանք» հասկացության բովանդակությանը, ապա ինչպես քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում օգտագործված «վիրավորանք» հասկացությունը, այս հասկացությունը եւս յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողի կողմից գնահատման ենթակա հասկացություն է։

8. Գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ դատավարության կողմը փորձել է իր նկատմամբ կիրառման ենթակա՝ ՀՀ քրեական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը բարձրացնել իր քրեական գործի դատական քննության ընթացքում՝ միջնորդելով դատարանին նշված նորմի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ խնդրանքով դիմել սահմանադրական դատարան։ Երեսանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 09.12.2008թ. որոշմամբ մերժել է դիմողի՝ սահմանադրական դատարան դիմելու եւ գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ «**Նշված օրենքը չի հակասում ՀՀ Սահմանադրության դրույթներին**, քանի որ ինչպես դատավորի, այնպես էլ դատախազի կողմից կատարվող ոչ օրինաչափ գործողությունները եւ դրանց խախտման հետեւանքով առաջացող պատասխանատվության հիմքերը կարգավորվում են ՀՀ «Դատական օրենսգրքով» եւ «Դատախազության մասին» ՀՀ օրենքով»։ Միջնորդության մերժումը կամ ընդունումն ընդհանուր իրավասության դատարանի խնդիրն է։ Սակայն ըստ էության օրենքի նորմի սահմանադրականության հարց լուծելը, որոշման մեջ նման եզրահանգում ներկայացնելն անհամատեղելի են ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջների հետ։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**։

1. ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որը անով կիրառելի չէ նաև դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մասի եւ 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից։

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**14 հունվարի 2010 թվականի
ՍԴԱ-851**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ
62 ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՆԸ
ԿՑՎՈՒՄ Է ԴԱՏԱՎՈՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փաստարկը, որ վիճարկվող նորմը չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող՝ որոշակիության, հստակության և կանխատեսելիության պահանջները, որ վիճարկվող նորմի անորոշությունն ու անհստակությունը կարող են պայմաններ ստեղծել վիճարկվող նորմի կամայական մեկնաբանման և կիրառման համար, ինչպես նաև վիճարկվող նորմը հնարավորություն չի ընձեռում հստակորեն սահմանագատել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածով, «Փաստարանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված և իրավական այլ հետեւանքներ առաջացնող գործողություններից, ինձ համար լիովին ընդունելի են: Լիովին համամիտ եմ նաև որոշման մեջ տեղ գտած՝ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներին՝ կապված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի վերոնշյալ հարցադրումների հետ: Գտնում եմ, որ վիճարկվող իրավադրույթի ապաքրեականացման հարցի օրենսդրական լուծումն առաջնային խնդիր է, սակայն համաձայն չեմ Սահմանադրական դատարանի որոշման մեջ տեղ գտած հետևյալ երկու եզրահանգումներին, քանի որ դրանք կարող են նպաստել քրեարդարադատական այնպիսի սկզբունքների ոչ ճիշտ մեկնաբանմանը և կիրառմանը, ինչպիսիք են իրավահավասարությունը և մրցակցությունը:

Որոշման 4-րդ կետում նշվում է՝ «Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ հանցագործության սուբյեկտների կազմի շիմնավորված սահմանափակումը թույլ չի տալիս նաև լուծել ՀՀ քրեական օրենսգրքի, մասնավորապես՝ վերջինիս 2-րդ հոդվածում ամրագրված, խնդիրները: Բացառելով վիճարկվող նորմում նշված արարքը թույլ տված առանձին անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ չի ապահովում այդ արարքով ոտնձգվող արժեքները լիարժեք պաշտպանելու և այդ արարքը կանխելու՝ քրեական օրենսգրքով սահմանված խնդիրի լուծումը: Մյուս կողմից՝ խախտվում են դատավարության մասնակիցների, մասնավորապես՝ կողմերի, իրավահավասարության, դատավարության մրցակցության, հետեւապես՝ նաև Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության սկզբունքները, քանի որ կողմերի համար դատավարական գործընթացին մասնակցելու

հավասար պայմաններ ու հնարավորություններ չեն երաշխավորվում: **Դրանից չի բխում, որ վիճարկվող դրույթում նշված սուրյեկտների առնչությամբ դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի դրսեւորումը քրեորեն պատժելի արարք դիտելն ինքնին իրավաչափ ու սահմանադրական չէ: Խնդրահարույցը դատավարության այլ մասնակիցների համարժեք գործողություններն այդպիսին չդիտարկելն է» (ընդգծումներն իմն են - Վ.Հ.):**

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասում, ի թիվս այլնի, նշվում է, որ անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու վերաբերյալ գործը պետք է քննվի «հավասարության պայմաններում»: Նշված դրույթը հետագա զարգացում է ստացել քրեադատավարական օրենսդրության մեջ, որի արդյունքում անձի քրեադրադատական իրավունքների և ազատությունների երաշխավորման հարցում պետական մարմիններին համահավասար սուրյեկտ է դիտվում նաև փաստաբանության ինստիտուտը: Պետությունը դատաքննության ընթացքում մեղադրանքի կամ պաշտպանության կողմերին, իրավունքների առումով, որևէ առավելություն կամ արտոնություն չի տրամադրում: Ըստ օրենսդրության՝ վերջիններիս միջև տարբերություն գոյություն ունի միայն կապված նրանց կողմից ոչ իրավաչափ վարքագծի համար վրա հասնող պատասխանատվության ձևերի և մերողների հետ:

Ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմերի գործունեության համար ելակետային նշանակություն ունեն քրեական դատավարությունն իրավահավասարության և մրցակցության սկզբունքի հիման վրա իրականացնելու վերաբերյալ օրենսդրական դրույթները, համաձայն որոնց՝ մասնավորապես.

- քրեական հետապնդումը, պաշտպանությունը եւ գործի լուծումը տարանջատված են, դրանք իրականացնում են տարբեր մարմիններ եւ անձինք.

- դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ արտահայտում է միայն իրավունքի շահերը.

- քրեական գործը քննող դատարանը՝ պահպանելով օրյեկտիվությունը եւ անկողմնակալությունը, մեղադրանքի եւ պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի եւ լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ.

- քրեական դատավարությանը մասնակցող կողմերն օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով.

- դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետագրության ընթացքում ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմի համար ապահովվել են հավասար պայմաններ.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԵՔ

- քրեական դատավարության ընթացքում պաշտպանության կողմն իր դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները եւ միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում է ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից եւ անձանցից.

- դատարանը՝ և՝ մեղադրանքի, և՝ պաշտպանության կողմի միջնորդությանք, սույն օրենսգրքով սահմանված կարգով, աջակցում է նրանց ձեռքբերելու անհրաժեշտ նյութերը.

- դատարանում քրեական գործի քննությանը պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

Կարծում եմ, ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը և 19-րդ հոդվածի 1-ին մասը հիմք չեն կարող հանդիսանալ սույն գործի քննության համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը վերաբերում է օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարությանը: ՀՀ Սահմանադրության և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերում ամրագրված այս սկզբունքը ենթադրում է, որ բոլոր մարդիկ, անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, լեզվից, կրոնից և մնացած մյուս հատկանիշներից, իրավահավասար են: Նշված կանխադրույթները վերաբերում են մարդկանց իրավահավասարությանն ընդհանրապես, մինչեւ մեղադրանքի և պաշտպանության կողմերը, ինչպես նաև դատավարության մյուս մասնակիցները հանդես են գալիս ոչ թե անձնապես, այլ որպես դատավարական կոնկրետ գործառույթ իրականացնող սուբյեկտ (մեղադրող, պաշտպան) կամ որպես որոշակի կարգավիճակ ունեցող սուբյեկտ (ամբաստանյալ, վկա, տուժող, թարգմանիչ, փորձագետ և այլն): Դատաքննության ընթացքում իրավահավասար են ոչ թե մեղադրողը և պաշտպանն անձնապես, այլ մեղադրանքի կողմը և պաշտպանության կողմը:

2. Որոշման 4-րդ կետում նշվում է՝ «Դրանից չի բխում, որ վիճարկվող դրույթում նշված սուբյեկտների առնչությամբ դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի դրսեւորումը քրեռեն պատժելի արարք դիտելն ինքնին իրավաչափ ու սահմանադրական չել: Խնդրահարույցը դատավարության այլ մասնակիցների համարժեք գործողություններն այդպիսին չդիտարկելն է»:

Այն, որ վիճարկվող դրույթը կարող է նաև ճանաչվել սահմանադրական, ակնառու է մեջբերման առաջին նախադասությունից, սակայն համաձայն մեջբերման երկրորդ նախադասության հիմնավորման՝ եթե դատավարության այլ մասնակիցների համարժեք գործողությունները նույն-

պես չեն որակվում որպես քրեորեն պատմելի արարք, ապա մյուս մասնակիցների նկատմամբ կիրառումն արդեն կարող է դիտվել հակասահմանադրական:

Կարծում եմ, նման եզրահանգումը Սահմանադրական դատարանի որոշման համատեքստում տրամաբանական չէ: Այս եզրահանգումը իրաշալի կաշխատեր, եթե խոսքը վերաբերեր կողմերի դատավարական իրավունքներին: Դատարանին վիրավորելը դատավարական իրավունք չէ, որը մեկին տրվում է, իսկ մյուսին՝ ոչ: Որ դատարանին պարտավոր են բոլորը չվիրավորել կամ, որ վիրավորելու համար միատեսակ պատախանատվություն պետք է սահմանվի բոլորի համար, անվիճելի է, սակայն կողմերից մեկի համար դրա բացակայությունը չի կարող ինքնարերաբար հիմք հանդիսանալ պնդելու, որ դրանով խախտվում է կողմերի իրավահավասարության, դատավարության մրցակցության, հետեւապես՝ նաև Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության սկզբունքները, քանի որ կողմերի համար դատավարական գործընթացին մասնակցելու հավասար պայմաններ ու հնարավորություններ չեն երաշխավորվում:

Դատարանին չվիրավորելը պարտականություն է, որը պետք է կրեն բոլորը, սակայն դատարանին վիրավորելը և քրեորեն չպատժելը չի կարող որակվել որպես դատաքննության ընթացքում կողմի՝ «դատավարական գործընթացին մասնակցելու հավասար պայմաններ»-ի խախտում կամ «դատավարական գործընթացին մասնակցության լրացուցիչ դատավարական հնարավորություն»:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կողեզրայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 10.05.2010թ.
Դասիչ՝ 77754
Գրաշափը՝ 70x100 1/16
Տպաքանակը՝ 500

ՀՀ ՍԴ դեղեկագիրը ՀՀ
բարձրագույն դրակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է
այժմականությունների արդյունքների
դպագրման համար ընդունելի
պարբերականների ցանկում